Երկնչեր և տրտմեր մարդկօրէն Տէրն ի մահ խաչին գոլով, հանդերձեալ ազդելով մարդկայինն իւր ոգւոյ զիւրսն կատարեալ բնաւորական հաւաստեալ: (59 / 1)

Ոչ թէ միայն բանիւ տնօրինեալ զայնոսիկ, կամ թէ նմանութիւն գործոյ և ոչ գործ ճշմարտութեան ցուցանել, որպէս թէ թուեցաւ ամբարշտել Թրակացոյն Եւտիքեայ և նորուն ծննդոցն: (59 / 6; 59 / 8)

Ընդունի զքաղցնուլն ի մարմինն իւր Տէրն և զծարաւելն, ոչ օտար ինչ յեղանակաւ ձևացուցեալ, այլ մարդկօրէն և ճշմարտութեամբ կատարելով. այս է՝ բնականի կերակրողական մասինն կամեցեալ ընդունել տալ զպատահումն: (59 / 9; 59 / 11)

Բայց սակայն ընդ ձեռն միաւորութեանն որպէս կոչի մարմինն աստուածային, այսպէս և կիրքն մարդկայինք կոչին աստուածայինք, յաղագս որոյ և Աստուածն Բան ասի համբերեալ կրից մարդկայնոց մարմնականաց և հոգեկանաց, ոչ ըստ բնութեան այլ ըստ անճատ միաւորութեանն, և զի անճատ է և զերահրաշ, ապա և ճառելն անկարելի, բայց այնքան, որքան համարձակեցցի որ երևելօքս ձգտել յաներևոյթսն, և զգալի լուսովս զիմանալին քատակել լոյս: (59 / 16; 59 / 17; 59 / 19; 59 / 21; 59 / 21; 59 / 21; 60 / 1)

Զի որպէս վայելեցուցանէր զմարմինն իւր Բանն Աստուած յաստուածային բնաւորականսն, ընդունէր և ինքն ի բնաւորականաց անտի մարմնոյն իւրոյ, զի որ անտեսանելին էր ըստ բնութեան և անշօշափելին, եղև ի միաւորութենէ անտի ականատես մարդկան, և ի ձեռաց մարդկան գտաւ շօշափեալ, և զօրմէ ասէր մարգարէն. «Աստուած յաիտենական ոչ քաղցիցէ և ոչ վաստակեցցի», ընդ ձեռն միաւորութեանն ընկալաւ զքաղցն և զծարաւն և զվաստակելն, և որ անքուն ակամբ պահէր զԻսրայէլ, ըստ բնութեան ննջէր, ընդ ձեռն միաւորութեանն

անչարչարելին և անմահին չարչարելովն և մահկանացուն համբերե
մարմնովն: (60 / 4; 60 / 6; 60 / 8; 60 / 9; 60 / 11; 60 / 12; 60 / 13; 60 / 13; 60 / 15; 6
0 / 16; 60 / 17)

Ըստ սոցին այսոցիկ և իրումն հաղորդ առնելով զմարմինն իւր
բնատրականաց Բանն, տեսանելին կարողութիւն ունելով և աներևոյթ՝
շօշափելին ըստ բնութեան լինէր երբէք, որ և ոչ ոք կարէր արկանել ի նա ձեռս.
ունողն ընդդիմահարական բնութիւն զգեցեալ լինէր և աստուածական
անընդդիմահարութիւն կնքելոյ գերեզմանին ներքուստ արտաքս
ելանելով, և արտաքուստ ի ներքս մտանելով դրօքն փակեցելովք,
զքաղցականն և զծարաւականն ըստ բնութեան իրում հաղորդ առնելով
աստուածային անկարօտութեանն, մահկանացուն կենդանի և կենդանարար,
երկրային և երկնային, և յարգանդէ ելեալն մօր՝ նստեալ ընդ աջմէ մեծութեան ի
բարձունս. և այս
այսպէս: (60 / 18; 60 / 21; 60 / 22; 60 / 24; 61 / 3; 61 / 4; 61 / 7; 61 / 8; 61 / 8; 61 /
10)

Բայց եթէ զիա՞րդ նոյն ինքն ճառելին և ի ճառելն մերում զնա
յանճառութեան և յանսահմանութեան ելանէ սահման, ասասցուք դուզնաքեայ ի
վերայ այսոքիկ, որքան ասել հրամայէ Բանն, յաղագս որոյ բանս, և զի
վերուստ սկսայց՝ առնելով աստուածաբանութեանս
առաջարկութիւն: (61 / 11; 61 / 12; 61 / 15)

Խոստովանելն մեր Հայր անսկիզբն գոլ՝ զի ոչ յումեքէ, և զՈրդի և զՀոգի ոչ
անսկիզբն՝ զի ի Հօրէ է, այսոքիկ ճառելիք մեզ եղեն: (61 / 19; 61 / 19)

Իսկ զիա՞րդ ոչ երիցագոյն Հայր, յորմէ Որդի և Հոգի, և կրսերագոյնք, որ ի
նմանէ, և թէ՛ որպէ՞ս երեք անսկզբունք, որովհետև անժամանակաբար ընդ
սկզբանն Որդի և Հոգի, այսոքիկ ամենեքեան անճառելիք
մեզ և անհետագոտելիք: (61 / 22; 61 / 22; 61 / 23; 62 / 1; 62 / 2)

Դարձեալ՝ ասեմք ծնող գոլ զՀայր Որդոյ, և առաքող Հոգոյ, բայց թէ ընդէ՞ր
մի և նոյն սկիզբն ոչ նմանապէս և նոյն օրինակ երկոցունց գոլոյն
պատճառ, և թէ՛ ընդէ՞ր վասն զի երկոքինն ի միոջէն՝ զմի ոչ ունին
զյատկութեանն զանուն և զկիր, կամ որդիք երկոքին և եղբարք, և կամ թէ
երկոքին հոգիք, անհասանելիք մեզ սոքա և յոյժ
լռելիք: (62 / 4; 62 / 5; 62 / 5; 62 / 6; 62 / 8; 62 / 9; 62 / 9; 62 / 10)

Խոստովանիմք դարձեալ՝ առաքեալ զԲանն Աստուած յԱստուծոյ
Հօրէ և իջեալ յարգանդ սրբոյ Կուսին Մարիամայ՝ լինելով ի նմանէ մարդ
ճմարտապէս և անհեղաբար և թէ զիա՞րդ զհայրականն ոչ թափուր թողլով
զփառաց աթոռ, գտանիւր նոյն ինքն լիապէս և յարգանդի Կուսին, և զայս ոչ
ունիմք ասել և ոչ միով ինչ իրօք: (62 / 13; 62 / 15; 62 / 16; 62 / 18; 62 / 18; 62 / 19)

Միանալ ասեմք դարձեալ բնութեանցն անստացականի և ստացականի
յարգանդի Կուսին անշփոթաբար և անբաժանապէս ոչ զմիաւորութիւնն
շփոթութիւն, և ոչ զանշփոթութիւնն բաժանումն ինչ իշխեմք ասել կամ
խորհել: (62 / 21; 62 / 22; 62 / 23)

Առ այսոքիկ խոստովանիմք զՌդի ծնեալ մարմնով ի Կուսէն, զկուսութիւնն
ոչ լուծանել զծնողին, և համայն ոչ վասն կուսութեան ծնողին ճշմարիտն նորա
ուրանալ կարիցեմք զծնունդ, և ոչ յաղագս ծննդեանն ճշմարտութեան
կուսութեանն լուծումն իշխիցեմ ասել ծնողին: (63 / 3; 63 / 5)

Ասացաւ դարձեալ ի գիրս իւղով և մեղուի սնուցողացն սնանիլ ձեռաց
զՓրկիչն, և ի ստեանց մօրն լինել կաթնաբոյժ, այլ և ճաշակելով ուրեք երբեք ընդ
աշակերտսն իւր, իսկ ոչ գրեալսն և զոչն յումեքէ ճառեալսն, որք զկնի սոցա
պատահեն, և ոչ ճառել մեզ իրաւացի է: (63 / 8; 63 / 10; 63 / 11; 63 / 12; 63 / 14)

Նոյնպէս և զարգանալն ի հասակ մարմնոյ ասացին զնմանէ գիրք, իսկ
գտրին հակառակն ոչ իշխեմք ի ներքս ածել զնուագութիւնն, զոր օրինակ, և ոչ
առ եղելութեամբն զապականութիւնն, զի ոչ գրեցան: (63 / 15; 63 / 18)

Պատմեցին աւետարանագիրքն
զնմանէ և քաղցնուլն և ծարաւելն և ննջել և արտասուել և աշխատել և տրտմել և
զայրանալ և երկնչել և անգիտանալ, յաղագս որոյ ճառելիք մեզ և հաւատալիք
առ ի նոցանէ
պատմեալքն: (63 / 20; 63 / 21; 63 / 21; 63 / 21; 63 / 22; 63 / 22; 63 / 22; 63 / 23; 63
/ 23; 63 / 24)

Իսկ զիա՞րդ կամ որպէ՞ս ի կրելն զմարդկայինսն և մարդկաբար նոյն
ինքն և գեր ի վերոյ մնայ աստուածաբար կրիցն, այլ և զառ ի կրիցն զօրացուցիչ
զվտանգեալսն, լուռ լինել, զոչ կարելիսն չճառել իրաւացի է, քան թէ
ճառել: (64 / 2; 64 / 3; 64 / 4)

Չարչարեցալ ճշմարտութեամբ Փրկիչն և մեռաւ, գրեալ է, բայց թէ որպէ՞ս
չարչարեալն և մեռեալն զմերն իստիանեաց իւրովն
զչարչարանսն և զմահ, և կամ թէ զիա՞րդ նոյն

ինքն և՝ չարչարեալ և՝ անչարչարելի մնացեալ և անմահ մնալովն մեռեալ, անճառելիք մեզ այսոքիկ և անասելիք, համայն որպէս ճառելովն պատուել կարծիցեմք զՓրկիչն, ևս առաւել յանճառելիսն լուռ լինելով բարեպաշտել համարեացուք: (64 / 8; 64 / 9; 64 / 10; 64 / 10; 64 / 11; 64 / 11; 64 / 12; 64 / 13)

Էջ ի դժոխս և եղաւ ի գերեզմանի, և զի պարծեր բանսարկուն դժոխաց ի ներքոյ արկանել և ապականութեամբ զմերս ծախել զբնութիւն, էջ ի նոսա Տէրն, զի զբոնաւորին շիջուցե՛ զպարծանս, և յարգելարանացն վերածեսցէ զարգելեալսն: (64 / 17; 64 / 17; 64 / 19; 64 / 21)

Էջ առ նոսա՝ ոչ մերկ աստուածութեամբն, զի մի իշխանութեան գործ համարեսցի յաղթութիւնն, այլ հանդերձ երկակօքն՝ հոգով և մարմնով, զի ցուցցէ բանսարկութիւն անպարտելիս և անըմբռնելիս նոցա ի Ստեղծողէն ստեղծուածն և զօրութեամբ տիրել կարացեալ: (64 / 25; 65 / 2; 65 / 3)

Այլ ի ստունկանելոյ անտի ձգտել յինքն զիշխանութիւն, յինքն կարծելոյ իշխանին, և ի ձեռն յանցանացն ընկղմել ի դժոխս պատկերին և յապականութիւն: (65 / 6; 65 / 7)

Իսկ նախատպին զգեցեալ և անարատ ըստ առաջնոյն ցուցեալ ոչ թէ միայն յաղթել արար այնմիկ, որ յաղթելն համարէր, այլ և էլոյծ զօրութիւն մահու, զդժոխոց և զապականութիւն մահու: (65 / 8; 65 / 10; 65 / 11)

Իսկ թերևս հարցանել ումէք կամք իցեն, թէ ընդէ՞ր ոչ զի զմահն էլոյծ Տէրն, որպէս և զդժոխս և զապականութիւն մահուն հաղորդ լինելով եբարձ ի մենջ, իսկ զդժոխս և զապականութիւն միայն եբարձ և իւրամատեաց, ոչ ևս յանձն առեալ ընդ նոքօք լինել: (65 / 14; 65 / 14; 65 / 16; 65 / 17)

Ասել պատրաստ եմ զօրացեալ յԱստուծոյ. բայց նախկին տեսցուք զայս, զի ամենայնքն, որք միանգամ տնօրինեալք եղեն ի Տեառնէ ի մարդիկ, յերկուս բաժանին, ի կրական և ի ներգործական. կրականք են զորս յանձն իւր ընկալալ տարաւ Փրկիչն զհոգեկան և զմարմնական կարիսն, որք մարդկայնոյս են բնութեան պատահմունք, որով մարդասիրաբար կարեկցեալ մեզ Տէրն, և ընդ ձեռն նոցուն և զմարդեղութեան իւրոյ հաստատեր զճշմարտութիւն, այլ և վարդապետէր նոյնգունակ մեզ առ ի յօգուս միմեանց նոքիմք բարեձևանալ կրիւք: (65 / 23; 66 / 1; 66 / 4; 66 / 4; 66 / 6)

Իսկ ներգործականք են, որ յայլմէ առ այլս ի զօրութենէ նոցունց անցանէ օգտութիւն, որպէս կոյրքն գործով ի հրամանէ Տեառն ընկալան գտեսանելն, և այլքն մի ըստ միոջէ: (66 / 19)

Արդ՝ զայսուսիկ, զոր ասացիս, յառաջ քան կամաւորաբարն իւր մեռանել, կատարեաց ի մարդիկ Տէրն, իսկ զապականութեանն բարձումն և լուծանելն զդժիս, զկնի մահուն ի բնութենէս խափանեաց ի գերեզման իջանելով՝ զապականութեանն քակեաց զբնութիւն, և այս յուսով և յապառնիս ունի զեղոցեալն, և երթալովն ի դժոխս՝ զդժոխոցն ամբութիւնս քակեաց: (66 / 23; 67 / 2; 67 / 2; 67 / 3)

Բայց թէ է՞ր աղագաւ վասն նորա ասացաւ չթողանիլ ոգի նորա ի դժոխս և ոչ մարմնոյ նորա տեսանել զապականութիւն, այլ զի հպեցաւ ի նոսա, ոչ եթէ սակս ընդ նոքօք զիւրն արկանելով մարմին և անձն, քա՛ւ լիցի, այլ առ ի թափել և ազատել ի նոցանէ զծնունդս առաջնոյ Ադամայ: (67 / 6; 67 / 9; 67 / 10)

Եւ այսպէս գտանին երկոքեան ճշմարտեալք ի վերայ Փրկչին մերոյ ասացեալքն. մերձեցաւ ի տեղիսն ի ձեռն ծածկութիւն՝ և ազատեաց ի ձեռն ամենակարող ինքեան զօրութեանն, և ոչ միայն այս, այլ զի և յայլսն մի ըստ միոջէ ի տնօրինականսն զմանս աստուածապէս և զմանս մարդապէս կատարելով: (67 / 14; 67 / 16; 67 / 16; 67 / 18)

Յղացեալ եղև յարգանդի կնոջ ինն ամսեայ ըստ օրինի մարդկան իսկ ի Կուսէ և թարց մերձաւորութեան առն, ոչ մարդկօրէն, այլ ըստ աստուածային զօրութեանն: (67 / 20)

Ծնաւ ի կնոջէ ըստ կարգի ծնիցելոցն ի մարդկանէ. իսկ զկնի ծննդեանն կոյս պահել զծնողն, և կաթնաբուխ ունել ստինս, ոչ ևս ըստ մարդկան, այլ աստուածային այս հրաշափառութեան գործ, զեղելութիւն և զաճումն հասակի յանձն առնելով անօրինաբար, իսկ զնուագութիւնն և զապականութիւնն ոչ ընկալաւ աստուածավայելչաբար, մեռաւ զմարդկայինն, և ըստ մարդկային, և զմահ մեռոյց ըստ ինքեան անմահական զօրութեանն: (68 / 3; 68 / 5; 68 / 7; 68 / 9; 68 / 9)

Բայց ինդիր էր այս, թէ յաղագս որո՞յ պատճառի զմահն, որ ապականութեան առաջի դնէր մեզ, յանձն առնելով անցոյցն զնա ի մէնջ Տէրն, իսկ ապականութեանն և դժոխոցն՝ միայն երթալովն ի տեղիսն հրաման տուեալ բառնալ: (68 / 14)

Նախ առաջին՝ զի ոչ էր ապականութիւնն և դժոխք մասն մարդկայնոյս բնութեան, զորս և ոչ ընդունել առ ինքն իրաւացոյց, մարդ եղեալ վասն մեր Աստուածն Բան: (68 / 17; 68 / 18)

Այլ և ոչ մահն ըստ բնութեան տնկեալ ասեմք ի մեզ Ստեղծին. թեպէտ և ի սահման մարդոյն զսա շարաբերեալ կամք եղեն արտաքնոցն մակացականացն, այլ պատուհաս ընդ յանցանացն, որ իրաւապէս դատէր զմարդն ի վերայ ընդից բնութեանս: (68 / 20; 68 / 22)

Արդ՝ թեպէտ ամենեքեան սոքա, որպէս ամենեցուն քաջայայտ է, ի մեղացն յառաջ եկեալ երևեցան, սակայն անուն մահուն և նախ քան զմեղսն յԱրարչէն յիշեցեալ եղև. վասն է՞ր արդեալք, զի երկիրն սորա իբրև ամրագունիւ պարսպաւ օրինադրեալն մարդ պահպանեցի, որպէս զի զարհուրեալ ի սպառնալեաց մահուն՝ անպարտելի ի դժբանաց թշնամոյն եղիցի, և այսպէս ահարկուս այս անուն եղիցի նմա պատճառ զանմահականն գտանել կեանս: (69 / 6; 69 / 12)

Եւ անդ խուսափելն ի մահուանէ տայր զյաղթեանն նպատակ, իսկ աստ զառ ի մահն ունելով բաղձանս. զի անդ մեղքն զմահ ծնանին և ի մահուանէն լինէր կենացն լուծումն, իսկ աստ ի մահուանէ անտի մեռանին մեղքն և կենացն անլուծից սկիզբն եղանի, այլ և հանդերձ գերազանցութեամբ, վասն զի անդ էգիտ հողածինն զմահ, իսկ աստ երկրորդն մարդ ճաշակեաց զնա Տէրն յերկնից եկեալ: (70 / 5; 70 / 7; 70 / 8)

Արդ՝ այսքան և այսպիսի իրօք յառաջնումն և յերկրորդումս սա զօգնականութիւնս մատուցանէ մերում բնութեան, իսկ ապականութեան և դժոխոցն վայր ոչ մի յայնպիսեացն մեզ ոչ եղեալ սպասաւոր, այլ և հակառակ բնութեանս ընդդէմ շարժեցեալ: (70 / 12; 70 / 13; 70 / 15; 70 / 16)

Վասն որոյ զմահն, զոր հնարեցաւ ճարտարապետն բնութեանս կենաց մերոց կազմել դեղ, էարբ անգուստ և ինքն: (70 / 20)

Եւ այս է ասացեալն՝ թէ վասն մեր մեղս արար, այսինքն վասն զմերոց յանցանացն պարտիս իւրովն հատոյց անմեղութեամբն առ Հայր, և զի վասն մեր և ոչ անձին առ յանձն զկամաւորն մահ: (71 / 1; 71 / 1)

Ասացաւ զնմանէ, թէ մեղս ոչ արար, և զի յաղագս զմեզ փրկելոյ և ոչ զինքն ընդ նոքօք արկանելոյ սակս էջ ի տեղի դժոխոց և ապականութեան, ասացաւ զնմանէ թէ՛ ոչ ոգի նորա թողաւ ի դժոխս, և ոչ մարմին նորա ետես զապականութիւն: (71 / 3; 71 / 4; 71 / 5; 71 / 7)

Ասացուք դոյզն ինչ և առ այնոսիկ, որ տարակուսին և ասեն, թէ մինչ կատարեալ ասեմք ի Քրիստոս ըստ ամենայնի զմարդկայինն, որպէս և զաստուածայինն, զիա՞րդ և ոչ երկու գոյացութիւնք ասին ի Քրիստոս,

առանձին և գատաբար գոյացութիւն մարդկային զկնի անճառ միաւորութեան: (71 / 11; 71 / 12; 71 / 14; 71 / 15; 71 / 16)

Ո՛վ դուք, գոր օրինակ մարդկայինս մեր հոգի միաւորեալ ի մարմնի, ոչ փոխէ զնա յանմարմնութիւն, այլ և ոչ ինքն ի մարմնի փոխեցի, և համայն ոչ ասին երկու գոյացութիւնք, այլ մի գոյացութիւն և մի մարդ, այսպէս իմացիս և ի վերայ Քրիստոսի: (71 / 20; 71 / 21; 71 / 22; 71 / 23)

Ձի պահելով Աստուածն Բան զմարդկայինն կատարելապէս, մնաց և ինքն նոյնպէս՝ որպէս և էրն, այլ միացուցանելով առ ինքն անճառապէս զմարմնոյն իւրոյ գոյացութիւնք և ոչ անձնաւորութիւնք երկու: (72 / 1; 72 / 2; 72 / 3)

Ոչ եթէ նուազեալ ինչ՝ կամ ծախեալ յաստուածայնոյն մարդկային իբր դոյզն ոք գոլորշիք երկրի յարեգական ճառագայթից, այլ վեհագունին յաղթելով և ծածկելով յինքեան զնուաստագոյնն: (72 / 8)

Եւ զի հրաշափառագոյնս ասացից, ոչ փոխէ զերկաթն հուրն, և ոչ փոխէ առանց յերկուանալոյ, զի որ թուխն էր և ցուրտ յառաջագոյն, լինի այնուհետև ի հրոյն յազդմանէ ջերմ և լուսատեսիլ, ըստ նմին օրինակի թէպէտ և կատարեալ ասեմք զՏէրն մեր ըստ ամենայնի, այսինքն աստուածութեամբն և մարդկութեամբն, համայն յանասելի և ի գերահրաշ միաւորութենէն մի ասի կատարեալ և մի անձն Տէր մեր Յիսուս Քրիստոս: (72 / 14; 72 / 15; 72 / 17; 72 / 18; 72 / 20; 72 / 21; 72 / 22)

Ձի Բանն Աստուած առաջնորդէր իւրոյ մարդկային մարմնոյ մտաց, և առ իւր աստուածային կամացն լրումն յարմարէր զմարդկային կամացն յարձակումն: (72 / 24)

Եւ յայսմիկ ինքն վկայէ Տէրն. «զանձն իմ, ասէ, ոչ ոք կարէ բառնալ յինէն, այլ ես կամօք իմովք դնեմ զնա, իշխանութիւն ունիմ դնել զնա և իշխանութիւն ունիմ միւս անգամ առնուլ զնա»: (73 / 4)

Եւ որպէս ունէր իշխանութիւն իւրն մարդկային հոգւոյ առ ի դնել զնա և առնուլ միւս անգամ, այսպէս և բնաւիցն անձնականացն մասանց իշխանութիւն ունէր խոնարհել տալ յանցնիւրսն բնաւորականսն կիրս: (73 / 7; 73 / 8)

Իշխանութիւն ունէր դարձեալ միւսանգամ մոռանալ տալ զայնոսիկ, այս է՝ զցատումն և զտրտումութիւն և զերկիւղ: (73 / 12; 73 / 13)

Սովին օրինակաւ Լընդ մասանցն իւրոյն մարմնոյն միացեալ Աստուածն Բան ընդ ձեռն բանականի շնչոյն, յորժամ Լուրանօր Լորքան կամեր, ազդեր անցնիւրոյն սգալ կարեացն, քաղցոյն Լծարաւին, ննջելոյն Լաշխատութեանն Լչարչարանացն, Լյորժամ ոչ լիներ, կամ արգելոյր զայնոսիկ յիւրմէ մարմնոյն, բայց լիներ այս ըստ հինգ յեղանակաւ, Լ կամ թէ ըստ յոլովս խոնարհել մարդասիրաբար Փրկչին ի մարդկայինս մարմին կամ առ ի յախտակցեալ կամ առ վարդապետել կամ առ շահել կամ առ ի ճշմարտել կամ ընդդիմամարտաբար. Լսոցա իւրաքանչիւր ոք յայտնի Լբացորոշաբար բերել Լ՛զդեմ Լ՛զիրն Լ՛զտեղին Լ՛զպատճառն Լ՛զյեղանակ Լ՛զժամանակ, Լոր պէս չեր հնար Փրկչական մարմնոյն Բանին Աստուծոյ ազդեցողութեան յիշել զիւրսն, զի Լոչ թափուր երբէք ի նմանէ, ըստ սմին այսմիկ Լոչ գոլ կարէ կամ ասիլ գոյացութիւն առանձնապէս կամ կատարելութիւն յատկական կամ որոշակի ունել միտս առաջնորդականս Լ կամ բաժանաբար բերել անձնիշխանական կամս, քանզի առ ինքն ամենեքումք այսոքիւք զմարդկայինն խառնեաց Լմիացոյց Աստուածն Բան: (73 / 14; 73 / 16; 73 / 16; 73 / 18; 73 / 18; 73 / 19; 73 / 19; 73 / 22; 74 / 2; 74 / 3; 74 / 4; 74 / 4; 74 / 4; 74 / 4; 74 / 5; 74 / 5; 74 / 6; 74 / 8; 74 / 9; 74 / 12; 74 / 15)

Յաղագս որոյ Լի Բանն Աստուած ամենայնքն վերաբերին Լ՛աստուածայինքն Լ՛մարդկայինքն, Լնորա են՝ եթէ կիրքն մարդկայինք, Լ եթէ աստուածային սքանչելիք. զի Բանն Աստուած ծնաւ ի մարմնոյ ի Կուսէն, սակս որոյ ԼԱստուածածին սուրբ Կոյսն Լծնեալն ի նմանէ Աստուած ճշմարիտ: (74 / 16; 74 / 17; 74 / 17; 74 / 18; 74 / 19; 74 / 21; 74 / 22)

Բանն Աստուած խաչեալ Լմեռեալ մարմնով վասն մեր, յաղագս որոյ մահուամբ Որդոյն Աստուծոյ եղաք փրկեալք Լազատեալք: (74 / 23; 75 / 1)

Բանն Աստուած եղեալ ի գերեզմանի ի ձեռն մարմնոյն, Լի դժոխս իջեալ ի ձեռն իւրոյ մարդկային հոգւոյն, յաղագս որոյ Լլուծեալ յաղթութիւն մահու Լդժոխոց խայթոցն փշրեալ: (75 / 3; 75 / 5; 75 / 5)

Բանն Աստուած առաքեալ ի Հօրէ անմարմնաբար Լվերացեալ առ Հայր հանդերձ մարմնովն, յաղագս որոյ՝ նոյնպէս որպէս էրն, կացեալ, մնացեալ Երրորդութիւն նովին միով բնութեամբ Աստուածութեան: (75 / 8)

Եւ այսպէս ասի միննոյն Տէր մեր Յիսուս Քրիստոս Աստուած, միանգամայն Լմարդ: (75 / 13)

Նմա միայնոյ կրկնի ծունր երկնաւորաց և երկրաւորաց, և ամենայն լեզու խոստովան լիցի, թէ Տէր Յիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ
Հօր: (75 / 15; 75 / 15)

Զի Յիսուս Քրիստոս երէկ և այսօր, նոյն և յաւիտեանս ամէն: (75 / 18; 75 / 18)

Յաղագս թէ պա՞րտ է զմարմինն Տէրունական համագոյ ասել Աստուածն
Բանի, կամ թէ մարմնոյն և բան և մի բնութիւն ասե՞լ, եթէ ոչ. (76 / 4; 76 / 4)

Եթէ Բանին Աստուծոյ համագոյ ասի փրկչականն, ապա գտանի եղեալ
Հօր և Հոգւոյն համագոյ՝ այլ և նորին բնութեամբ. զի համագոյնքն
պարտին և հոմաբուն իրերաց գոլ: (76 / 7; 76 / 8; 76 / 9)

Զի համագոյն և հոմաբունն, այլ առ այլ ասացեալ լինի, որ է ոմն առ ոմն,
յորմէ նշանակեալ լինի և յատկութիւն
առանձնաւորութեանցն և հասարակութիւն բնութեան: (76 / 10; 76 / 12; 76 / 13)

Եւ զի անտեղի և աննման զայս այսպէս իմանալ ի վերայ առաջնոյ
պատճառին, ապա և զասելն օտար և ամբարիշտ
համարիմ: (76 / 16; 76 / 18; 76 / 18)

Այլ ասեն, զի ա՞րդ գտանի ասացեալ փրկչականն
աստուածային և երկնային, անմահաբար և կենսագործական և որ ինչ սոյնպէս
անուանք, որ յարարչականումն սահմանին առեալ լինին
բնութեան: (77 / 2; 77 / 3; 77 / 3)

Իսկ գոյակից և բնակից և անեղ և անսկիզբն ամենայն իրօք զբնութիւն
բացայայտեն: (77 / 11; 77 / 11; 77 / 11)

Եւ է որ ծնեալն ի ծնողէն ասի եղեալ, որ զհասարակականն և զյատկականն
միանգամ յինքեան բերէ. և է որ ի նիւթէ իմեքէ անօթ ինչ յօրինեալ եղեալ ասի, որ
նիւթոյն բնական է, և զանուն և զձն այլ ընկալաւ և զներգործութիւն, և է որ
յուրուք խառնութենէ յայլ փոխայեղիցի և անուամբն և որակութեամբն, որպէս
ինչ հնարեցան ի ձեռն մակարդից ոմանց ստեղծանել ի կաթանէ զպանիր կամ
զեղ. և է որ ընդ ձեռին իրերաց զանցնիւրսն լուծանէր, որպէս ի վերայ խոնաւից է
տեսանել, որք են առ իրեարս և ոչ են սեռաբար յերկաքանչիւրսն, և է որ
երկակաց ոմանց էակաց ի միասին գոլով, յաղթեսցէ վեհագոյնն
վատթարագունին՝ հաղորդ եղեալ
զօրութեանն: (77 / 21; 77 / 22; 78 / 1; 78 / 1; 78 / 2; 78 / 2; 78 / 3; 78 / 4; 78 / 6; 78
/ 9; 78 / 10)

Չօր օրինակ հուր մերձենալով յերկաթ՝ փոխէ գորակութիւնսն և ոչ փոխէ զեութիւնն, զիրոյն ի նմա տրամադրելով զեութեանն պատահմունս, կամ սպիտակութիւն գեղման ներկեալ գունով ծիրանոյ և անուանել ծիրանի, և համայն գորոյն զիր ոչ կորուսանէ: (78 / 14; 78 / 17; 78 / 18)

Համայն և ոչ զմի ոք յայսցանէ յանդգնիմ օրինակել առ որս քանս: (78 / 23)

Այլ և ոչ ըստ երկրորդի նշանակութեանն, զոր ծննդոյն շնորհէն ծնողքն՝ ասի եղելութիւն, զի ոչ յաստուածայնոյն հայթայթէ բնութենէն Բանն իւր մարմին, այլ ի մարդկանէ, և ոչ ինքն առ ի Մարիամայ առեալ սկիզբն, այլ յԱստուծոյ Հօրէ ծնեալ անժամանակաբար: (79 / 5; 79 / 9)

Դարձեալ և ոչ ըստ երրորդին ասի եղելութիւն, զի ոչ Որդին Աստուծոյ այլ ինչ ի մարմնանալն գտաւ ընկալեալ, քան թէ գոլով նոյն ինքն Որդի Աստուծոյ, այլ և ոչ զմարմնոյն իւրոյ զեութիւն կամ զանուն փոխեաց, այլ զնոյն զմարդկայինն արար արժանի լինել ինքէն մարմին: (79 / 12; 79 / 15)

Այլ և ոչ ըստ չորրորդին բաժանակութեան եղելութեանս օրինակն, զի ոչ հոգեկանն իւր և մարմնականն ծնունդ ընդ ձեռն միջնորդի իրիք երթեալ ծանուցաւ, այլ ի Հօրէ առանց միջնորդի և անժամանակաբար ըստ էութեան նորա, և ի մօրէ անմիջնորդաբար տնտեսութեանն յետ ժամանակի ծնունդ: (79 / 19; 79 / 21; 79 / 23; 80 / 1)

Եւ ոչ հինգերորդ նշանակութիւնն զեղելութիւնս օրինակեալ տպաւորէ, զի անշփօթաբար մարմնացաւ և առանց այլայլելոյ: (80 / 6)

Ի սոցանէ ամենեցունց նշանակեցելոցս ի վերջինս, և որպէս և յայլոց ոմանց իմաստասիրացաւ, որ զփրկչական տնտեսութեանն օրինակէ խորհրդոյն յեղանակ, զի որպէս տեսանեմք զերկաթ առ հուր մերձեցեալ զբոլորն յինքն ընդունի զհրոյն պատահմունս՝ իւրոյն արտաքոյ լինելով որակութեանց, և համայն ոչ հրոյն յերկաթոյն յեղափոխել եղև զոյացութիւնն և ոչ երկաթն ի հրոյն, այսպէս և զԱստուածն Բան ի մարդեղութիւնն իմանալ պատշաճ է, որպէս և յումեմնէ իմաստասիրել եղև ի հարանցն: (80 / 8; 80 / 8; 80 / 13; 80 / 15; 80 / 16; 80 / 17)

Կացեալ, ասէին, մինն որ էնն և միացեալ անքակաբար և առանց շփոթութեան և ի վեր քան զեղելոցս մտածութիւն: (80 / 19; 80 / 20; 80 / 20)

Եւ այլ ոմն, թէ միութիւն խոստովանիմ և ոչ քայքայումն իմն և լուծումն այնր բնութեան յայս, և կամ այսր յայն: (80 / 22; 80 / 23; 80 / 24)

Դարձեալ յիշեն ընդդիմադրութեան աղագաւ զառաքելոյ բանն, «յորոց և Քրիստոս ըստ մարմնոյ, որ է ի վերայ ամենեցուն Աստուած օրհնեալ», ասելով, «և ոչ միով իւրիք որոշեալ գտանիմ ի սահմանականն բնութեանն բանէ՝ Աստուածն ասելով, սակս որոյ ըստ այսմիկ ապա և ոչ մեղանչեացուք և համագոյասել զփրկչական մարմինն Բանումն Աստուծոյ»: (81 / 2; 81 / 4; 81 / 7; 81 / 7)

Առ որս ասեմք, եթէ ամենեքին այսպիսաբար ասացեալք ի սրբոցն զՔրիստոսէ, ոչ առ մարմին տանի զասացելոյն ակնարկութիւն, այլ առ Բանն Աստուած, որ մարմնացաւ վասն մերոյ փրկութեան, զի և ոչ իսկ հետևի զմարմին ըստ մարմնոյ ասել ի Հրէիցն: (81 / 13)

Դարձեալ տարակուսեն՝ ասելով, «Քրիստոս ասացեալ եղև ի Պօղոսէ և ոչ Բան, և Քրիստոս ի վերայ երևելոյն ասի և ոչ ի վերայ աներևելոյն»: (81 / 16; 81 / 17; 81 / 17)

Առ որս ասեմք, եթէ այսպէս բարժանաբար զՔրիստոս անուանելոք, երկուս տայ ասել Քրիստոսս և Աստուածս երկուս, յորմէ և այսպէս երկու որդիք: (81 / 21; 81 / 22)

Եւ այսպէս հետևի լինել յանյաւելուած Երրորդութիւնն՝ չորրորդութիւն եկեալ յարեցի, և համագոյ ասել աստուածութեանն զտէրունական մարմինն: (82 / 1)

Եւ մանաւանդ զի այսպիսին ի պարզամտածաբար խոստովանութեան, մեծապէս իմն ընդարձակեն զօձտող ճշմարտութեան զբերանս, յերկնից և կամ յաստուածութենէն բերել ասել տալ զմարմինն և կամ հեղմամբ և փոխմամբ իմանալ զմիաւորութեանն յեղանակ և կամ ըստ մարմնոյն և կամ զԲանն ի ստացական իջուցանել բնութիւն: (82 / 6; 82 / 7; 82 / 8; 82 / 9; 82 / 10)

Դարձեալ ընդդիմագրեն այսպէս, «թէ մինչ հոմագոյ և հոմաբուն ոչ ասի տէրունական մարմինն, և ոչ աստուածութեանն և ոչ դարձեալ իսկս բնութեան և անեղութեան Բանին գտանի եղեալ հաղորդ, զիա՞րդ յարմարեցի խոստովանել մի բնութիւն Բանին մարմնացելոյ»: (82 / 13; 82 / 14; 82 / 15; 82 / 15)

Առ որս ասեմք, թէ ասէի Բանին և մարմնոյն մի բնութիւն, ասացեալ լինէի և ընդ ձեռն այսորիկ և համագոյս իրերաց զԲանն Աստուած և զմարմինն իւր, որպիսի ինչ օրինակաւ ասացի սուրբ Երրորդութիւնն համագոյք իրերաց հանդերձ երիւք յատկութեամբք: (82 / 19; 82 / 21; 82 / 21; 82 / 22)

Այլ զի սահմանեմք Բանին մարմնացելոյ մի գոլ բնութիւն, արտաքոյ ամենայն իրօք դնէ համագոյականին զմերն բան և ըստ միաւորութեանն ուսուցանէ զմին ասել բնութիւն: (83 / 4)

Դարձեալ տարակուսին, թէ «ապա ուրեմն ո՞չ ապաքէն նովին միաւորութեամբ բանիւ, որպէս զմին ուսաք խոստովանել բնութիւն Բանին մարմնացելոյ, խոստովանեցուք լինել և համագոյ Բանին զմարմին իւր»: (83 / 10)

Առ որս ասեմք, թէ միաւորութեանս բան ի հոմանուանց անտի է և եղելութեանն տան, յաղագս որոյ զանց առնելով զայլովք նշանակութեամբք, զվերջինն զնորայն իրաւացի է և սմա յարադրել նշանակութիւն, զի մնալով անձախաբար յորոց, որք են ըստ նախասացելոյ բանին, յաղթեցէ ամենայն իրօք զօրաւորագոյնն տկարագունին: (83 / 13; 83 / 16)

Եւ յաղագս այսորիկ ոչ ասին միանգամայն ի միասին երկու բնութիւնք տիւն, այսինքն արեգականն կամ աստեղք կամ օր և գիշեր կամ լոյս և խաւար, այլ որք միանգամ հետևին անուանք արեգականն, նոքումք անուանեցի տիւն. այսպէս իմասցիս և զմիաւորութեանն բան Աստուածն Բանի մարմնացելոյ, զի թէպէտ և իցեն անբառնալիք ի մարմնի կացեալ, մնացեալ մարդկայինքն, այսինքն բնութիւն և կերպարան և դէմ և սա առ այսոքիւք և բան և միտք և իմաստութիւն և զօրութիւն և կենդանութիւն և որ ինչ սոյնպիսիք, համայն ոչ ասին սոքա առանձնաբար ի վերայ մարմնոյն, այլ յատուկն Աստուածն Բանէ կոչմանց անուանեցին ամենեքին ասացեալքս, զի յաղթեցէ ամեննին ամենայն իրօք վեհագոյնն նուաստագունին: (84 / 1; 84 / 1; 84 / 4; 84 / 5; 84 / 7; 84 / 8; 84 / 8; 84 / 8; 84 / 8; 84 / 9; 84 / 9; 84 / 9; 84 / 10)

Եւ յաղագս այսորիկ թէն անմեկնելիք մշտնջենաբար ընդ Աստուածն Բանում միացեալք մարդկայինքն, համայն անյեղիւք և անայլայլելիք ի յաղթողէն և յանյեղագունէն պահեալ եղև ստացականն, և համայն ոչ են ըստ այնմիկ, որ զգեցեալ եղև, ևս առաւել ըստ առողին, վասն զի զգեցողին ճոխութենէ նախասացեալքն ամենեքին անուանեցին: (84 / 18; 84 / 19; 84 / 20)

Ասի մահկանացու մարմինն ըստ նախագոյակ իւրոյ բնութեանն, և ոչ ասի մահկանացու, զի անմահագունին ներկեալ եղև արմատով և ամեննին անմահաբար և կենդանացուցիչ, գոյ արդարև յԱստուածն Բանում նկարագիր մարմնոյն իւրոյ բնութեան և ոչ ասի ի նմանէ ուրոյն բնութիւն, զի

յԱստուածայնումն

ծածկեալ Լընկղմեալ

եղև

բնութեան: (84 / 25; 85 / 2; 85 / 2; 85 / 5; 85 / 6)

Եւ յաղագս նորին ասի մի բնութիւն ունել Տէր մեր Յիսուս Քրիստոս. ոչ անմարմին, այլ զմարմնացեալն, զի Լոչ իսկ յարմարեացի յատուկ առ ինքն, միոյն ասիլ մի, այլ առ այն՝ որ ընդ նմա Լի նմա միացաւ Լխառնեցաւ անքակաբար, ոչ ի միաւորութենէ համագոյ Լկամ միոյ բնութեան ասել զԱստուածն Բան Լզկենդանարարն իւր մարմին, Լոչ յանփոփոխն գոյոյ զբաժանումն Լզերկմտութիւն դաւանել, ոչ ի կենդանին Լի բանաւորն Լմտաւորն խոստովանել զփրկչականն մարմին, երկուս ասելով անբարշտել կենդանիս, Լ կամ երկուս բանականս Լմտականս երկուս Լոչ ի մինն դաւանելոյ կենդանի բանական Լմտաւոր, համագոյութեան տալ կարծիս Աստուածն

Բանի Լմեղսաքաւիչն

իւր

մարմնոյ: (85 / 9; 85 / 11; 85 / 12; 85 / 13; 85 / 14; 85 / 15; 85 / 16; 85 / 17; 85 / 17; 85 / 19; 85 / 20; 85 / 20; 85 / 21; 85 / 23)

Արդ այս մեզ իմաստասիրեալ եղև յաղագս թէ ոչ է պարտ համագոյ ասել զտէրունական մարմինն աստուածութեանն, ոչ համաբուն Լոչ անսկիզբն յաղագս միաւորութեան, ոչ անեղ, ոչ անբովանդակելի, Լոչ որ ինչ սորին ազգակից անուանք: (86 / 3; 86 / 5)

Իսկ եթէ որ ժպրհեացի հրաշացուցանել անուամբքս այսոքիկ, այսպիսեացն ի վերայ յարուցեալ Լառ ի նզովել Լառ ի քակտել զաղանդն՝ Մեծն Աթանասիոս Աղեքսանդրացի հայրապետն, որ առ Էպիկտիտոն թուխթն է: (86 / 8; 86 / 8)

Յորոց հեռի արասցէ Հոգին սուրբ ի նորայն դատապարտութեան բանիցն, շնորհելով մեզ անբիծ դաւանութեամբ կալ յաստիսս Լհանդէձելոցն հասանել բարեաց ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում՝ փառք յաւիտեանս ամէն: (86 / 15)

Առ այնոսիկ որ յերկուս զմարդկային անջատեն բնութիւն, այլ գոլ ասեն յառաջ քան զյանցանսն Լայլ զկնի յանցանացն: (87 / 4)

Եռակի տրամատի ամանակացն զանազանութիւն, ի ներկայս, յանցեալն, յապառնին, Լի սոցանէ ներկայն ի զգայութենէ Լի գիտութեան, իսկ ապառնին թէպէտ Լի գիտութեան դուզնաքեայ ինչ, այլ ի զգայութեան ամեննին ոչ, իսկ անցեալն՝ մօտաւորն ի զգայութեան, այլ ոչ Լի գիտութեան, իսկ հեռաւորն մասնաւոր ինչ ի գիտութեան: (87 / 8; 87 / 9; 87 / 10; 87 / 13)

Արդ՝ զիս՝ ըրդ դուք վասն անցելոց հեռաւորացն ամեննին զձեզ ի գիտութիւն գոլ խոստովանիք Լասէք. «թէ մի Լնոյն բնութիւն նախաստեղծին յերկուս

բնութիւնս զանազանեալ գտաւ, այլ բնութիւն ունել նմա յառաջ քան զյանցանսն և յայլ փոխել յետ յանցանացն, ասելով, յառաջ քան զյանցանսն անմահ էր և յանապական և ամենայն կրից և կարեաց մարդկայնոց անընդունակ, զի այնք ամենեքին յետ մեղացն ի նա չար յաւելեալ եղև»: (87 / 16; 87 / 16; 88 / 2; 88 / 4; 88 / 5; 88 / 5)

Ապա ուրեմն, որպէս դուք ասէք, գտանի նա և երիցն անբաժ եղեալ հոգեկանաց մասանցն, զցանկականն ասեմ և զցասմնականն և զխոհականն: (88 / 9; 88 / 10; 88 / 11)

Եւ ոչ միայն այս, այլ և զգայականի զօրութեանն արտաքոյ եղեալ և քանականին ի ձեռն այսորիկ, զի ցանկականն և ցասմնականն զգայականին յարևանայ, զոր օրինակ խոհականն քանականին, ընդ ձեռն որոց ոչ էլոյ բնաւորականացս այսոցիկ. այս է՝ ցասմնական և ցանկութեան և խոհականութեան, ոչ կարեն գոյ և այնոքիկ, յորս սոքայն իցեն բնաւորեալք, զգայականն ասեմ և զքանականն: (88 / 12; 88 / 13; 88 / 14; 88 / 18; 88 / 18; 88 / 19; 88 / 20)

Եւ զիա՞րդ զգայութեան ընդունակ ասի նախաստեղծն, անզգայ ըստ ձեզ եղեալ, և կամ քանական՝ անբան. և զի քանական նոքա՝ յօրէնսդրութենէ անտի և յայտ, այլ և ի հարցմանցն և ի պատասխանեացն առ միմեանս: (89 / 2; 89 / 2; 89 / 3; 89 / 4; 89 / 4)

Եւ զգայութեանցն առհաւատչեայ տունկն հրաժարեցուցեալ, որոյ պտուղ առ ընդ զգայութեամբ ստորանկեալ եղև նոցա, թէ քանական աղենայն բնակող և պահապան, որով զգայութեամբ զգալին, և ընդ զգալովն՝ մարմին և մարմնովն կիրք և կրական մարմին. և ի վեր հանելով զբանս ի բաց բարձեցելոյ կրիցն, բարձեալ լինի կրականն մարմին, և ի նմանէ զգալոյն զգայութիւնն, ի նմանէ քանականն, ուստի և մարդն: (89 / 9; 89 / 10; 89 / 10; 89 / 11; 89 / 11; 89 / 13; 89 / 15)

Բայց ոչ ամենեքին այսք ասացեալքս խոտորման նմա առիթ, զի անձնիշխանութեամբն ճոխացեալ և զգուշացեալ պատուիանան, կարելի էր նմա ոչ միայն պիտակացն ոչ տալ թոյլ հպել առ բնութիւնն, այս է՝ մեղացն մահուն ապականութեան, և այլ բնականացն ունել իշխանութիւն սաստել և հնազանդեցուցանել և ուղղել զնոսա ի սպասաւորութիւն հաճոյիցն Աստուծոյ և ոչ լինել աղախին հեշտասիրութեանն: (89 / 17; 89 / 21; 89 / 22; 89 / 22; 90 / 2)

Եւ զի ի կամս ինքնիշխանութեան թողեալ էր ձգել նմա զմեղսն կամ հալածել, վկայէ պատուիրանն, «յորում աւուր ուտիցէք, ասէ, ի նմանէ, մահու մեռանիցիք», ուստի յայտ է, թէ մեղօքն, որ զպատուիրանն ուսոյց քամահել, քարշեցաւ մարդն ի մահ Այապականութիւն: (90 / 9)

Զօր օրինակ, զօրականն, որ ի հանդիսին ունէր տեղի, վահանընկեց լինելով, մատնեցաւ ի ձեռն ախոյեան թշնամոյն, այսպէս Ամարդն ինքնապատուիրութեամբ ի մեղս հակամիտելով՝ գտաւ եղեալ ծառտայ մահու Այապականութեան: (90 / 12; 90 / 14)

Ընդ որով Ազայս ասելի է, ի չորս բաժանի կենդանական զօրութիւնն. ի ծննդական, սննդական, յաճելական Աի տեղափոխելականն: (90 / 16; 90 / 18)

Ոմանք յասացելոցս Այանմարմնականացն յարմարեցին գոլ, իսկ մարմնական կենդանիքս ընդ բոլորիքս ենթակայեալ է: (90 / 19)

Արդ յայտ է, թէ ծնանելի ունէր բնութիւն մերն նախահայր, վասն որոյ Ահողածին անուանի, որ ի հողոյ զանկեալ լինի յԱրարչէն: (91 / 1)

Նոյնպէս Աաճեցականն, ըստ որում ի դոյզն կողէն առ սակաւ սակաւ ի վեր տանելով աճմամբ, զմերն կատարելագործէր նախամայր Ստեղծիչն: (91 / 2)

Իսկ զկերակրողական ունել զօրութիւն նոցա, ամենազան պտղովք դրախտին ճանաչի, զոր նախախնամողին յամենից նմա հրամայեալ ուտել, իսկ միայն միայնոյ անճաշակ լինել ի ծառոյն գիտութեան բարւոյ Աչարի: (91 / 11)

Իսկ տեղափոխն լինել, ի հպելոյ առ հրաժարեցուցեալ պտուղն Աի թագչելոյն յայտնի եղեալ ճանաչի: (91 / 12)

Արդ ուրեմն ճշմարիտ որպէս ներգործողքն, սոյնպէս Աներգործեալքն ի նոցանէ, ևս առաւել ճշմարիտ Աոր պատմէ վասն նոցա: (91 / 14; 91 / 16)

Եւ սակայն ոչ վասն գոլոյն ի նախաստեղծեցեալսն բնաւորականացն կրից, ընդ զմին Ազմեղսն ի նոսա բնաւորականս ասելի է, ոչ է այս, Ամի՛ լիցի ասել զայս այսպէս, որք ոչ իցեն. հեռի յԱստուծոյ, զի ոչ եթէ էութիւն ինչ ըստ ինքեան է մեղքն, Աոչ մասն ինչ ի մարդկային ստեղծուածիս հաստատել զնա Ստեղծողին, այլ ի մերմէ ընկալաւ սորա սկիզբն ծուլութենէ Ակամակորութենէ Աի չարին պատրանաց
զօրացեալ Աի
բանասարկութենէ: (91 / 19; 91 / 20; 91 / 22; 92 / 2; 92 / 3; 92 / 4)

Եւ ոչ դարձեալ զի օտար սա բնութեանս, թափուր յաղագս այսորիկ բնութիւնս և ի կրից անտի բնաւորականաց, պարտ և արժան է զէն ասել, և զոչ էն ոչ սահմանեալ և մի սուտ կարծեօք սակս երկոցունց ստել և մեղանչել: (92 / 6; 92 / 7; 92 / 8; 92 / 8; 92 / 9)

Բայց հարցաքննելի է այս, թէ է՞ր աղագաւ առեղծանել ձեռնարկեցին որդիքն Բելիարայ զաստուածային սուրբ զիրս և առ իւրեանց կամակորեցին կորուստ անձանց. զի ոչ կարացին պարզաբար մարտնչել ընդ աստուածախօսնակ արանցն, որ յաղագս փրկչական անօրէնութեանն բանք, օրինակ իմն, որք որպէս յանդիման ական ունել ոչ զօրէն, որոզայթիւ հնարին զմահն իվերայ ածել: (92 / 13)

Այսպէս և նոքա՝ զորոց բանս խարդախելոյ, յանդիմանեալք յԱստուծոյ, սասցին, թէ Քրիստոս զնախաստեղծին ունէր բնութիւն զանկիրընդունակն և զառանց կարեացն, ոչ զայս՝ որ ընդ կարեաւքս է ստորանկեալ, որով իւիք առ մահն և ապականութիւն երթեալ կործանիմք: (92 / 20; 92 / 23; 93 / 2)

Եւ զայս ասելով՝ կարծեցին ընդ ձեռն տարացուցին առ աչօք մարդկայինն ցուցանել կրել Քրիստոսի կիրս, որպէս զի և մարդեղութիւն նորա կարծեաւք և երևութիւ գտանիցի ըստ Մանեայ մոլորութեանն: (93 / 6; 93 / 7)

Արդ եթէ յաղամային մարմնում հոգեկանքս և մարմնականքս ոչ էին բնաւորեալ կիրք, յայտ ուրեմն է՝ թէ Քրիստոս կրելովն զայսոսիկ, ոչ էառ զաղամայինն, մարմին այլ զմերս՝ որ ընդ մահուամբն և ապականութեամբ եղև ստորանկեալ: (93 / 10; 93 / 13)

Իսկ եթէ նախաստեղծին ունէր բնութիւն՝ զառանց կրիցն և զանմահականն, սուտ ապա ըստ ձեզ եղ ի բաց երևոցելն զկիրս և նորուն աշակերտացն վերաձայնէ կրիցն: (93 / 16; 93 / 17)

Դարձեալ թէ յաստուածաստեղծեցելումն ոչ էին հոգեկան և մարմնական կիրս, սիրելի եղև Քրիստոսի ոչ զիր զառանց կրից ստեղծեալն, այլ զմերն ընդ ձեռն յանցանացն զգենուլ կիրընդունակ եղեալ ստեղծուած: (93 / 20)

Մեք ուրեմն ապա ընդ ձեզ յաւետ գեր զնա զեղեցկակերտեալ և կատարելագործեալ զիտացաք յանցմամբն զբնութիւնս, որ թէն նմա եղև ընտրելի և փափագելի: (94 / 2; 94 / 4)

Արդ՝ զի՞ ևս յերկրաձգեցից զնոցայն զսուտապատիր ցնորմունս և զառասպելական բաջադանս, այսուհետև զմերն և որ զճշմարտութեան է իմաստասիրեցից բանս: (94 / 7; 94 / 8)

Ոչ է, ո՛վ դուք, մարդկայինք յերկուս բաժանեալ բնութիւն, այլ մի և նոյն յիսկզբանն ստեղծեալն իւր լուսափայլող պատկեր, որ ի մեղացն գտաւ շաղախեալ, զգենլով՝ վերջին աւուրս ստեղծիչն՝ վերաստեղծեալ, զի ամենայնիւ որպէս, գրեցաւ, նմանեալ մեզ թանց մեղաց, և նովին կատարեալ բնութեամբս, զոր էառ ընդ մեր և վասն մեր մեղաց, պատերազմել ընդդէմ մարդկայնոցն պատերազմողին: (94 / 11; 94 / 16; 94 / 18)

Ծնաւ ի Կուսէ և առանց սերման, զի ցուցցէ, թէ ծնանելի էր հաստատեալ բնութիւնս, և այնպիսաբար թանց զուգակցի էր կարողութիւն ծնանել, և կացեալ, մնացեալ ի պատուիրանապահութեանն: (94 / 20; 94 / 21; 94 / 23)

Մննդեան և կերակրոց վարեցաւ պիտաւորութեամբ, յայտ առնելով սննդական և կերակրողական գոլ զմարդկային բնութիւն: (95 / 1; 95 / 3)

Համօրէն կիրս մարդկայինս՝ զհոգեկանս և զմարմնականս՝ յիրումն բացերևեցոյց մարմնում. որքան կամեցաւ և երբ և ուր: (95 / 7; 95 / 8; 95 / 9)

Եւ յաղագս որոյ, զի նոյնագոյ և ազգակից զիւրն առաջնոյն բացայայտեցէ երկրորդն Ադամ, և զի ցուցցէ, թէ ոչ ի մեղացն սակս ընդ բնութեանս այսոքիկ շարակապեալ եղեն, այլ յարատևողութեան վասն և բնաւորաբար յօգնութիւն մեզ սոքա ի Ստեղծչէն պարզեցան: (95 / 10; 95 / 11; 95 / 14)

Մեռաւ և թաղեցաւ և ի դժոխս էջ անըմբռնելին նոցա, զի յերկաքանչիւր տեղեացն զկամօք ի նոսա ընկղմեալն ազատեցէ՝ կամօք ազատ մնացեալ Տէրն, և զի ցուցցէ բռնաւորին, թէ ինքնակամութեան և հաւանութեան գործ. և ոչ զօրութեամբ քո բռնագբօսել պատկերս ի ծառայութիւն: (95 / 15; 95 / 16; 95 / 19; 95 / 20; 95 / 21)

Յերկինս համբարձաւ նստեալ ընդ աջմէ մեծութեանն ի բարձունս, որպէս ի դէպ է ասել, թէ և բոլորումս առաջի կայ ստեղծուածոյ զկնի յանգմանն կիսադրեալն հանդիսի զաստուածայինն ժառանգել փառաց աթոռ: (96 / 1)

Այսոքիկ մեզ իմաստասիրեալ եղեն յաղագս յանդիմանելոյ զմոլորութիւն Մանեայ, և որք ի նմանէ չար արմատոյ չարագոյն շառաւիղք, զՅուլիանայ ասեմ, և զԵւտիքեայ զառաջնոյն և զվերջնոյն, և զՅուլիոսեայ Ղկառնասացոյ և զնորուն ծննդոց: (96 / 7; 96 / 8; 96 / 9; 96 / 9; 96 / 10)

Որ Լզմեզ պահեսցէ պահպանող ձեռն Արարչին ի նոցա սպանող Լի կորուսիչ բանիցն, շնորհելով մեզ լինել աւանդապահ առաքելական աւանդիցն ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում փառք յաւիտեանս: (96 / 11; 96 / 12)

Ոչ այնքան ծարաւեալն կարօտասցի աղբերն, որքան ուսումնասերն խնդրէ գտանել զայնոսիկ, առ որս գիտութեան իցէ մնացեալ նշխար, որպէս Լդու, ո՛վ այրդ Աստուծոյ, միանգամայն Լհայր բազմաց ի միաբանութիւն եկելոց առաքինասիրաց անձանց, խնդրեցեր առ ի մէնջ գիտել զպատճառս, որով իւրք տարակուսին բազումք ի վերայ փրկչական կիրքնդունակութեանցն մարդկայնոց, թէ զբնական պարտ է զնոսա ասել, թէ յանբնականաց, Լմանաւանդ զի ի գիրս զերկոսին գտանեմք ասացեալ ի սուրբ հարցն: (97 / 10; 97 / 11; 97 / 17)

Արդ կրկին իմն սահմանեցան անուանիլ բնական այս ձայնք ի վերայ մարդկային կազմածիս. մի՛ զոր Ստեղծողին ընդ ստեղծանելն անկեալ է ի ստեղծուածին, առանց որոյ Լոչ բնութիւն կարէր բաղկանալ, Լմիսն, որ յախտասիրութենէ իւրմէ զկնի գոյանալոյն գտանելոց էր մարդն, զոր Լգտեալ խառնեաց Լբնաւորեցոյց ի բնութեանս, ընդ ձեռն որոյ՝ մեղաց Լապականութեան՝ մարդկային բնութիւնս թեքեցաւ լինել ծառայ, այս զոր Լասելս կամիմ: (98 / 4; 98 / 4; 98 / 6; 98 / 7; 98 / 8; 98 / 10)

Ծնանելն բնութեանս են բերք Լընկալեալք յԱրարչէն առ ի մարդեղութիւնս ի բազմամարդութիւն հնարել, որ Լբնականք են սոքա ի մեզ, իսկ զանասնականն Լոր ընդ ձեռն երկակաց խառնից Լխտղոտմանց գտաք, մեք զնեմք հիմն մերոցս լինելութեան, որ Լսա բնական անուանի: (98 / 12; 98 / 14; 98 / 15; 98 / 16; 98 / 17)

Որպէս ԼՍներիանոս ասէ՝ Գաբաղայ եպիսկոպոս. «Չոգի Լմարմին ծառայ են կարեաց, որ ի մեղսն տանիցին, Լայնց կարեաց, որ արտաքոյ քան զմեղսն իցեն»: (98 / 21; 99 / 1; 99 / 2)

Եւ յառաջ մատուցանելով զբանն ասէ. «Թէ Տէրն կրեաց զմարդկայինն՝ զհոգեկան Լզմարմնական կիրս, զայն որ առտաքոյ մեղացն իցէ» Զնոյն ԼԳրիգոր Նիւսացի, յօրինակ առնլով քաղցնելոյ Տեառն զտակառապետացն հնարս, ասէ. «նոքա ի պարզելն զգինին, զմաքրականին աղէտս ոչ անարգեն, իսկ զաւելորդ զխառնեալն ընդ նմա զփոշին՝ քամեն Լի քաց ընկենուն»: (99 / 5; 99 / 7; 99 / 12)

Արդ Լ դու, ո՛վ սիրելի Լ ծաղկահաւաք, ցանկացողդ լինել հոգեկանացոյ ճառից, ասասցես ընդ սրբոց հարանցն աներկևան սրտիւ ստորասութեամբ Լ բացասութեամբ գերկոսին ի մեզ Լ մի շփոթեսցես Լ խաթարեսցես զլուսաւոր քո սիրտդ, այլ միայն ի միտ առեալ ծանիցես, ըստ որում՝ իմիք յեղանակի յիրեանցն շարադրութիւնսն ներածեալ իցէ երջանիկ հարանցն զունակութեան Լ զպակասութեան բան լինել ի մարդկային կազմածիս, յորոց ի միոյն հրաժարեալ՝ Լ զմիւսն ընդունել դաւանեցին զՔրիստոս սակս մերոյն փրկութեան: (99 / 13; 99 / 13; 99 / 16; 99 / 17; 99 / 18; 100 / 2; 100 / 4)

Յիշե՛ս ապաքէն, յորժամ հրամայեցեր ի Դերայիդրոշտադ եպիսկոպոսացն Թեոդոտեայ Լ Աթանասի հարցանել զիս վասն հաւատոյ: (100 / 15)

Տէր Աթանաս լռութեամբն զժամն յղարկեաց, Լ որ արդարն է Լ որչափ ինչ կացին առ նմա, հանապազ բարեպաշտութեան բանս լսեցուցանէր ինձ, Լ ոչ զլետին ինչ: (100 / 17; 100 / 17; 100 / 19)

Իսկ Թեոդոտեայ ոչ միայն թէ հարցանելով ոչ էհարց զիս, այլ Լ զհիրն, գոր երկնէրն, ոչ սակաւ սակաւ, որպէս օրէն է խոհեմագունից, այլ միանգամայն Լ ի միասին ի բաց թափեաց, գոր խորհէր զբանն, ոչ ուղեղս, այլ առաւել թիրս Լ հակառակ սուրբ հարցն խոստովանութեան: (100 / 21; 100 / 23; 101 / 2)

Ձհայհոյութիւնն ոչ գովեմ, բայց զպարզամտութիւնն Լ որ առանց ստութեան զհիրն յայտնեաց խոստովանութիւն, որչափ ինձ արժան իցէ, շնորհակալ պարտ է լինել նմա. զի թշնամութիւն յայտնեալ, զգուշանալ հրամայէ, իսկ ընդ կեղծաւորութեամբ մտանել, յանգէտս դաւաճանէ: (101 / 4)

Եւ երանի թէ էր ժողովոյն զնոյնպէս արարեալ, երկոքին կողմանքս ի չարէ նորա աստուատ զերծեալ լինեաք, ոչ նա նենգաւոր Լ ոչ մեք նենգեալ գտանեաք: (101 / 13)

Այլ անտի լռութեան պարսպի զինքն դարանեալ ծածկեաց Լ որպէս կարթիւ բերանովք այլոց զմեզ որսալ կամեցաւ, որք ամեննին անվարժք Լ անհմուտք էաք ստել յաղագս առ Աստուած խոստովանութեան, ոչ զիտեմ՝ զմե՞զ խաբել խորհեցաւ, թէ զիր ինքեան անձն, դանդաղիմ ասել թէ զնոյն ինքն յաղագս որոյ բանս: (101 / 15; 101 / 17)

Եւ են այսոքիկ, զորս ամբարշտեալ լսեցուցանէրն մեզ մի ըստ միոջէ, յերիս ժամանակս փոփոխումն ընդունել ասէր զՔրիստոսի Լ առ սակաւ սակաւ յառաջատրութեամբ Լ յաւելուածով զբովանդակն յետ յարութեանն շնորհէր

գտանել նմա փառս,
զկատարելութիւնն և զանապականութիւնն: (101 / 24; 101 / 25; 102 / 3)

Ասացից և էս ի վերայ այսորիկ, զոր ասէրն Երեմիա. «ով տայր զգլուխս ջրհոր և զաչս աղբիւրս արտասուաց», և որ ի կարգին է: (102 / 3; 102 / 5; 102 / 6)

Եւ զիս՞րդ ասէր ինք զինքենէ Քրիստոս առ աշակերտսն. «Տեսէք զիս, զի էս նոյն եմ», պարտ էր ասել մի կարծէք զիս, որ յառաջն էի, զի փոխեցայ յապականութենէ յապականութիւն և յանփառաւորութենէ ի փառս և յանկատարելութենէ ի կատարումն: (102 / 11; 102 / 11)

Զիս՞րդ և Պօղոս ասէր, թէ ոչ էր նոյն, «Յիսուս Քրիստոս ի փառս երեկ և այսօր, նոյն և յաւիտեանս»: (102 / 13; 102 / 14; 102 / 15)

Ընդէ՞ր Եսայի յառաջաձայնէր զձնեցելոյն Էմմանուէլ և Աստուած հօր և Հայր հանդերձեալ աշխարհին. զի ոչ էր հնար զանփառն և զանկատարն և որ ընդ ապականութեամբն էր անդևալ. Աստուած կոչել և հօր և Հայր հանդերձելոյն: (102 / 16; 102 / 17; 102 / 18; 102 / 18; 102 / 20; 102 / 20)

Դարձեալ թէ ոչ էր մարմին նորա, որ տեսանելին և շօշափելին: (103 / 2)

Բանին Աստուծոյ փառացն և զօրութեանն և կատարելութեանն լեալ հաղորդ, զիս՞րդ ասէր Յովաննէս զանմարմին Բանն, թէ «տեսաք զնա և ձեռք մեր շօշափեցին ի վերայ Բանին կենաց»: (103 / 3; 103 / 3; 103 / 5)

Զիս՞րդ ինքն ցկոյրն ասէր, հարցելոյն նորա, թէ ո՞վ է Որդին Աստուծոյ, և տեսէր զնա և որ խօսին ընդ քեզ, նա է. պարտ էր ասել, թէ այն է Որդին Աստուծոյ, որ դեռ չևս է միացեալ ընդ ապականացուիս և ընդ անփառիս և ընդ անկատարիս: (103 / 8; 103 / 9; 103 / 11; 103 / 12)

Ծանեայ և զայս ի նմա, ո՞վ Տէր իմ, զի որ ինչ ասէր, ոչ զիտէր սահմանել, այլև անդրէն իւրովք ասացուածովքն ընդ ինքեան և ոչ ընդ ոտխի ումեք, մարտնչէր: (103 / 13; 103 / 15)

Ասէր յարգանդի Կուսին միաւորեալ զԲանն Աստուած ընդ իւրում մարմնոյն, յաղագս որոյ և բնութիւն մի զՔրիստոս ասէր գոլ, և յառաջ մատչելով՝ զնոյն բաժանէր յայլանմանս և ի զանազանս, որպէս յառաջն ասացի, զոմն ամենակատար և փառաւորեալ և անապական ասելով, և զմիսն ոչ նոյնպէս: (103 / 19; 103 / 19; 103 / 21; 103 / 22; 103 / 23; 103 / 23)

Եւ դարձեալ զայսիսաբար բաժանելն անկարգապէս միաւորեր ասելով. «Ես ի խաչին զնոյն ինքն զԱստուածն Բան ասեմ գեղարդեամբն խոցեալ և բնեռեալ բնեռօքն», որ գտանի այս ի բերան այնոցիկ, որ շփոթութեամբն ժպրհեցան ասել զմիաւորութիւն Բանին ընդ իւրում մարմնում, զոր սուրբ Հարքն բարեպաշտաբար սակս նորին ուսուցին զմեզ խոստովանել ասելով. «անչարչարելին չարչարի չարչարելեան, եթէ անմահական և անչարչարելի Բանն իւրացոյց իւր ի մարդկանէ մարմին, որով կարելի և հնարաւոր էր չարչարել և մեռանել»: (104 / 4; 104 / 11; 104 / 13; 104 / 13)

Իսկ ես զարհուրեալ ի չարաչար նորա հայհոյութենէ բանից, կապեցի զլեզուս և արձակեցի զլսելիսս, միանգամայն թէ և կամեցայ զբովանդակն գտանել զնորա զամբարշտութիւն: (104 / 16; 104 / 16)

Իսկ վերջինն նորա էր այս, և չարաչար բաժանումն ասէր. թէ զմարմինն իւր Բանն Աստուած տարեալ դնէ առաջի Հօր և Հոգւոյն զկնի թաղմանն իբրև զբեռն ինչ օտարոտի և աշխատաբարձ ասելով. «Ես վասն զի մէկին և ոչ կարացի զմարմինս իմ ընդիս միաւորել և իմումս հաղորդ առնել փառաց և զօրութեան, պահեցի զայս ձեզ առնել, զի կրկին էք»: (104 / 19; 104 / 21; 104 / 22; 105 / 1; 105 / 2; 105 / 3)

Ի դէպ է ըստ նմա ասել, թէ և առնուլ Բանին զմարմինն առանց Հոր և Հոգւոյն կամաց, և ահա թշնամութիւն զհետ երթայ յորս անբաւահաստիկն է սէր և խաղաղութիւն, որք սիրոյն և խաղաղութեանն են աղբիւրք: (105 / 5; 105 / 6; 105 / 6; 105 / 8; 105 / 9)

Արդ եթէ որպէս ասեն և այնպէս է, ոչն է այն, որ ոչ է այնպէս, աշակերտքն ի վերնատանն ոչ զկենդանաբար և զմեղսաքաւիչ մարմինն ճաշակեցին, այլ զանկատար և զանփառ և որ չն ևս էր զգեցեալ զանապականութիւն: (105 / 14; 105 / 16; 105 / 17; 105 / 18)

Իսկ եթէ ճշմարիտ է, որպէս և են իսկ ճշմարիտ բանն Քրիստոսի, որ զմարմինն յառաջ քան զյարութիւնն անուանեաց նոր ուխտ և քաւիչ մեղաց և կենաց տուող, ապա յայտ է, թէ նա է սուտ ի սերմանել ի լսելիս հաւատացելոց Քրիստոսի զմոլար վարդապետութիւնն: (105 / 20; 105 / 22; 105 / 22)

Եւ վկայ ածէր զփրկչականն բան իւրոյ բանին. «Հայր փառաւորեա զիս առ ի քէն փառօք, և թէ փառաւորեա զՈրդի քո, և թէ Յիսուս չն էր փառաւորեալ» աստի ասէր յայտ, թէ ի յարութեանն զգենլոց էր

փառս և զանապականութիւն և զկատարելութիւն: (106 / 6; 106 / 6; 106 / 9; 106 / 9)

Արդ ըստ նորա բռնադատելոյն զմիտս բանիս՝ Բանն Աստուած փոխեցաւ ի հայրական փառացն ի լինելն իւր մարդ՝ «թէ զոր ունէի առ ի քէն յառաջ քան զլինելն աշխարհի», որովհետև լինի այս, թէ Քրիստոսի մարդեղութիւն աշխարհի փրկութիւն գործեաց և ինքեան անձին հասոյց զրկանս և աղքատութիւն» իսկ զի՞նչ ասացեալն ի նմանէ ի վերնատանն, «այժմ փառաւորեցաւ Որդի մարդոյ», և կամ զՀօր զաղաղակելն յերկնից. փառաւոր արարից», և այսոքիկ յառաջ քան զյարութիւնն: (106 / 16; 106 / 17; 106 / 19; 106 / 21)

Այլ և զայն ասելի է ըստ նորա մտածութեանցն, թէ և Հայր կարօտ էր փառաց, զի զկնի ասելոյն, «այժմ փառաւորեցաւ Որդի մարդոյ» ի վերայ բերէ, թէ «Աստուած փառաւորեցաւ ի նմա»: (107 / 1; 107 / 2)

Նոյնպէս և զառաքելոյն բանն քարշէր իւրոց բանիցն ի վկայութիւն, զոր ի պրակսն իսկ է գրելն» և զի ոչ ևս դառնալոց էր մարմին նորա յապականութիւն, դառնալ, յորում էրն, զայն ասէր: (107 / 5; 107 / 7)

Յարէր յասացեալս և զայն ևս, մի ձանձրանալ ի լսել, ամաչեմ, Տէր իմ, զոր լսեցոյց ինձ մի ըստ միոջէ Թեոդիտէ, զի և տուեալ իսկ է քեզ յԱստուծոյ յերկայնամտութիւն և զքաղցրութիւն, զի թէ թարգմանն առ ժամայն ոչ էր գնացեալ, անդրէն ի տեղուջն իսկ կամէի ընդ քեզ խօսել յանդիման նորա. և զի ասէր, թէ վասն զի անկատար և անփառաւոր և ապականացու եկաց, մնաց մարմինն Քրիստոսի ի ծննդենէն մինչև ցյարութիւնն, պարտ էր ըստ այսմիկ և զնա չարչարելի և մահկանացու ասել մինչև ցյարութիւնն. ոչ զայն ասեմ, ասէր, որ ի գերեզմանին և կամ որ ի մեղացն է, այլ որ ինչ միանգամ յիրաքանչիւր կիրսն գտանի, ի հոգեկան և ի մարմնական, զայն ընդունել ասեմ Քրիստոսի

ի

մարմինն

իւր: (107 / 10; 107 / 12; 107 / 14; 107 / 17; 107 / 18; 107 / 18; 107 / 21; 107 / 21; 107 / 23; 108 / 2)

Արդ տ՛ես, Տէր իմ, թէ որպէ՛ս անպատկառաբար զաննման բանն բռնադատէ աննման մտածութեամբք և ջանայ զմարգարէին զուղիղ բանն, «ոչ տացես սրբոյ քում տեսանել զապականութիւն», առ իւրն քարշէլ թիրել խորհուրդ, զի թերևս կարասցէ ի ձեռն այնորիկ զգեցուցանել մարմնոյն Քրիստոսի զապականութիւն: (108 / 6)

Եւ գմարդկային զկիրս, որով զմերն բժկեաց Տերն, ապականութիւն անուանելով և ոչ կիրս փրկականս. զի ասաց, թէ դառնալ յայն ասէ, որ էր յառաջ: (108 / 13)

Ոչ հեռի և օտար է մարդկային բնութեանս զկնի մահուանն վերստին յառնել և ընդ լծով մտանել մահու և ապականութեան, զոր օրինակ Ղազար և ըստ նմանքն, որ սքանչելոքն Փրկչին յարեան և ի նմին հաստատեալ կացին, մնացին յապականացու և ի մահկանացու կեանս: (108 / 19; 108 / 20; 108 / 21; 108 / 22; 108 / 23; 109 / 2)

Բայց արդ դարձեալ երթիցուք վերստին առ մարգարեական բանն և ի նմանէ իսկ առեալ պատճառ լուծանել զտարակուսանսն Թեոդիտեայ, թէ արդ արդեօ՞ք իցէ ի գրոյն գայթակղելն նորա և ոչ յինքեան կամակորութենէ և յամառութենէ, և զի սովորութիւն է գրոց ոչ միայն թէ ի վերայ նորին դիմի և ամանակի պահել զառաջարկութեան բանին հոլով, այլ է երբէք, որ առ միմեանս փոփոխեալ լինին, որպէս և ասէ ուրեմն Դաւիթ ի ՃԼԶ սաղմոսին, «Առ գետս Բաբելացոց» և այլն: (109 / 4; 109 / 7; 109 / 8; 109 / 8; 109 / 10; 109 / 13; 109 / 14)

Բանն ասացեալ լինէր առ Երուսաղէմացիս, որ հանդերձեալ էին երթալ ի գերութիւն ի Բաբելոն ի Նաբուգոդոնոսորայ, և մարգարէն զինքն ի ներքս արգելեալ փակէ հանդերձ անցելովն ժամանակաւ: (109 / 17)

Եւ արդ զի՞նչ զարմանք են, եթէ առաքեալն յերկուս բաժանէ ամանակս զմարգարէին բան ի հրապարակախօսութեանն իւրում, զմին բանն պատմած իրաց մանր խոնարհեցուցանէ յանցեալ ամանակն ասելով, զի յարոյց զնա ի մեռելոց. իսկ զմիւսն մարգարեական ձևով շարադրել յապառնիս հայեցուցանէր ասելով, «ոչ ևս դառնալոց է մարմին նորա յապականութիւն» որ յայտնապէս աստուստ բացափայլեալ բանիս հոլանիցին միտք, և յանդիմանեսցի Թեոդիտեայ տարակարծելի մտածութեանն ձայն, յորում զերկոսեան առ մին շարամանելով տապալումն ներադրեսցէ զբառս այսպէս ասելով՝ ըստ անցելումն, և զի յարոյց զնա Աստուած ի մեռելոց, և ոչ դարձցի մարմին նորա յապականութիւն և կամ ըստ ապառնոյն այսպէս, և զի յարուցանելոց էր զնա Աստուած ի մեռելոց, և ոչ դառնալոց էր մարմին նորա յապականութիւն: (110 / 7; 110 / 12; 110 / 12; 110 / 14; 110 / 14; 110 / 16)

Արդ զայս ի լոյս բերել ի շնորհաց Հոգւոյն սրբոյ և եղեալ առաջի աստուածասէր բարեբարոյից, որ ընդունելոց է ընկալցի, և նր արհամարհելոց է, արհամարհեսցի: (110 / 18; 110 / 20)

Բայց այսօր ասացուք և զայս. զի թե զյարութիւնն սպականութեան ծառայեաց մարմինն Քրիստոսի և զկնի յարութեանն փոխեցաւ յանսպականութիւն ի՞նչ իւրք մեծացոյց զնա յառաջասացութիւն սուրբ Հոգւոյն, և կամ որո՞վ իւրք առաւելեալ գտաւ մարմնացեալ Բանն Աստուծոյ, որ ի ծննդէնէ մինչև ցգերեզման թաղեալ կան յսպականութեան և ապա յարութեամբն զգենուն զանսպականութիւն: (110 / 21; 110 / 23; 111 / 3; 111 / 6)

Եւ դարձեալ զկնի յարութեանն ի բաց բարձեալ եղեն ի փրկչական մարմնոյն անուանք մարդկային բնութեանս, ընդէ՞ր ապա փախչի ի Յուդիոմեայ Ղիկառնացոյ, զի երկոքին զմի կարծիս ունին վասն մարմնոյն Քրիստոսի. նա ի ծննդեանն ոչ խոստովանելով զայսոսիկ զանուանս, պարտաւորեցաւ առ աչօք ասել զմարմինն Քրիստոսի, և սա զկնի յարութեանն զայսոսիկ ի բաց բառնալով ի մարմնոյն Քրիստոսի զանուանս. զնոյն խորհին վասն Քրիստոսի, ոմն յառաջ և ոմն յետոյ համաձայն լինելով իրերաց, նոյնպէս երկոքին առ աչօք գտանին ասացեալ զմարմինն Քրիստոսի և կամ յերկնից բերեալ: (111 / 15; 111 / 18; 111 / 20)

Եւ դարձեալ թե որպէս ասեն զկնի յարութեանն լինել Բանին Աստուծոյ և մարմնոյն իւրոյ միաւորութիւն, և ի միաւորութենէ անտի մի ասել ի վերայ Քրիստոսի բնութիւն, ոչ կարէ հեռանալ ի Նեստորի մոլորութենէն, զի և նա զնոյնդ ասէր: (112 / 1; 112 / 1; 112 / 4)

Սակայն մի ինչ ի նա լաւութիւն գտանի քան ի սմա, զի Նեստոր ի ծննդեան, որ ի կուսէն, մինչև ցյաւիտեան երկոցունց բնութեանցն զմի պատիւ և փառս շնորհէր, իսկ սա զոմն արժանի առնէ այնոցիկ և զոմն ի նոցանէ զրկէ: (112 / 8; 112 / 9)

Արդ ոչ միայն թե զանհաւանութիւն և զանհաւատութիւն ասացեալքս ի Թեոդոսեայ, այլ առաւել ևս զտուան յինքեան բերէ, զի թե ճշմարտեացի ծննդեան ասել զԲանին ընդ իւրում մարմնոյն զմիաւորութիւնն, ստեաց զյաղագս նորին յետ յարութեանն ասել զմիաւորութիւն, իսկ եթէ ճշմարտեաց զվերջինս, ստեաց զառաջինն, զի եթէ զերկոսին միանգամայն ի միասին կամ ճշմարտել կամ ստել, անտեղի ըստ նմին և զմի զբնութեան ասել ի վերայ Քրիստոսի, թե համագոյութեան բանին և մարմնոյն ասէ, այդ ի Կորնթացիոցն յանգի հերձուած, զորմէ գրէ Աթանաս առ Էպիկտէ, «թե ո՞ր դժոխք զգայեցին ասել մի բնութիւն Բանին և մարմնոյն». զի ըստ համագոյութեան ասել մի բնութիւն ի Քրիստոս, առնէ զԵրրորդութիւնն չորրորդութիւն՝ և ոչ ևս Երրորդութիւնն: (112 / 15; 112 / 24; 113 / 2; 113 / 5; 113 / 8)

Ապա եթե ըստ միաւորութեան ասէ զմի բնութիւն ի վերայ Քրիստոսի, ուրանօր զմիաւորութիւն խոստովանի անդանօր և զմիաւորութիւնն հարկաւոր է ասել ի վերայ Քրիստոսի և կամ ի ծննդեանն և կամ յարութեանն: (113 / 12; 113 / 13; 113 / 14)

Զի ի ծննդենէն և յառաջ մի ասել բնութիւն, և զմինն դարձեալ յերկուս բաժանել որակութիւնս և զերկոսին ընդ զանազան կրիւք և ներգործութեամբք արկանել, ոչ միայն թէ ստութիւն, այլ ընդ ստութեանն և զանուսումնութիւն բերէ: (113 / 14; 113 / 15; 113 / 16; 113 / 17; 113 / 19)

Եւ դարձեալ զի ա՛րդ Աստուածածին գիտէ ասել զսուրբ Կոյսն, զծնեալն ի նմանէ անհաղորդ լեալ ասելով աստուածային զօրութեանն և փառացն և անապականութեան և կատարելութեան: (114 / 2; 114 / 2; 114 / 3)

Որպիսի ինչ օրինակաւ կարծեսցէ գոլ զծնեալն, ըստ նմին անուանեսցէ և զծնօղն. մա՛րդ ասէ զծնեալն ի նմանէ՝ թափուր ի փառաց և ի կատարելութենէ և որ ոչ է զգեցեալ զանապականութիւն, ըստ այսմիկ արժան է մարդածին անուանել զսրբուհին Մարիամ: (114 / 5; 114 / 6; 114 / 7)

Գտանի այսպիսաբար դաւանութեամբ գերազանցեալ քան զՆեստոր յամբարշտելն, զի Նեստոր, որպէս յառաջն ասացի, երկոցունց բնութեանցն զմի ունէր ասել զճոխութիւն և զփառս և զպատիւ, այսինքն է աստուածայնոյն բնութեանն և մարդկայնոյն, իսկ սա զԱստուածն Բան ունող այսոցիկ ասէ գոլ, իսկ զմարմինն ամեննին անբաժ սոցա լինել ասէ մինչն ցյարութիւնն, և ապա յետ յարութեանն Հօր և Հոգւոյն ասէ վերաբերել զմարմինն ի փառս, ի կատարելութիւն և յանապականութիւն, և արժանի առնել այնուհետն աստուածային Բանին բնութեան հաղորդելոյ: (114 / 14; 114 / 14; 114 / 15; 114 / 19; 114 / 19; 114 / 21; 114 / 22)

Եւ այս վեր ի վայր ուղղողի ստութեանն, անդէն ի նմին ընկղմեալ գտանի խոստովանութեան. զԱստուածածին անուն դնէ ի վերայ Կուսին և ծնեալ ասէ զերեզմանի զԱստուած, զոմն անուամբ միայն պատուէ, և զոմն արդեամբք. զմարդն կենդանի և զբանականն և որ պատկերն է Աստուծոյ ոչ համարի արժանի ծնող գոլ Աստուծոյ, և զանշունչ զերեզմանն Աստուածածին անուանէ: (115 / 4; 115 / 6; 115 / 6; 115 / 7; 115 / 8)

Եւ գնոյն ասէ և ոչ ասէ, բանիւ խոստովանի զՄարիամ Աստուածածին, և զծնեալն ի նմանէ զՔրիստոս Աստուած, և զճշմարտութիւն

իրին յարութեամբն հաստատե. յորում տեղոջ զբանն հաստատե, անտանօր պարտ էր և զգործն հաստատել, և կամ ուրանօր զգործն ճշմարտե, ճշմարտել և զբանն: (115 / 10; 115 / 11; 115 / 12; 115 / 15; 115 / 16; 115 / 17)

Չի ամենայն իրի սահման յերիցս յայսցանէ կատարի, ի մտածութենէ գոյին, և ի նոյն ինքն ի գոյին, ի տեսութենէ և ի բառէն, որ սահմանէ զիրն, որպէս որ կամիցի զսահման մարդոյն բացայայտել նախկին յարձակի մտօքն տեսանել զմարդն, և զնոյն մտացն տես և աչացն առաջի դնէ, և ապա բանիւ զնոյն սահմանէ ասելով մարդ, կենդանի, մահկանացու, մտաց և հանճարոյ ընդունակ: (115 / 19; 115 / 20; 116 / 2; 116 / 2; 116 / 3; 116 / 5)

Իսկ Թեոդիտէ ըստ իւրում պանծալի իմաստասիրութեանն, զարծուին՝ արծուի ասէ գոլ, և պարագրէ զնա հետևակ, չորքոտանի, եղջերաբուս, կճղակաւոր, բչողական, որ լինի ընդ ձեռն պարագրութեանն արջառ ճշմարտութեամբ և ոչ արծուի: (116 / 7; 116 / 11)

Իսկ ապա յետ սուղ ինչ ժամանակի թողու զառջառոյն բան և ի վերայ բերէ զանարծուին: (116 / 12)

Եւ այսպէս ինք իւր լինի հակառակ և ինքեան բանիւ զիրն առեղծանէ զբանս: (116 / 14)

Գաբրիէլ հրեշտակապետ յաւետարանել սրբոյ կուսին ասաց. «որ ծնանելոցն է ի քէն սուրբ է, և Որդի Աստուծոյ կոչեսցի»: (116 / 18)

Իսկ Թեոդիտէ ասէր. «ի Մարիամայ ծնեալն անփառաւոր և անկատար է և զապականութիւն զգեցեալ և ապա կեղծաւորի ասելով, «ի գերեզմանին զապականութիւն ոչ ասեմ ընդունել մարմնոյն Քրիստոսի»: (116 / 20; 116 / 20; 116 / 21)

Օրինակ իմն որպէս ոմն յումեմն մեկնոցի հուր ծրարելով, վերաձայնէ ոչ կիզուլ մեկնոցին ի հրոյ անտի. և հնար իսկ ոչ է այսմ այսպէս լինել, զի ամենայնքս ի մարմնականացս որ հանդերձեալ իցեն զանապականութիւն զգենուլ, նախկի ապականի գոյացեալ իրն, որպէս Պօղոս իմաստասիրէ և ապա նորոգի անգուստ յանապականութիւն: (117 / 2; 117 / 6)

Արդ եթէ գերեզման եղև զգեցուցանող մարմնոյն Քրիստոսի, զանապականութիւն ասել պարտիս. թէ կամիս և թէ ոչ կամիս. նախկին ապականեալ զմարմինն ի գերեզմանին, որպէս պահանջէ իրացն թէ

բնութիւն, և ապա յետ այնորիկ փոխել նմա յապականութենէ յապականութիւն: (117 / 10; 117 / 12)

Եւ ոչ միայն այս, այլ զի ի սկզբան լինելութեանն նորին օրինակաւ գայ ի գոյացութիւն, պատճառ գոյացութեանն նախկին լուծանի յիրմէն պատճառէ, և ապա զկնի այսորիկ լուծեալ և յապականեալ իրէն առնու սկիզբն լինելութեան գոյութեան, որպէս և իմաստասէրն բնութիւն զի սկիզբն զայն անուանեաց ասելով, սկիզբն շարժման և դադարման, այսինքն, եթէ լուծանէ շարժեցաւ յայնմանէ, որ ինչ էրն և առնելով զգոյացութիւն կատարման, դադարեաց: (117 / 18; 117 / 19; 117 / 20; 117 / 22; 118 / 1)

Եւ եթէ մարդկան սերման էր բողբոջն Քրիստոս, հաւանէ՞ր արդեօք և զպտուղն ըստ բնութեան քատակել արմատոյն, իսկ եթէ ի Հոգւոյն սրբոյ է ըստ հրեշտակապետին ձայնի աստուած ծնեալն, զի Աստուած ծնելութեան առիթ: (118 / 12)

Աթանաս ասէ. «վասն զի մարմնանալն Քրիստոսի յանամուսնութենէ և առանց մեղաց էր, ոչ գտաւ ի նմա ապականութիւն, զի ոչ կարէ բնակիլ մահ ընդ կեանս, և ոչ ապականութիւն ընդ անապականութիւն բնակէ»: (118 / 17; 118 / 19)

Ընդէ՞ր դու, ո՛վ Թեոդիտէ, ի բաց բառնաս ի Տեառնէ զերկրայնոյն զմեծութիւն զօրութեանն և ոչ տայ թոյլ յաղթել հզօրին զտկարագոյնն և բարձրագունին զնուաստն, զորմէ ասէ Գրիգոր աստուածաբան. «խառնեցաւ ընդ Աստուածութեանն և եղև մի, վեհագունին յաղթելով»: (119 / 3; 119 / 4; 119 / 6)

Արդ ոչ է պարտ ժամանակի և գործոյ ծառայեցուցանել զՏէրն և զԱրարիչն ժամանակաց, և գործոց, փոփոխէ զժամանակս և զգործս ըստ իւրոց կամաց, իսկ ինքն նոյնպէս կայ մնար անփոփոխելի և անայլայլելի: (119 / 8; 119 / 9; 119 / 9; 119 / 10; 119 / 12)

Եւ դարձեալ ոչ է իրաւացի զերիս զայսոսիկ զանուանս շփոթել ընդ միմեանս և խառնակել, և ի ձեռն անարարողութեան դոցա անարժան սահման տալ ի վերայ պատուական և անարատ մարմնոյն Քրիստոսի, զի ոչ են մի և ոչ միոյ իրողութեան: (119 / 14; 119 / 15; 119 / 17; 119 / 18)

Քանզի չարչարելին ոչ է, և ոչ ասի չարչարանք, և մահկանացուին մահ, և ոչ ապականացուին ապականութիւն, քանզի չարչարելին բնութիւն բացայայտէ, իսկ չարչարանքն զներգործութիւն, և չարչարելին և առանց

չարչարանաց և միշտ ասի ի վերայ չարչարելոյն, իսկ չարչարանքն յորժամ չարչարին: (119 / 19; 119 / 20; 119 / 20; 120 / 1; 120 / 1; 120 / 2)

Եւ եթէ ասէ գնոյնս «Ոսկեբերանն Յոհան, «մահկանացու ասի մարմին, այլ ոչ մահ մարմին, և ապականացու ասի մարմին, ոչ ապականութիւն մարմին, քանզի մարմին այլ գործ եղև Աստուծոյ, իսկ ապականութիւն և մահի ի մեղաց ի ներքս մտին»: (120 / 6; 120 / 9)

Արդ մահկանացու չարչարելի ասի մարմինն Քրիստոսի որպէս և յայնժամ, նոյնպէս և այժմ և միշտ, իսկ զչարչարանս և զմահ, յորժամ կամեցաւ և ընկալաւ Տէրն ի մարմին իւր, յիւրում սահմանեալ ժամու, ընդ նմին և զայլ կիրս մարդկայինս, որպէս և ինքն իսկ ասէր, «ժամանակ իմ չև է հասեալ, իսկ ձեր ժամանակ յամենայն ժամ պատրաստ է», յայտ արար թէ մարդկան հանապազ և ամենայն ուրեք ակնկալութիւն է ընդունել զերկիւղ մահու և զվտանգ: (120 / 12; 120 / 13; 120 / 13; 120 / 13; 120 / 14; 120 / 16; 120 / 17; 120 / 20; 120 / 21)

Իսկ Քրիստոս ըստ առաջ սահմանեալն ժամանակի և յորժամ ինքն կամեր խոնարհել ի մարդկայինսն, և ոչ եթէ կիրքն կարող էին զհարաքանչիւրսն ի վերայ ածել մարմնոյն նորա զվտանգն, որպէս միոյ միոյ ուրուք ի մարդկանէ: (120 / 23; 120 / 24)

Այլ որպէս Յոհան Ոսկեբերան ասէ. «Յորժամ կամեր և թոյլ տար մարմնոյն իւրոյ, յայնժամ զգայր իմոյ կարեացն»: (121 / 4)

Եւ Աթանաս ասէ. «այժմ անձն իմ խոռվեալ է», այժմ ասէ, յորժամ կամեցաւ, և սակայն զէն ցուցեալ այլ ոչ եթէ զոչ են»: (121 / 8)

Եւ Գրիգոր աստուածաբան ասէ. «վաստակեցաւ և երկեաւ և արտասուեաց և քաղցեաւ և ծարաւեցաւ օրինօք մարմնոյն»: (121 / 17; 121 / 17; 121 / 18; 121 / 18)

Արդ այսպէս ամենայն սուրբ հարքն ըստ յառաջ նկատել ժամուն և ըստ իւրոց կամաց ասացին կրել Քրիստոսի զմարդկայինսն՝ զմահ և զայլսն, որպէս և ինքն ասէ. «զանձն իմ ոչ որ առնու յինէն, այլ ես կամովք իմօք դնեմ զնա, իշխանութիւն ունիմ դնել և իշխանութիւն ունիմ միուսանգամ առնուլ զնա»: (122 / 2; 122 / 4; 122 / 4; 122 / 7)

Եւ հարքն որ ասացին զՔրիստոս չարչարելի և մահկանացու և ստացական մարմնով և անչարչարելի և անմահականացու և անստացական

աստուածութեամբն, ոչ որոշաբար և ոչ ծննդենն ցարութիւնն զայսոսիկ ասեն, այլ ի վերայ միոյ մարմնացելոյ Բանին որ ի Հօրէ ասէին զերկոսին և հանապազաբար, որպէս և Կիրեղ ասէ. «Յետ անճառ միաւորութեանն թէ Աստուած ասացես զԷմմանուէլն, զմարմնացեալ Բանն, որ յԱստուծոյ Հօրէ, իմանամք, և եթէ մարդ ասացես, ոչ զայլ ոք, այլ զնոյն ինքն զմարմնացեալն վասն մեր զԲան Աստուծոյ իմանամք, և շօշափելի և տեսանելի եղեալ զանշօշափելի և զաներևոյթ Բանն և ոչ ուրոյն ի վերայ մարմնոյն զայս ասեմք, որ շօշափելին էր և տեսանելին»: (122 / 9; 122 / 9; 122 / 10; 122 / 10; 122 / 11; 122 / 12; 122 / 14; 122 / 15; 122 / 18; 122 / 21; 122 / 21; 122 / 22; 122 / 22; 122 / 24)

Եւ դարձեալ առանձնաբար զնուաստագոյնսն ասել ի վերայ մարմնոյն Քրիստոսի, ոչ կարես հեռանալ ի մտածութենէ բաժանողացն զՔրիստոս, և ոչ լինի մեռեալ վասն մեր Քրիստոս, և ոչ լինի մեռեալ վասն մեր Քրիստոս, այլ վասն իւրեան, որպէս ասաց Նեստոր, և ոչ լինի կամաւ ընկալեալ զմահ իսպիւն, այլ ի հարկէ և ակամայ եկեալ ի մեռանել: (123 / 7; 123 / 8; 123 / 10; 123 / 11)

Եւ ոչ են միայն այսոքիկ անուանք, որ հետևին մարմնոյն Քրիստոսի ի մարդկութենէս չարչարելի և մահկանացու զնա ասել, այլ ընդ սոքօք են և այլք յոլովք, այսինքն մարդկային և երկրային և բովանդակելի և շօշափելի և զգալի և տեսանելի: (123 / 14; 123 / 15; 123 / 16; 123 / 17; 123 / 17; 123 / 17; 123 / 18)

Արդ եթէ չարչարելին և մահկանացուն ցգերեզման և եթ ասացաւ զնմանէ և զկնի յարութեանն ոչ ևս ասցի, հարկ է ապա զկնի համբարձմանն անտեսանելի և անշօշափելի զնա անուանել, մանաւանդ թէ ոչ ասել զնա ո՛չ երկրային և ո՛չ մարդկային, որովհետև վախճանեաց զլինելն ի վերայ երկրի և զընդ մարդկան շրջելն, և անուանեալ զնա փոխանակ սոցա ամենեցուն իմանալի և անբովանդակելի և երկնային, զի յերկինս վարեցաւ, և յիմանալիսն երթեալ փառօք բազմի: (123 / 19; 123 / 20; 123 / 20; 123 / 22; 123 / 24; 124 / 2; 124 / 2; 124 / 4; 124 / 4; 124 / 5)

Եւ յանբովանդակելին ընդ Հօր բարձրացեալ նստի յաթոռ, այլ սակայն հանդերձ մարմնով, զոր էառ ի կուսէն, համբարձեալ և ոչ փոխեաց զնա յանմարմնութիւն, որպէս և ասաց Տէր Եփրեմ: (124 / 9; 124 / 10)

Յայտ է թէ լինելով Որդի յիմանալիսն անյեղի մարդկային մարմնովն, համարձակութիւն է մեզ և զանուանսն նշանակիչս բնութեանս կոչել ի վերայ

նորա համայն բարեպաշտարար Լորպէս աւանդեցին մեզ սուրբքն, այսինքն գնոսին զբնականսն անուանս հակառակաբար առնուլ ի վերայ Բանին Լմարմնոյն իւրոյ, զի եղիցին բնականքն ըստ բնութեանն Լհակասացեալն ըստ միաւորութեանն: (124 / 13; 124 / 15; 124 / 18; 124 / 19)

Ձի Լյայտնագոյնս ասացից, բնական է Աստուածն Բանի անչարչարելի Լանմահն զոյ Լխոստովանեալ եղև ի բարեպաշտից զնա չարչարանաց Լմահու համբերեալ, յաղագս ընդ չարչարելոյն Լմահկանացոյին միաւորելոյն: (124 / 20; 124 / 22; 124 / 22; 124 / 23; 124 / 24)

Եւ բնական է մարմնոյն չարչարելին Լմահկանացուն զոյ Լնոյն ինքն ստացեալ ունի Լզանչարչարութիւն Լզամահութիւն ընդ ձեռն առ անչարչարելի Լանմահ Բանն միաւորութեան: (125 / 1; 125 / 2; 125 / 2; 125 / 3; 125 / 4)

Այսոքիկ բարեկարգապէս ընտրողութեամբ Բանն տեսանելի Լշօշափելի ասացաւ ի Յոհաննէ, Լերկրային մարմինն յերկնից իջանել ասացաւ ի Պօղոսէ, Լնոյն ինքն ի Քրիստոսէ, որ հետևի այս նոցա ոչ ըստ բնութեան բանին, այլ ըստ յեղանակի միաւորութեանն: (125 / 6; 125 / 7; 125 / 9)

Ձի բնութեամբ Բանն զանտեսանելին ունի Լզանշօշափելին, որպէս սուրբն Բարսեղ ասէ. «բնութեամբ մարմինն Քրիստոսի մարդկային, իսկ միաւորութեամբ տնօրէնութեանն աստուածային», ի վերայ բերել սորա իրաւացի է Լզայն, վասն զի միով օրինակաւ տպաւորեալ գտանին առ ճշմարտութիւնն: (125 / 12; 125 / 16)

Բնութեամբ է փրկչական մարմինն չարչարելի Լմահկանացու, իսկ միաւորութեամբ տնօրէնութեանն անչարչարելի Լանմահ, սոքօք երկոքումբք, այսինքն է՝ բնութեամբ բանի Լմիաւորութեանս հիմնեցուցեալ Լհաստատեալ եղև եկեղեցի Քրիստոսի ի վերայ վիմին հաւատոյ՝ ընկալեալ յառաքելոցն տուչութենէ: (125 / 19; 125 / 21; 125 / 22; 125 / 23)

«Սա է որ կայ ի կանգնումն Լի գլորումն բազմաց Լի նշան հակառակութեան», որպէս ասացն Սիմէովն, ի սմանէ հրեայք գայթակղին Լյիմարին հեթանոսք, այս է որ առնէ զհերձուածողացն, զմոլորութիւն որպէս ասէ աստուածաբան անուանցն լծակցութիւն Լօտարութիւն լծակցելոցն անուանցն»: (126 / 3; 126 / 4; 126 / 6; 126 / 9)

Որպես յորժամ Տերն ասէ ցՄարիամ, «ելանեմ ես առ Հայր իմ և առ Հայր ձեր, և Աստուած իմ և Աստուած ձեր»: (126 / 12; 126 / 12; 126 / 12)

Ընդ ձեռն դերանունութեանն լծակցեաց, իսկ ներքս արկանելով զշաղկապն՝ բաժանեաց որպէս զի մի թուեսցի համագոյ գոլ նոցա միմեանց, և կամ յեղմամբ զմիաւորութիւնն ընդունելի նշանակութենէ դերանունութեանցն, շաղկապովն ազատեաց յայնպիսի կարծեաց: (126 / 16)

Զի թեպէտ ի մարդեղութենէ գլուխ եմ ես մարմնոյ եկեղեցոյ, և եկեղեցի անդամք յանդամոց իմոց և մարմին ի մարմնոյ իմոյ, այլ սակայն հանդերձ անփոփոխութեամբ տնօրինեալ ազգակցութեամբ՝ հարազատութեամբ, և ոչ փոփոխելի ինչ իրօք, զի իմ է Հայր ըստ բնութեան և ըստ անսկզբնական ծննդեանն, իսկ ձեր ըստ շնորհի որդեգրութեանն, և ես զնա կոչեմ ինձ Աստուած ի ձեռն անքակաբար միաւորեցելոյ ստացականիս, իսկ դուք ստեղծեալք ի ձեռանէ նորա, ըստ բնութեան էր նորա ստացուած, զոր օրինակ նա ձեր ըստ բնութեան Արարիչ: (126 / 21; 126 / 22; 127 / 3; 127 / 4; 127 / 6)

Բաց թէ զի՞նչ պետք էր մեզ ի ճանապարհ անկանել, զբանս մեր երկուք առաջարկութեամբք և առանձնաբար բազմացուցանել բանս ի վերայ մարմնոյն Քրիստոսի՝ իբրև ի վերայ գոյակցի և համաբուն եղելոյ Բանին, եթէ ոչ առ ի քէն բոնադատել ակամայ յանսովորականն հրամայեցաք ելանել բանիս մերում ասպարէս ըստ այլ և այլ ժամանակաց և ազգի ազգի անօրինականաց Փրկչին գործոց բազմաց ի ներքոյ եղեալ ընդէ փոխմանց գտերունական մարմին, զմի և զնոյն զՈրդին Աստուծոյ բաժանես ի բազում քրիստոսս և յորդիս բազումս: (127 / 13; 127 / 15; 127 / 18; 127 / 19; 127 / 22; 128 / 1)

Զի զինչ պարտ և արժանէ զգոյն սպիտակութեան ասուն առանձնակի յիշել, որ ներկեալ և ծածկեալ եղև գունով ծիրանոյն, և կամ գորակութիւն զցրտութիւնն և զթխութիւն երկաթոյն որոշաբար տրամաբանեալ, որ ամեննին արտաշիկացեալ և հրացեալ եղև ամեննին ի զօրութենէ անտի հրոյն: (128 / 2; 128 / 4; 128 / 4; 128 / 5; 128 / 7)

Ըստ այսմ օրինակի արարչական բանն ըստ ստացականի մշտնջենաւորապէս միացեալ ընդ մարմնոյն և ոչ մի գնորա թափուր թողեալ ի մասանց առ ի յիւրմէ զօրութենէն, այլ զբոլորն յիմանալոյն և ի զգալոյն շարադրեալ, իւրովն ելից աստուածային լրմամբն ըստ Պօղոսի ձայնին: (128 / 11; 128 / 13)

Յաղագս այնորիկ ոչ կարեր յիւրոց անտի բնականացն առանձնապէս յինքեան վերեւեցուցանել մարմինն և ոչ մի ինչ, այլ զորս մի անգամ Բանն Աստուած թողացուցանէր կրել նմա զիւրսն, որքան կամի և ուր և երբ և որպէս: (128 / 18; 128 / 20; 128 / 20; 128 / 20)

Այլ և ոչ բնութիւն կրկին ի Քրիստոս ասացի, ոչ դէմ, ոչ զօրութիւն, ոչ իմաստութիւն, ոչ կենդանութիւն, «զի խառնեալ, միացեալ և ընկղմեալ է մարմինն յաստուածութիւնն», ասաց սուրբն Գրիգոր: (128 / 21; 128 / 23)

Եւ աստուածաբան ասէ. «ոչ այլ ոք և այլ մի լիցի. վասն զի երկոքին մի խառնելովն Աստուծոյ մարդանալոյ և մարդոյն աստուածանալոյ, և այսոքիկ թէ յաղագս Քրիստոս երեկ և այսօր նոյն, և ոչ այլ ոք, և յաւիտեանս, և և տեսէք զի ես նոյն եմ»: (129 / 2; 129 / 4; 129 / 4; 129 / 5; 129 / 6; 129 / 6; 129 / 6)

Բայց սակայն և զայս զիտել արժան է, զի զամենայն, զոր միանգամ կրեաց Քրիստոս զմարդկայինսն, ոչ առանց աստուածային ներգործութեան զայսոսիկ կատարէր: (129 / 8)

Մի յերևելիս և և կայցես, մնասցես, այլ անբարձցիս մտօք յիմանալիսն, զի թէպէտ քաղցեալ ճշմարտապէս մարդկօրէն, այլ սակայն աստուածաբար ոչ կերակրով ի նմին ժամու զքաղցն բժշկեաց, զի ինքն էր Աստուած, միանգամայն և մարդ, որ զիտէր քաղցն լովն ոչ ճաշակել և ճաշակել առանց քաղցի ի պէտս փառացն Աստուծոյ: (129 / 16; 129 / 22; 130 / 1)

Անգիտանայր զօրն և զժամ կատարածի մարդկօրէն, և որպէս Արարիչ ժամանակաց ստուգապէս զիտէր, որ ինչ ի նոսա լինելոցն էր, վաստակէր յուղեգնացութեան, այլ վերաքայլէր թեթևաբար ի վերայ ծովուն, և ի գահավեժն առնել, թռուցեալ, ելանէր ի միջոյ նոցա: (130 / 3; 130 / 4; 130 / 8)

Ասացես զնուաստագոյնսն, և զբարձրացուցանողօքն մի՛ զանց առնէր: (130 / 10)

Խոստովանեա՛ կրել զմարդկայինսն, և ի վերայ բեր կամօք զայն կատարեալ» և մի՛ զնոսին զկամաւոր զկիրս ապականութիւն ի նմա իմանայր, այլ մարդասիրութեան կարեկցութիւն: (130 / 12; 130 / 13)

Չհոգւոյն զբանն հաւատարմացո՛ ի մի՛ զքո մտածութիւնդ, ոչ մեղանչել ասաց և ոչ մարմնոյն ապականել և ոչ հոգւոյն ի դժոխս ըմբոնիլ, և ընդ ձեռն սոցա զբոլոր նորա կիրսն մարդկայինս ի ներքո արգելեալ փակեաց: (130 / 21; 130 / 22; 130 / 23)

Եւ սակայն էջ ի դժոխս, ոչ թողեցելով յինքենէ մարդկային հոգւովն յաւարել գնա և ոչ ընդ նովաւ զհարն արկանել մարդկային հոգի: (131 / 3)

Եւ եղաւ ի գերեզմանի ընդ ձեռն անքակաբար միաւորեցելոյ իւրոյ մարմնոյն, ի խափանել զապականութիւն և ոչ ընդունել գնա: (131 / 6)

Զի որպէս նոցա ի տեղիսն իջանելով հրաշագործեաց ի մեզ զփրկութիւնն, ինքն ազատ մնացեալ, ըստ նմին օրինակի զայլ տնօրինականսն յանձն առնլով և անարատ ի նոսա մնալով, գնոսա ի մենջ վերացոյց: (131 / 12)

Օրինակ իմն որպէս ճարտար բժիշկ մտեալ առ վտանգեալսն ի մահաբեր դեղոց խառնէ ընդ մահաբերականսն դեղս կենդանացուցիչս՝ յորմէ հալածեցան և լուծան ի մահու դեղոցն զօրութիւնք և ընդ ձեռն իւր գնա ճաշակելոյն, ամենեքին յանցնիւրոցն բուժեցան վտանգից ախտացեալքն: (131 / 17; 131 / 18)

Ըստ այսմ օրինակի միացեալ անքակաբար Բանն Աստուած որ ընդ իւրում մարմնոյն, որ ի մենջ ծախեաց և ի բաց էբարձ ամենակարող իւր զօրութեամբն զվտանգեցուցիչսն մարդկային բնութեանս, որպէս և Պօղոս ասէ. «սպան զթշնամութիւն ի մարմնի իւրում» և վասն մահուանն, որ զմեզ յապականութիւն քարշել արկանէր, այսպէս ասէր, թէ «որ կայրն մեզ հակառակ, էբարձ գնա ի միջոյ և բնեռեաց գնա ընդ խաչափայտին»: (131 / 23; 132 / 2; 132 / 4; 132 / 7)

Եւ տեսանելով մեր մեռեալ գմահ, որպէս Մովսէսի օձահարքն զանշունչ օձն տեսանելով ի վերայ փայտին, բժշկեալ լինէին, և նովին օրինակեալ ուսցուք: (132 / 10)

Զմտաւ ա՛ծ զճնունդն Քրիստոսի զբարեպաշտութիւն. զի թէ ճնունդն յապականութեան սերմանէ լեալ էր, զոյր ասէր նովին ապականութեամբ զբոլոր կենցաղավարութիւնն իբր կատարեաց Քրիստոս ի վերայ երկրի, այլ որպէս Աթանաս ասէ. «ոչ ինչ կարէ ապականել զոգի և զմարմին, բայց մեղք: (132 / 17)

Եւ վասն զի մարմնանալն Քրիստոսի յանամուսնութենէ և առանց մեղաց էր, ոչ գտաւ ի նմա ապականութիւն, զի ոչ կարէ մահ բնակել ընդ կեանս, և ոչ ապականութիւն ընդ անապականութիւն բնակէ»: (132 / 20; 132 / 22)

Եւ քանզի մեր ճնունդն յապականութեան սերմանէ է, ընդ ամենայն կեանս մեր խառնեալ են սոքա երեքին, մեղք և ապականութիւն և դժոխոց իշխանութիւն, և երեքեան սոքա ի միում տեղոջ ի վերայ եկեալ մարտնչին բնութեան: (133 / 3; 133 / 4; 133 / 4)

Այլ ամենայն ուրեք և յամենայն ժամ և յամենայն իրս և ի խորհելն և ի խօսելն և ի գործելն, որով ապականեալ են, ասէ, միտք և խորհուրդ իւրեանց, եթէ «գուցէ ապականեցին միտք իւրեանց ի միամտութենէն որ ի Քրիստոս», և եթէ ապականեաց ամենայն մարմին զճանապարհս իւր ի վերայ երկրի. և եթէ «ապականեցան և պղծեցան յապականութեան իւրեանց»: (133 / 7; 133 / 7; 133 / 7; 133 / 8; 133 / 8; 133 / 9; 133 / 12; 133 / 13; 133 / 14)

Եւ բազում ինչ այլ որ սոցին նման, յորոց և ոչ զմի ինչ յայսպիսեաց անտի յանձն իւր ընկալաւ Քրիստոս: (133 / 16)

Եւ յաղագս այնորիկ ասացաւ, թէ «մեղս ոչ արար, և ոչ թողաւ ոգի նորա ի դժոխս, և ոչ մարմին նորա ետես զապականութիւն»: (133 / 19; 133 / 19)

Ծնող են հոգի և մարմին մեղաց, մինն ցանկանալով և խորհելով և միւսն գործով կատարեալ զառ ի նմանէ խորհեցեալսն, և ծնեալ ի նոցանէ մեղք դառնայ ապականէ զիւր ծնողսն: (133 / 21; 134 / 1; 134 / 2; 134 / 3)

Զօր օրինակ փայտ ընդ փայտ շփել հուր ծնանին և անդէն ծախին ծնողք ի ծննդոյն իւրեանց: (134 / 6)

Արդ յղանան միտք զմեղս ի զգալեաց անտի սերմ ընդունելով, զգայութեամբքս զցանկալն, և յղացեալն ծնանի գործակցելով մարմնոյն զմեղսն, իսկ ապա ծնեալ ի նոցանէ մեղքն դառնայ և արկանէ յերկաքանչիւրոցն վերայ զապականութիւն, և զայն կրկնակի, զոմն յառաջ և զոմն յետոյ: (134 / 9; 134 / 11; 134 / 13; 134 / 13)

Նախկին ապականեալ լինի հոգին անտեղի և դժնդակ ցանկութեամբն, որ զինքն իշխանական զառաջին փառսն մերկացեալ իբր աղախին չար տիկնոջ ի ծառայութիւն զինքն տալով ախտին, իսկ յետոյ կրէ զապականութիւն հոգին յապաշաւանաց անտի, որ ի վերայ անկանի յուսահատութեամբն տրտմութիւն, իսկ մարմին ընդունի զապականութիւն, նախկին թաւալելովն ընդ տիղմն չարեաց, իսկ յետոյ զլուծմանն որ հասարակաբար պատահեաց մեղուցելոցն և ոչ մեղուցելոց: (134 / 15; 134 / 24)

Եւ զի կարող է ցանկականն մասն հոգւոյս մերոյ յերկոսին դառնալ հակամիտութեամբ և առ չարն և առ բարին, որպէս և Սնէրիանոս ասէ Գաբաւեայ եպիսկոպոս. «հոգի և մարմին ծառայ են կարեաց, որ ի մեղսն տանիցին և այնց կարեաց որ արտաքոյ քան զմեղսն իցեն»: (135 / 3; 135 / 3; 135 / 4; 135 / 5; 135 / 6)

Եւ Տէրն ընկալաւ զկարիս զայնս՝ զհոգեկանս և զմարմնականս, որ արտաքոյ մեղացն: (135 / 9)

Եւ որք ոչն են ընկալեալք ի Տէառնէն, ընդէ՞ր և անուանես. թէ յիշես զմինն ի նոցանէ ի մարմինն Քրիստոսի, յիշեալ լինիս զերեսին, զմեղս և զապականութիւն և դժոխոց իշխանութիւն, ընդէ՞ր ժամանակացն փոփոխմամբք, փոփոխելի առնես զՔրիստոս: (135 / 14; 135 / 16; 135 / 16)

Զմէ՞ զանազան գործոցն որ ի նմանէ գործեցան, զանազանես և զգործողն: (135 / 20)

Էառ յանձն ի խաչին զխոցումն զեղարդեանն և զբնեռացն վերս. ընդ Եսայեայ վերաձայնեա «նորա վիրօքնբժշկեցաք»: (136 / 2)

Տեսեր, զնոյն իմա և յետ յարութեանն» ասասցես և դու ընդ Թումայի «տէր իմ և Աստուած իմ», և զիտեա թէ ընդ ձեռն վիրացն զխաչն և զգերեզմանն ընդ իւր տարեալ եցոյց մարդկան. զի ազատեսցէ ի չար կարծեաց զայնոսիկ. որք զչարչարանսն և զմահն, որ վասն մեր, ապականութիւն լինել ասէին ի նմա: (136 / 4; 136 / 5; 136 / 5; 136 / 6; 136 / 7; 136 / 9)

Տես զնա ի վերայ խաչին և հաւատա, որ հրամայեացն քեզ ասել, և ասա. «ահա տեսաք զկեանս մեր կախեալ զփայտէր»: (136 / 15; 136 / 16)

Թող զհայիոյիչ աւազակն և ծանիր զնա տէր գոլ երկնից արքայութեանն ընդ միւսոյ աւազակին, և հայցեա ընդ նմա արքայութիւն: (136 / 18; 136 / 19)

Լուար ի նմանէ յետ յարութեանն, «տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս և յերկրի», յիշեա զնոյն յառաջ քան զյարութիւնն ասացեալ ի նմանէ, «ամենայն ինչ տուաւ ինձ ի Հօրէ իմմէ, և զամենայն զոր ունի Հայր, իմ է», և թէ «զամենայն դատաստանս ետ Որդոյ իւրոյ». լուար Աստուած Աստուած իմ, ընդէ՞ր թողեր զիս», ի միտ առ, զի ոչ վասն իւր, այլ ընդ մարդկան մարդ եղեալն վասն մարդկան զայն ի մաղթանս Հօրմատուցանէր, զի նա նոյն է, որ ասաց. «ես ի Հայր և Հայր յիս», և թէ՛ «չեմ միայն այլ Հայր իմ ընդիս է», և թէ՛ «Հայրն որ յիս բնակեալ է, գործէ զգործն» ըստ այսմ իմասցիս և զայն, «Հայր փառաւորեա՛ զորդի քո առ ի քէն փառօքն, զոր ունէի յառաջ քան զլինելն աշխարհի: (137 / 6; 137 / 9; 137 / 9; 137 / 16; 137 / 16; 137 / 17; 137 / 19)

Ընդ ձեռն իւր խաչելութեանն զգեցուցանել ազգի մարդկան զփառս աստուածեղէնս, կատարեսցի այն և ի գլուխ ելցէ՛ եղև մարդ, զի արասցէ Աստուածս զորդիս մարդկան: (138 / 4)

Ծնաւ այր ի կնոջէ առ ի փոխարինել զպարտս առաջնոյն Ադամայ կին յառնէ ծնեալ, այլ և զախտաւոր խառնիցին խափանել զորդեծնութիւն, ծնանելով ի կուսէն: (138 / 7)

Աճեաց հասակաւ, զհակառակն աճելութեանս արտաքս մղեաց և ի բնութենէս զնուագութիւնս, կատարելահասակս զմեզ նորոգելով յանվախճան կեանսն: (138 / 11)

Յանձն էառ կերակրօք և ըմպելեօք սնանիլ, ընդ ձեռն որոյ մեզ զհոգեկան կերակուրսն ջամբեցուցէ ի հանդերձեալսն: (138 / 13)

Փորձեցաւ և յաղթեաց փորձողին, որ զուարճանայրն նախահայրն յաղթել կարացել ի փորձելն: (138 / 16)

Քաղցեաւ և ժուժկալեաց՝ բժշկելով զանժամ ցանկութիւնն ճաշակելոյ նախամօրն, յորմէ պատուիրանագանցութիւնն. ծարաւեցաւ, և նովաւ պարգևեաց մեզ զջուրն կենդանութեան. աշխատեցաւ, զի բարձցէ ի մէնջ զտարժանաւոր կենացս այսոցիկ զհայթայթանս. ննջեաց և արթնութեամբ հրամանատրէ հողմոց. անգիտացաւ, զի զգեցուցանելոց է անմոլար առ ի յապա զգիտութիւն բնութեանս: (138 / 18; 138 / 21; 139 / 3)

Քաղցեաւ և լեղիճաշակեաց, փոխանակ այնորիկ, որ քաղցրութեանն պտղովն զդառնագոյնս զայս թեթն ի մեզ սերմանեաց կեանս: (139 / 17)

«Կախեցաւ զփայտէ, յօրինացն անիծից դնելով զմեզ», որպէս և Պօղոս ասէ: (139 / 22)

Մեռաւ և մեռոյց մահուամբ իւրով զմերն մահ: (140 / 2)

Թաղեցաւ յերկրի և զիւր եղեալ հրամանն իւրով յարութեամբն խափանեաց, թէ «ի հող դարձցիս» Ամբարձաւ փառօք առ Հայր յերկինս և զալոց է նովին մարմնովն և փառօք Հօր, որով իջեալ մարմնացաւ ի կուսէն: (140 / 3; 140 / 6; 140 / 7)

Եւ որպէս ասէրն Թեոդիտէ, թէ ի գերեզմանէն յառաջ արժանի եղև զփառսն զգնուլ, զնոյն փառսն երևեցոյց աշակերտացն ի Թափով լերինն, նովին փառօք երևեցաւ աշակերտացն ի նմինն լերինն յետ յարութեանն, նովին փառօք Հօր զալոց է ի վախճանի դատել զկենդանիս և զմեռեալս: (140 / 15)

Յաղագս նորին և զվերս երևեցոյց յետ յարութեանն, այլ և յերկրորդ յիրում գալստեանն ցուցանելոց է, զի հաւատացուցէ զաշխարհ. թէ ես «նոյն եմ և ոչ երբէք փոփոխիմ» որպէս և ինքն ասաց, թէ «ոչ ոք էլ յերկինս, թէ ոչ՝ որ էջն յերկնից՝ որդի մարդոյ, որ են յերկինս»: (140 / 16; 140 / 17; 140 / 19; 140 / 20)

նոյնպէս ճաշակեաց յետ յարութեանն և ի ժամ համբարձմանն. որպէս և յառաջ քան զյարութիւնն ճաշակեաց, զի յամօթ արասցէ զնոսա, որք ասենն, թէ նախ քան զյարութիւնն կարօտական ունէր մարմին, և ընդունող մարդկայնոց կրից և ապականութեանց և յետ յարութեանն յանկարօտութիւն փոխեցաւ: (141 / 3; 141 / 4; 141 / 7; 141 / 8; 141 / 9)

Ճաշակեաց յառաջ և յետոյ և եցոյց, թէ ըստ պիտոյից փրկութեան մարդկան, և ոչ ի կարօտութենէ, տնօրինեմ զքաղցնուլն և զճաշակելն: (141 / 10; 141 / 10; 141 / 11; 141 / 12)

Ապա թէ ոչ պարտ էր ըստ զանազանութեան որ ի մարմին, որպէս թուեցաւ ոմանց ասել, զանազան առհաւատչեայ բանից և գործոց յիրաքանչիր ժամանակս ցուցանել յինքեան, առանց վիրաց և անսպի լինել, և ոչ պիտոյանալ կերակրոյ և ոչ ումեք կարել արկանել ի նա ձեռս և լուսաւոր փառօք զայլակերպութիւն զգենուլ և կեանք և կենդանացուցիչ զիրն անուանել մարմին և ասել, «որ ետես զիս՝ ետես զՀայր իմ», և «ամենայն ինչ տուաւ ինձ ի Հօրէ իմմէ», և որ սոցին նմանք, ամենեքեան առհաւատչեայ բանից և գործոց: (141 / 16; 141 / 17; 141 / 18; 141 / 18; 141 / 19; 142 / 1; 142 / 2; 142 / 3; 142 / 4; 142 / 5; 142 / 6)

Զի անապականի և միատրեցելոյ ընդ աստուածութեանն մարմնոյ և վայելէ ամենայնիւ վերջնում, որ զկնի յարութեան ժամանակն դէպ էր լինել, իսկ վերքն զեղարդեանն և բեւեռացն սպիք և կերակուր ճաշակել և հարցանել անգիտաբար և որ այլ ինչ սոյնպիսաբար, յորմէ զայթակղին կիսահաւատք, յառաջնումն ժամանակին, որ նախ քան զյարութիւնն պարտ է լինիլ. իսկ եթէ հասարակաբար առհաւատչէի յերկոսին ժամանական վարեցաւ մի և նոյն տէր մէր Յիսուս Քրիստոս, ոչ է պարտ զնա ասել փոփոխելի կամ այլայլելի, որպէս և Գրիգոր սքանչելագործ ասէ, «զի՞ արդ ասիցէ որ փոփոխելի կամ այլայլելի զՔրիստոս. իւր Տեառն ասացեալ է «ես նոյն եմ և ոչ փոփոխիմ», եթէ «ոչ ոգի նորա թողաւ ի դժոխս, և ոչ մարմին նորա ետես զապականութիւն»: (142 / 7; 142 / 8; 142 / 10; 142 / 11; 142 / 11; 142 / 12; 142 / 17; 142 / 19; 142 / 22; 143 / 1)

Եւ դարձեալ՝ զի ա՞րդ որ ասէ, այլ է և որ չարչարեցան, և այլ է որ ոչ չարչարեցաւ, իւր Տեառն ասացեալ է, «ոչ որ էլ յերկինս, եթէ ոչ որ էջն յերկնից Որդի մարդոյ, որ էն յերկինս»։ և եթէ «տեսանիցէք զՈրդի մարդոյ, զի ելանիցէ ուր էր գառաջինն» և եթէ «տեսցեն զորդի մարդոյ եկեալ փառօք Հօր և զօրօք հրեշտակաց»։ (143 / 3; 143 / 3; 143 / 7; 143 / 8; 143 / 9)

Եւ դարձեալ ասէ թէ ի փորձանս իւրում Տէրն ոչ զաստուածային մարտն առաջի արկանէր, այլ զիւր մարմինն մահու և ախտից և ապականութեան յաղթող ցուցանելով։ (143 / 13; 143 / 13)

Եւ սուրբն Գրիգոր ասէ. «միացաւ ի մարմնի բնութեամբ, և խառնեաց զմարմինն իւր աստուածութիւնն, զապականացու մարմինս խառնեաց յանապական աստուածութիւնն, զի զբնութիւնս մեր անապական արասցէ»։ (143 / 15)

Եւ դարձեալ ասէ, «թէպէտ վիրաւորեցաւ և համարեցաւ ընդ ննջեցեալսն ի գերեզմանս առ ի բառնալոյ զմեղս և բժշկելոյ զարարածս իւր, այլ առանց օգնականի և ի մեռեալս ազատ. զի միայն և անձառայական անձամբ մեղացն սպան, զօրացեալ մահ զաշխարհ եկեր, և եհատ զամենայն արտօսք յամենայն երեսաց։ (143 / 20; 144 / 2; 144 / 3; 144 / 4; 144 / 6)

Վասն այսորիկ և ասացեալն կատարէր, «ոչ թողցես զանձն իմ ի դժոխս, և ոչ տացես սրբոյ քում տեսանել զապականութիւն», զի զգեցեալ և միացեալ էր զմարմինն բանն, որ վեր է քան զբնութիւն մարդկան։ (144 / 7; 144 / 9; 144 / 10)

Վասն որոյ եղև մարմին նորա, որ մահկանացուն էր՝ անմահ, և յաղթահարեցաւ մահ ի բնութեան մարմնի մահկանացուի, զի բանին Աստուծոյ կեանք թագաւորեցեն ի մարմինն յայն։ (144 / 13)

Եւ տէր Եփրեմ ասէ. «վասն զի ի մահն Քրիստոսի մկրտութիւն ի թողութիւն մեղաց, և ի մարմնոյ յարութիւն՝ մեռեալ լինի, որ է աստուածութեան գործ և ոչ արարածոյ բնութեան»։ (144 / 19; 144 / 20)

Եւ տէր Զենոբ ասէ. «կենարարն մահկանացու եղև և զանմահական բնութիւն զիւր ոչ կորոյս, և յայն որ յաւիտենիցն է՝ ծնաւ ի կուսէն և ոչ հատաւ ի նմանէ իսկութիւնն յաւիտենական, և ոչ ասեմք թէ մահն մարմնոյն միայն էր, որպէս և ոչ ասեմք, թէ կեանքն Բանին միայն էին։ (144 / 22; 144 / 23; 145 / 1; 145 / 2; 145 / 4)

Եթէ կեանք Բանին և մարմնոյն, և եթէ մահ Բանին և մարմնոյն, եթէ փառք Բանին և մարմնոյն, և եթէ անարգանք՝ Բանին և մարմնոյն, և եթէ յաւեժ

կենդանություն

մշտնջենաւորական՝

Բանին և մարմնոյն: (145 / 5; 145 / 5; 145 / 6; 145 / 7; 145 / 7; 145 / 7; 145 / 8; 145 / 9)

Եւ եթէ այս այսպէս ոչ իցէ, ոչ միմիայն անուն շրջեսցի յամենայն տեղիս, զինչ հարկ էր գալ լուսոյ աստուածութեանն և զգենուլ մարմին կուսածին և զրկեալ յաւիտենական լուսոյն երկրածին ծննդեանն փոխամար: (145 / 12; 145 / 13)

Եւ սուրբն Եպիփան ասէ. «Ամենայն ինչ կարողութիւն է Աստուծոյ, և զմահկանացուս փոխել յանմահութիւն, և որ ի վերայ երկրի է, կատարել յանապականութիւն, զի զայս եկն ցուցանել և եցոյց, առեալ յապականելի բնութենէս և զգեցեալ աստուածութեամբն, ցուցեալ անապականելի: (145 / 16; 145 / 17; 145 / 19; 145 / 20)

Սորա ամենեքեան սուրբ հարքս կաթողիկէ և առաքելական եկեղեցոյ վերատեսուչք, որք յիրաքանչիւր ժամանակս հալածեցին զչար գազանս յեկեղեցոյ Աստուծոյ, անվիրաւորելիս և անվարատելիս պահելով զհօտ Քրիստոսի, զոր ապրեցոյց պատուական արեամբն իւրով, և քարոզեցին յընդհանուր տիեզերս քրիստոնէից իբրև միով փողով բարբառովն իւրեանց զայս զանբիծ և զուղղափառ խոստովանութիւնս հաւատոյ, զոր ի վերոյ սակաւութիւն յիշատակեցաք ի բազմաց ի թղթիդ մերում» իսկ Թեոդիտէ ոչ զիտեմ, թէ յորո՞ց վարդապետաց կամ յորո՞ց հարանց ուսաւ ասել զհայեցողութիւնս ի վերայ Որդւոյն Աստուծոյ Տեառն մերոյ: (145 / 23; 146 / 1; 146 / 3; 146 / 6)

Բայց դու, ո՛վ հայր պատուական, հիմն և հաստատութիւն եկեղեցոյ, մի բացցես զլսելիս քո այդպիսեաց մոլար վարդապետութեանց բանի, զի դու ժառանգ գտար ճշմարտութեամբ հարանց ուղղափառաց և նոցին խաղաղասիրութեանն եղեր նախանձաւոր. սկիզբն արարեր ի մարդիկ սերմանել զխաղաղութիւն, զոր անկեաց Հոգին սուրբ ի մէջ հաւատացելոց: (146 / 14; 146 / 18)

Եւ մի զարմանար, թէ ընդ քո սուրբ աթոռովդ և քոյին ուղղափառութեան գաւազանաւ գտանի թագուցեալ զայլ գառն կերպարանեալ, զի ի միում բարի ձիթենոջ պտուղք պարարտք. և ազագունք. յընտիր մշակացն սերմանէ բարի որ սերմն, իսկ որումն ինքնաբոյս եղեալ խառնի ի ներքս: (146 / 22; 147 / 2)

Այսպէս և Դիողրէփէ և աշակերտ՝ միանգամայն և թշնամի Յովհաննու, և Քրիստոս ինքն երկոտասանսն ընտրեաց, իսկ մին ի նոցանէ եղև սատանայ: (147 / 5; 147 / 5; 147 / 6; 147 / 6)

Բայց սակայն պարտ և արժան է յայտնել և ցուցանել, թե զլուխ բոլոր անդամոցս քն հանդերձ յառողջութեան է, և մինն միայն ի մենջ էր անդամ, որ վիրատրեալ գտաւ: (147 / 9; 147 / 10; 147 / 11)

Եւ մի լիցի քեզ թիրեցելոյն լինել թիրակից, որ սկսարդ լինել խնորոզ ուղղութեան և բարեպաշտութեան. թէ արդեօք ո՞չ են կամք քեզ հատանող բանիւ կտրել և ի բաց ընկենուլ զնա, զորմէ բանքս են, և կամ որ ընդ նմա իցեն, այլ սակայն ըստ ասանդութեան եկեղեցւոյ ըստ սինհոդոսական կարգի և սովորութեան հասարակական սահման գրով հանդերձ արձանացուցանել հարկաւոր է, և զընդունելութեան և զհրաժեշտին: (147 / 17; 147 / 19; 147 / 21; 148 / 2; 148 / 4; 148 / 4)

Մի գարմանար, Տէր իմ, թէ ի հեռաւորաց և յանձանօթից մօտեցայ և ծանօթացայց, այլ առաւել զուարհացիս իբր ի Հոգւոյն սրբոյ առաքեալ, մատուցանել ձեզ զօգուտն, զի այսպէս և երբեմն զՅովսէփ ի Քանանացոց աշխարհէն կերակրիչ ձեր, պատրաստ է լինել Եգիպտոսի և Փարաւոնի, ծածկեալ իրաց ընծայել զգիտութիւն, զի և Արարիչն մեր զմեզ ոչ վասն անձանց, այլ առաւել ևս յընկերին ստեղծեալ հաստատեաց պէտս: (149 / 10; 149 / 10; 149 / 13; 150 / 1; 150 / 3)

Եւ զի այս այսպէս է, ոչ է պարտ, ով բարեսէր, նմանեալ այնոցիկ, որ զանձնահաճութեան ախորժեցին ստանալ զանուն, որ, կարծեն միայն զինքեանս յամենից գոլ ընտրեալս և պատուականս, և զիրեանցն և եթ սիրել արդարացուցանել զմտածութիւն և զգործ, աւաղեալք ի մարգարէն. «վայ այնոցիկ, ասէ, որք զանձինս առ իմաստունս ունիցին և յաչս անձանց խորհրդականք»: (150 / 9; 150 / 10; 150 / 10; 150 / 11; 150 / 13)

Եւ յաղագս այնորիկ զբարեբանիչս իւրեանց ձգեն ի վեր և ի բարձրագոյն տեղի բարեկամութեան, իսկ զյանդիմանիչն ի դրունս, աստեն աստելութիւն կատարեալ, և զբանս սուրբս պիղծ համարին լինել, զի ոչ եթէ զօգտակար բանս իւրեանց և որ առ Աստուած տանիցին, հայցեն զնել ի բերան զհոգեկան կերակուրն, այլ զոր ինչ ախտացելոցն ախորժել միտք ընդունել, իսկ որոյ ծաղկեալ են ալիք իւրեանց և զերկիւղածութեան զգեցեալ ձև և անուամբ վարդապետութեամբ պայծառացեալ, վտանգ մեծ է ակն առնուլ վասն երեսաց, վասն օգտի թիրել զիրաւունս և արբուցանել ընկերի իւրում հրապոյր պղտորս և ասել զլոյսն իսաւար և զիսաւարն լոյս, և ոչ լինել բերան Աստուծոյ՝ հանելովն զանարգն ի

պատուականն: (150 / 16; 150 / 18; 150 / 20; 151 / 4; 151 / 5; 151 / 8; 151 / 9; 151 / 9; 151 / 10)

Արդ թողլով զայս այժմ դիցուք առաջի փոքր մի զանցելոց իրաց պատմութիւն վասն երկուցս այսոցիկ արանց Սներեայ և Յուլիանեայ, որք յիրերաց անարգեալք և խոտեալք, կարգեցին ի մէջ իւրեանց անխախտելի արձան թշնամութեան: (151 / 14; 151 / 15)

Ի ժամանակս Յուստիանոսի կայսեր, որ թագաւորեաց զկնի Ջենոնի և Անաստասայ, և խորհեցաւ նորոգել զժողովոյն Քաղկեդոնի սահնանն, զոր Ջենոնի և Անաստասեայ խափանեալ էր: (151 / 19; 151 / 20; 152 / 1)

Եւ իբրև ել հրամանս այս ի թագաւորէն յաշխարհ, ամենեքին, որք միանգամ ընդունէին զժողովոյն Քաղկեդոնի, եպիսկոպոսունք, պաշտէին զիւրաքանչիւր աթոռ, իսկ որք ոչ հաւանէին ընդունել, թողին զաթոռս իւրեանց և ի բաց գնացին, ընդ այլս ոմանս և Սներիոս, որ պատրիարզն էր Անտիոքայ Պիսիդեայ, և Յուլիանէ Ադիկատնէ քաղաքի եպիսկոպոս, անհնազանդ եղեալք հրամանաց թագաւորին, թողին զքաղաքս իւրեանց, և գնացին, դադարեցին մերձ ի քաղաքն Ադէքսանդրի ի կողմանս Եգիպտոսի Ապա յետ ժամանակի թշնամութիւն ինչ վասն հաւատոյ անկեալ ի մէջ նոցա, բաժանեցան ի միմեանց: (152 / 7; 152 / 8; 152 / 9; 152 / 12)

Ջի Յուլիանէ ասէր» «պարտ է զմարմինն Քրիստոսի անչարչարելի ասել և անմահկանացու ի ծննդենէն որ ի կուսէն մինչև ցլաւիտեան, քան զի չարչարելի և մահկանացուն ասել, գտանի զնա ասացեալ ապականացու, ընդ ձեռն որոյ հարկաւոր է ապա և երկուս բնութիւնս ասել»: (152 / 18; 152 / 20; 152 / 22)

Իսկ Սներիոս ասէր. «Ոչ, այլ պարտ է չարչարելի և մահկանացու ասել զմարմինն Քրիստոսի ի ծննդենէն մինչև ցլարութիւնն, զի այսոքիկ և զկնի յարութեանն հետևեալ լինին մարմնոյն Քրիստոսի, զի թէ անչարչարելի և անմահկանացու մարմին ունէր մինչև ցլարութիւնն, գտանի եղեալ սուտ մարդեղութիւն նորա և զմարդկայինսն կատարեալ առ աչօք և ոչ ճշմարտութեամբ: (153 / 2; 153 / 4; 153 / 6; 153 / 8; 153 / 9)

Այսպէս երկոքին սոքա երկուք այսոքիւք բանիւք մարտուցեալք ընդ միմեանս, ոչ մերձենային յաստուածային գիրս իբրև յաղբիւրս լուսոյ, որ լուսաւորելն կարէ զմտացն աչս, առնուլ ի նոցանէ այր ընկերի իւրոյ զնպատակ յաղթութեան, այլ իւրաքանչիւր ոք յանձնահաճութեան համբարձեալք կառս, զոր

կործանի ի միմեանց, սաստել սաստեցին անձանց իւրեանց և ճշմարտութեանն, և սասանեալք եղեն յուղղափառութենէ առաքելական հաւատոյն, և միանգամայն, ասել երկոքին ի ձեռն իրերաց գանկանգնելին գլորեցան գլորումն: (153 / 18; 153 / 19; 153 / 20)

Եւ կացին մնացին յայս գրի Մ. ամ սակաւ կամ աւելի, ի նմին կործանման եղեալք անբժշկելիք և անողջանալիք: (154 / 3)

Եւ նստեալ իւրաքանչիւր ոք առանձինն ազգածինք և ցեղապետք՝ յիւրեանց անուն զանունն Քրիստոսի փոխեցին, անուանելով զհաւանեալսն իւրեանց Յովիանիստ և Յակոբիկս: (154 / 5; 154 / 7)

Յակոբ՝ ոչ որ Մծբնայ քաղաքին եպիսկոպոսն էր, այր հանճարեղ և կորովաբան, որ ի կենդանութեան իւրում զբազում հերետիկոսաց էխից զբերանս և կապեաց զհայիոյիչ նոցա լեզուս, և զկնի վախճանին եթող յիշատակարան անձին բազում գրեան իմաստութեամբ զարդարեալս և ծաղկեալս: (154 / 9; 154 / 11; 154 / 12; 154 / 14)

Այլ և սա այն է, զոր Յակոբ կոչեն, որ ոչ եթէ ի պետս եկեղեցոյ եղն ձեռնադրեալ եպիսկոպոս, այլ միաբանեալ ընդ Սներեայ ձեռնադրեցաւ ի նմանէ ի պետս արքանեակութեան անուանս թերիս այսմիկ, որ մեծաւ երազութեամբ ընթացեալ ծագէ ի ծագ ընդ բոլոր աշխարհս Ասորաց ելից զամենայն տեղիս սարկաւազօք և քահանայիք, դնելով նոցա բանս ի բերան, կոչել ի վերայ իւրեանց զանուն Յակոբայ և խոստովանել զհաւատն Սներեայ: (154 / 15; 154 / 22; 155 / 1)

Չոր ապա յետ այսորիկ փափագեցին երկոքին կողմանքն անուամբ մեծին Գրիգորի խոստովանողին Քրիստոսի խառնեալ զսուրբ անուն նորա ընդ անուանս աղանդահարցն իւրեանց, քաղցրութեան մեղու օծանելով զսպանող դեղս, և զաղտեղի գոյն գունեալ և պաճուճեալ գունով սպիտակութեան: (155 / 8; 155 / 8)

Եւ համայն ոչ հաւասարապէս որպէս անուանն ցանկացողք հրաշալւոյն Գրիգորի, ընդ նմին և խոստովանութեանն այլ ըստ օրինակի Շամրտացոցն երկիր պագանէին աստուծոցն իւրեանց, և պաշտէին զԱստուածն Իսրայէլի, զի չէ իսկ հնար ի փշոց խաղող և ի տատասկէ քաղել թուզ, զի ի պտղոյ իւրմէ ծառն ճանաչի: (155 / 12; 155 / 14; 155 / 15)

Արդ տեսցուք առ այսոքիւք և զայս նս, թէ զի կարծին բառքս ներհակք իրերաց, ընդէ՞ր սուրբ հարքն երկոքումբք սոքօք վարեցան հասարակապէս

խոստովանականն իւրեանց ճառս, և թէ է՞ր աղագաւ Սներանէ և Յուլիանէ զմի մի ի սոցանէ յինքեանս ընկալան, և ոչ զերկոսին երկաքանչիւրքն: (155 / 18; 156 / 1; 156 / 2; 156 / 3)

Եւ եթէ նմեզ պարտ էր միում ումէք ի սոցանէ ձայնակցեալ, թէ նմանապէս յերկոցունց հրաժարել և կամ թէ զերկոսին ասել: (156 / 6)

Այլ բարվայելչապէս, և որպէս յեղանակ չարագրեցելոցն պահանջէ և բնութիւն իրացն, զկնի ամենեցուն և վախճան բոլորից դիցուք զայն, թէ ո՞րքան և ո՞վ որ յերկուս յայսցանէ բառից առանձնաբար ասացելոցն ծնանին չար կարծիք և հայհոյականք առ Աստուած բանք: (156 / 8; 156 / 9; 156 / 10; 156 / 11; 156 / 13)

Բայց նախ քան զայստսիկ՝ տեսցուք փոքր մի և վասն անուանցն մարդկայնոց, որք ասեն ի վերայ մարմնոյն Քրիստոսի: (156 / 15)

Եւ քանզի բազում անուանք հետևին մարդկային բնութեանս, տեսցուք թէ ամենեքին նոքա ասեն ի վերայ մարմնոյն Քրիստոսի, թէ ոմա՞նք ասին և ոմանք ոչ: (156 / 20)

Եւ դիտել պարտ է, թէ այնոքիկ անուանք, որք միանգամ արարածականիս պատշաաճին բնութեան և ի մարդոյն առեալ լինի սահման, ամենեքին նոքա աներկբայաբար ասին ի վերայ մարմնոյն Քրիստոսի: (156 / 23)

Զի զօր օրինակ ասեմք զտէրն ճշմարիտ մարդ եղեալ, այսինքն զբովանդակ բնութիւնս մարդկայինս ընդ ինքեան միաւորել, ըստ նմին և անուանք նմա հետևին մարդկային բնութեանս: (157 / 6)

Իսկ այնոքիկ անուանք որ միայն զարարչական բնութիւնն փաղանունակի նշանակէ, ընդ որում ոչ այլ որ ի գոյիցս լծակցի հոմանունութեամբ, ոչ է պարտ և ոչ իւրիք զնոսա առնուլ ի վերայ մարմնոյն Քրիստոսի, այսինքն անեղ, անսկիզբն, անժամանակ, և որ սոցին նման, զի ընդ ձեռն այսպիսեացս անուանց ոչ լինի մարմինն արարածական, այլ անեղ, և որ անեղն է, համագոյակից լինի աստուածութեանն, և համագոյն չորրորդութիւն առնէ զերրորդութիւնն և ոչ ևս Երրորդութիւն: (157 / 10; 157 / 13; 157 / 15; 157 / 17; 157 / 18)

Եւ սակայն նոքին անուանքն որ հետևին մարդկայնումս, ոմանք և ասին փրկչականումս, և կրեալք եղեն ի Տէաառնէ ըստ անուանցն զկիրս, որպէս չարչարելի ասի մարմինն, և յանձն առ զչարչարելն, Քրիստոս մահկանացու

ասի և մեռաւ

ճշմարտապէս

ըստ

մարմնոց: (157 / 20; 157 / 21; 157 / 22; 157 / 24)

Իսկ ոմանք թէ և ասեն, ոչ երբեք հպեցաւ ի նոսա և ոչ ընկալաւ գնոսա յանձն իւր Տէրն, որպէս զմեղանչելն և զապականութիւն ընդունել գնոսա, զի ասացաւ զնմանէ՝ մեղս ոչ ունել, և թէ՛ ոգի նորա ոչ թողաւ ի դժոխս և ոչ ետես զապականութիւն: (157 / 25; 158 / 1; 158 / 2; 158 / 4; 158 / 5)

Եւ նոքին անուանքն մարդկայինք, որք հետնին մարմնոյն Քրիստոսի, հակակեալք լինին նմա, զի ասեն զիրք զփրկչականն մարմին երկրային և երկնային, մարդկային և աստուածային, ըստ նմին օրինակի և զայլսն: (158 / 9; 158 / 10; 158 / 11)

Զի ոչ եթէ ընդ ձեռն երկակի ասութեանն կրկին առնէ զմարմինն Քրիստոսի՝ զոմն մարդկային և զոմն աստուածային. այլ այսպէս ածցուք զմտաւ, թէ ոմանք ըստ բնութեան ասին ի վերայ մարմնոյն Քրիստոսի, իսկ ոմանք ըստ միաւորութեան: (158 / 13)

Որպէս և Բարսեղ ասէ. «Բնութեամբ է մարդկային մարմինն Քրիստոսի, իսկ միաւորութեամբ տնօրինութեամբն աստուածային»: (158 / 17)

Յայս երկու սիւնս խարսխեալ հիմնեցաւ բոլոր շինուած առաքելական հաւատոյն, և պարտ է այնմիկ, որ ընթեռնուցուն զյաղագս տեառն ներմարդութեանն գրեալ ճառս, ամենայն ստուգութեամբ հետազոտել և ի միտ առնուլ՝ թէ ո՞ր իցէ բնութեանն բան, կամ ո՞ք այնոքիկ որ ըստ միաւորութեանն իցեն ասացեալք: (159 / 3; 159 / 6)

Զի ի լինելն մարդ Բանն Աստուած անեզաբար մարմնացաւ և առանց շփոթութեան և առանց անջատման երևեցոյց զմիաւորութիւնն, որպէս և Յոհան Ոսկեբերան ասէ. «Մի շփոթեցուք, և մի անջրպետ ի մէջ արկցուք, քանզի միաւորութիւն խոստովանիմք և ոչ քայքայումն ինչ, և կամ լուծումն այս բնութեան յայն կամ այնր յայս, այլ միացեալ մի լեալ»: (159 / 10; 159 / 10; 159 / 12; 159 / 13; 159 / 14; 159 / 15)

Եւ Կիրեղ ասէ. «ի խոստովանելն մեր թէ եղև բանն մարմին, ոչ եթէ շփոթութիւն ինչ ասեմք բնութեանց, այլ կացեալ մնացեալ անբակաբար և անշփոթաբար ի վեր քան զմիտս եղելոց»: (159 / 20)

Եւ Պրոկղ ասէ. «Ի միասին եկին բնութիւնք և առանց շփոթութեան մնաց միաւորութիւնն»: (159 / 22)

Սովին օրինակաւ և այլ սուրբ Հարքն զիրեանցն պայծառացուցին ճառս, որ յաղագս Փրկչին, քանզի կարգ իսկ և օրէն իրացն այսպէս պահանջէր լինել, զի ճշմարտեալ լիցի անփոփոխութիւնն, ընդ նմին միանգամայն և անքակ միաւորութիւնն: (159 / 24; 160 / 2; 160 / 5)

Ի խոնարհելն իւր ի մարդկային կիրս, զանփոփոխութիւն գուշակէր մարդկայնոյն, իսկ նոքումք կրիւքն ազատել զմեզ ի նոցանէ, և փոխանակ նոցա աստուածայնովն զուարճանալ փրկութեամբ, անճառ միաւորութեանն քարոզիւր անբաժանութիւն: (160 / 8)

Եւ ի կատարել զաստուածագործ սքանչելիսն աստուածայնոյն յայտնեալ լինէր անայլայլութիւն, իսկ զնոսին երևելեան հրաշագործելն միաւորութեանն պայծառանայր փառք, այսինքն զքոքն զառ ի ծնէ կուրին բանայ զաչս, և զձեռն ի վերայ դնելով բժշկել զհիւանդս, և մարմնովն և արեամբն իւրով կենդանացուցանել զմեզ և թողութիւն մեղաց պարգևել: (160 / 17; 160 / 18; 160 / 18; 160 / 19)

Սոցին այսոցիկ հետևեալք լինին բանք աստուածային գրոց, ոմանք ըստ բնութեան գտանին ասացեալք և այլք ըստ միաւորութեան: (160 / 23)

Մարմին այսորիկ միաւորութեան աղագաւ ասի յերկնից իջեալ, մարմինն որ ի կուսէն, և անտեսանելի և անշօշափելի Բանն տեսեալ լինի և շօշափեալ, և որ այլ ինչ սոյնպիսիք: (161 / 13; 161 / 13; 161 / 14; 161 / 14)

Սոքօք երկոքումքք զեզեցկագոյն ոտիւք պարտ էր Սևերեայ և Յուլիանեայ ընթանալ ի ճանապարհ ճշմարիտ և անբիծ հաւատոյն, ընդ որ գնացին առաքեալքն և նոցին հետևեալ սուրբ հարքն, միաբանեալ հաւատով առ միմեանս և միանալ վերստին ի գլուխն Քրիստոս: (161 / 17; 161 / 18; 161 / 19; 161 / 21)

Իսկ նոքա ոչ այսպէս, այլ բաժանեցան առ ինքեանս զմի մի ի նոցանէ, Սևերիոս զայն որ ըստ բնութեան ասացեալ են ի գիրս, և Յուլիանէ զայնոսիկ, որ ըստ միաւորութեանն են բանք, հաւաքեալ զնոսա եղին լինել զէնս պատերազմի ընդ դէմ իրերաց: (162 / 3)

Սևերիանոս անչափապէս բերանաբացեալ և խրեալ ի բնաւորականսն, զմարմինն փոփոխելի ասաց և ապականակիր մինչև ցարութիւնն, և զմարդկային կիրսն ապականութիւն ասաց և ոչ կիրս փրկչագործս, և միանգամայն ասել թէ և ճանաչէ իսկ ոչ զիւրոց ասացուածոցն յայտնել զսկզբունս և զձայրս, այլ որպէս մոլորեալքն ի մթին գիշերոջ յառաջնում

լինելով, կարծեն յայլ փոխել ճանապարհ և ընդ այլսն գնալով յառաջանումն վարկանին լինել, գոր և յիշեցաք սակաւութ զբազմագան նորա հայհոյականսն ի թղթին, որ առ պատրիարզն Աթանաս վասն Թեոդոտայ: (162 / 7; 162 / 8; 162 / 9; 162 / 9; 162 / 11; 162 / 11; 162 / 12; 162 / 13 ; 162 / 16; 162 / 17)

Իսկ Յուլիանէ այնքան սիրեաց թնակոյիս զմիաւորութեանն բառիք, մինչ զի իսպառ հրաժարեաց ի բնականաց անտի և ասաց զմարմինն Տեառն անչարչարելի և անմահկանացու, որ լինի ընդ ձեռն այսպիսեաց անուանց հրեշտակական և ոչ մարդկային բնութիւն: (163 / 3; 163 / 4; 163 / 6)

Եւ որքան զայս առաւել ևս անխորհրդակագոյն է, յանդգնեցաւ ասել, անեղ, անսկիզբն, անժամանակ, որ յայտնապէս զարարչականն ի ներքս ածէ բնութիւն և առնէ զերրորդութիւնն չորրորդութիւն և ոչ ևս երրորդութիւն, և ասպա դառնայ ինքն զինքն իբրև զայլ ոք արկանէ ընդ նգովիք, ասելով. Եթէ ոք յերկնից բերեալ ասիցէ զմարմինն կամ յայլմէ բնութենէ, այլ ոչ ի մարդկայինն հողեղէն բնութենէս, նգովեցի: (163 / 11; 163 / 12; 163 / 12)

Նման իմն առնելով այնմիկ, ասիցէ ունել զմարդկային բնութիւնս անշնչական և անշարժական և յետոյ դառնայ նգովէ այսպէս. Եթէ ոք ասիցէ մարդոյն ունել քարի բնութիւն, նգովեալ լիցի: (163 / 19; 163 / 19)

Սահմանական բանիւ համարի զմարդն քար գոլ և սահմանելոյն անուամբն դարձեալ ուրանայ: (163 / 23)

Եւ արդ զի ցուցաք վասն երկուս այս արանց, զի ոչ միայն եթէ ոչ են համաձայնք սրբոյն Գրիգորի, այսինքն առաքելական հաւատոյն, այլ և յոյժ նոցին հակառակք, ժամ է այսուհետև ասել մեզ առ սոսա, զորմէ ասէրն Եղիա ցԻսրայել: (164 / 4)

Մինչև յէ՞րբ կաղայք յերկուս ոտս, և կլամ մինչև յէ՞րբ խնդրէք ծածկել ստութեամբ զճշմարտութիւնն և ընդ ճշմարտութեամբ թագուցանել զստութիւնն, թէ համարիք զդոսա որդիս լուսոյ և որդիք արքայութեանն, երթայր զհետ դոցա, ասպա եթէ են մշակք նենգաւորք, որպէս և են իսկ, կերպարանեալք ի հրեշտակ լուսոյ և ոչ հրեշտակք, գողք և աւազակք և գայլք յափշտակողք, հրաժարեալք ի նոցանէ, երթայք զհետ բարի հովուին, որ ժողովեաց ի մի գաւիթ կաթուղիկէ եկեղեցի զյառաջագոյն ընտրեալսն իւր ոչխարս, որպէս զի լինիջիք միոյ հովուին մի հոտ ի միում գաւթի մակաղեալք, լսելով զքաղցր նորա ձայնն և լսեցուցանել նմա՝ ուսեալ զմեր ձայնս, ծանուցեալք զնա, և ծանուցեալք առ ի

նման: (164 / 7; 164 / 9; 164 / 11; 164 / 13; 164 / 14; 164 / 15; 164 / 15; 164 / 21; 164 / 23)

Եւ զայս առ երկուսին առ ձեզ բարբառիմ, ձեռն են աջոյ պատուեալք ի ձէնջ, այլ որումանն և ոչ բարի ցորենոյն սերմանիչք, սիրելիք ձեր, իբրև զակն աջոյ առաջնորդք ձեր, այլ խաբեբայք և զայթակղեցուցիչք շաւղաց ոտից ձերոց, որք առաջնորդեն ձեզ ի գեհեն հրոյն և ոչ ի մայրաքաղաքն ի վերին Երուսաղեմի. լաւագոյն է ձեզ առանց նոցա ժառանգել զանվախճան կեանսն, քան թէ հանդերձ նոքօք գտանել զյաւիտենական կորուստն: (165 / 2; 165 / 4; 165 / 6)

Ահաւասիկ վկայ ունիմ զԱստուած իմումս վկայական բանիս, թէ տակաւին ևս իսպառ սիրեք զատելիսն և զթշնամիսն Աստուծոյ համարիք ձեզ առաջնորդս: (165 / 13)

Դատելոց է զձեզ բանս իմ այս յաւուրն դատաստանի, և ոչ կարեք պատճառել իբր թէ ոչ ոք զայս մեզ զգացոյց և բողոքեաց յականջս մեր, քանզի ոչ այլ ինչ, այլ ի վկայութիւն ձեզ առաքեաց զիս Տէր: (165 / 15; 165 / 17)

Բայց արդ, եթէ կամիցիք լսել առ ի մէնջ, թէ որո՞ց և ո՞րքանեաց պատճառս կան հայիոյութեանց երկուքս այս բարբառք, ասացից զորացեալ ի Հոգւոյն սրբոյ: (165 / 20)

Ձի զոր ասելն պարտ էր ընդդէմ մտածութեանցն Սներեայ, ասացաք սակաւութիւն թողին որ առ պատրիարզն Աթանաս, գրեցաք վասն Թէոդիտեայ, ասացուք և առ ձեզ: (166 / 5)

Արդ դուք ձեզէն տուք զիրաւոյ, Պօղոս ասէ առ Կորնթացիսն, որ անչարչարելի և անմահկանացու ասէ զմարմինն Քրիստոսի, ոչ զնա ապաքէն ասացեալ լինի և անտեսանելի և շօշափելի. իսկ անշօշափելին և անտեսանելին է անմարմին ամենայն հարկաւորութեամբ, և այս զինչ այլ լինիցի, և ոչ հրեշտակական և երկնային: (166 / 9; 166 / 11; 166 / 11; 166 / 12; 166 / 13; 166 / 14; 166 / 14)

Եւ դարձեալ որ անցաւելի ասէ զմարմինն Քրիստոսի, ո՞չ ապաքէն ասացեալ լինի նորա զնա անշունչ և անզգայ և այս ով ոք այլ լինի, եթէ ոչ քարի բնութիւն: (166 / 20; 166 / 21)

Եւ որ դնէ յարացոյց մարմնոյն Քրիստոսի յառաջին մարդոյն մարմին նախ քան զանցանելն ասելով՝ առաջին մարդն անընդունակ էր կրից մարդկայնոց մարմնականաց և հոգեկանաց, թէ այնպէս է, Քրիստոս ոչ ունէր զբնութիւն

գառաջին մարդոյն, զի կրեաց կարգաւ և կամաւորութեամբ գամենայն կիրս մարդկայինս առանց մեղաց և ապականութեան: (167 / 4; 167 / 6; 167 / 8)

Եւ եթէ ունէր զբնութիւն առաջին մարդոյն և հաւասարեաց մեզ ամենայնիւ ըստ նմանութեան առանց մեղաց, յայտ է թէ առաջին մարդն ընդունակ էր կրից, և եթէ համաբուն ունէր Քրիստոս զմարմինն առաջին մարդոյն և մարդն առաջին անընդունակ էր կրից, առ աչօք ապա պարտին լինել Քրիստոսի կիրքն և ոչ ճշմարտութեամբ: (167 / 9; 167 / 12; 167 / 14; 167 / 16)

Արդ ամենայնքն նմանաբար այսոցիկ ասացեալք զյեղման և զփոփոխման մարմնոյն տան զակնարկութիւն և ոչ զմիաւորութիւն, առնու զոր ոչն ունի, և զոր ունին, ոչ կորուսանէ, Իսկ փոխումն զիւր ինքեան, զոր ունին՝ անշարժ պահել կարէ: (167 / 18; 167 / 19; 167 / 20)

Արդ եթէ ընկալաւ մարմինն Աստուածն Բանի ի զորութենէ անտի նորա զկարելին լինել աներևելի, և երևելին առ ինքեան ոչ մնաց ամենայն իբօք և ամեննին, գտանի առ աչօք և ոչ ճշմարտութեամբ եղեալ երևումն, ըստ նմին և այլ անտեսականքն, ընդէ՞ր ապա ասի մարմին զգենուլ ի Կուսէն: (168 / 3; 168 / 4; 168 / 5; 168 / 6)

Եւ սա ինչպէ՞ս իրաց, քանզի զայսպէս երևման կիրս յամենայն դարս մարդկան առ բազումս բազում անգամ երևի արարեալ, այլ այնքիկ առ աչօք և եթ երևմունք: (168 / 11)

Իսկ սոքա բնաւորական իրաց ներգործութիւնք, քանզի անբաւապատիկ մարդասիրութիւնն առաջնորդեաց մերումն ստեղծուածի, զի ճշմարտութեամբ և ոչ երևմամբ նմանութեան եղիցի մարդ և որդի մարդոյ: (168 / 15; 168 / 16)

Առ զերևելին զի ճշմարտութեամբ և ոչ նմանութեամբ զերևումն արասցէ: (168 / 18)

Զգեցաւ զօշափելին, զի ճշմարտութեամբ շօշափեցի ի մարդկանէ և ոչ ստուերաւ: (168 / 20)

Միացաւ ի մարմին չարչարելի և մահկանացու, զի ճշմարտեացի ի մարմնի նորա չարչարանքն և մահն, որ վասն մեր: (168 / 21; 168 / 23)

Զգեցոյց արդարն Աստուածն Բան յանճառ միաւորութենէն իրում մարմնոյն զիւր զօրութիւն և զփառս. այլ յորժամ և ուրանօր կամեցան, և առ յանճն կրել

վասն մեր գասացեալն, թէ աղքատացաւ ի տկարութենէ գորութիւն իմ, և եթէ տեսիլ նորա նուազ անարգեալ, քան գամենայն որդոց մարդկան: (169 / 1; 169 / 2; 169 / 2; 169 / 5)

Զգեցաւ արդարև մարմինն ի միաւորութենէ անտի գանձմանէն և գանձնդդիմահար գորութիւն, որպէս ուսոյց մեզ այսպէս հաւատալ կնքեալ գերեզմանն, որով յարեաւ, և դրունքն աղիսեալ, որով ի ներքս մտանէր: (169 / 8; 169 / 10)

Այլ սակայն յիւրում սահմանեալ ժամուն զբնականն զմարմնոյն առաջի արկանէր զըմբոնումն և զշոշոփումն, տալով զինքն ի ձեռս ունողացն զնա, յաղագս որոյ ասէ. «Արկին ի նա ձեռս և կապեցին զնա», և սակայն մինչև էր հասեալ ժամ նորա, ասացաւ զմանէ, թէ ոչ ոք կարաց արկանել ի նա ձեռս: (169 / 14; 169 / 16; 169 / 16)

Եւ զերկոսին զնոսա, որպէս յառաջն ասացի, բարեպաշտաբար իմացուք, զմինն ըստ բնականին կատարեալ և զմիւսն տնօրինել ըստ անճառ միաւորութեանն: (170 / 1)

Պահեալ զքառասուն օր՝ յետոյ քաղցեաւ, և որպէս ասէ Գրիգոր Նիսացին. «Թոյլ ետ բնութեանն, յորժամ կամեցաւ, զիւրն կատարել»: (170 / 3)

Եւ այն զորմէ ասաց մարգարէն, «Աստուածն յաւիտենական ոչ վաստակեցի», ըստ մարմնաւորութեան օրինի յանձն առ զվաստակն, որպէս և Բարսեղ ասէ. «մարմնոյն որ բնութեանն յարմարագոյն էր՝ զպատահումն ընկալաւ»: (170 / 11)

Անգիտացաւ յաղագս կատարածի աւուրն և ժամուն, որպէս ասէ Կիւրեղ, թողացուցեալ երբեմն մարմնոյն կրել զիւրսն, այլ որպէս զԱստուած ամենայն ստուգութեամբ պատմեաց զլինելոցսն յաւուր յայնմիկ և ի ժամուն: (170 / 14; 170 / 18)

Եւ որք հաւասարեն զկերակուրս ճաշակեալ ի մարմնաւորութեանս ընդ ճաշակելոյն ընդ այնմիկ, որ առ Աբրահամաւն յանմարմնութեանն ասելով՝ Յիսուս Քրիստոս երէկ և այսօր նոյն և յաւիտեան, յաղագս անփոփոխ ցուցանելոյ զեութիւն Բանին, թէ որ նախ մարմնաւորութեան էր. նոյն ինքն այժմ և ի հանդերձեալ յաւիտենին: (170 / 24; 170 / 24; 171 / 3)

Բայց յաղագս նորա նորա չար կարծեացն, որ յաղագս փրկչական մարմնոյն և որք ի նմանէ ճշմարտապէս տնօրինելոց իրողութեանց, հարկաւոր

Է Լգայս բարեփառապէս ի ներքս յաւելուլ, զի ոչ եթէ որպէս յայնժամ Լայժմ անմարմին կարծեսցի գոլ Քրիստոս բարեպաշտից: (171 / 7; 171 / 9; 171 / 11)

Եւ դարձեալ զի Լժամանակական զանազանութիւն յարմարեսցին նմա ասել. յորմէ հետէ սկիզբն առ լինել ընդ ժամանակաւ, երեկեան անուանել օր ի ծննդենէն որ ի Կուսէն, մինչև ցժամ վերանալոյն յերկինս, յորում ժամանակի շրջեցաւ ընդ մարդկան ի վերայ երկրի, Լայսօր կոչել յամբարձմանն օրէն մինչև ցերկրորդն իւր գալուստ: (171 / 13; 171 / 19)

Իսկ զանստուէրն Լզանվախճանն անուանէ յաւիտեան, ցուցանել ընդ ձեռն այսորիկ, թէ անփոփոխելի Լանյեղլի զիւր պահեաց մարմին, որպէս ծնաւ ի Կուսէն: (171 / 21; 171 / 23)

Եւ եթէ ճաշակելս այս սնընդապէս լինի ճաշակելոյն այնմիկ, հարկ է Լզերևումս զայս հաւասարել երևմանն այնմիկ. այլ այնքիկ նմանութեան Լ Էթ առ երևոյթս ձևացութիւնք, իսկ սոքա բնաւորական իրողութեանց գործառնութիւնք: (172 / 2; 172 / 4)

Եւ որք տարակուսին, թէ միշտ մշտնջենաւոր միութիւն ասեմք անքակ լինել Բանին Լմարմնոյն իւրոյ, զիա՞րդ ասեմք ըստ ժամու ժամու թողացուցանել Բանին զմարմինն իւր առ ի կրել զիւրսն: (172 / 9)

Թողացուցանել, ոչ զանջատել ասէ Բանին ի մարմնոյն Լ կամ զմարմնոյն ի Բանէն, այլ զկամելն զիւր առ կրել զմարդկային կիրսն, թողացուցանել ասի: (172 / 12)

Դարձեալ տարակուսին, եթէ վասն զի ի մեզ կրիցն Լի ձեռն բնականի շարժմանն տիրէ ապականութիւն, զիա՞րդ ասեմք անապական մնալ մարմնոյն Քրիստոսի՝ կատարելով զբնական կիրսն մարդկայինս: (173 / 2)

Իսկ նա միանգամայն Աստուած Լմարդ, զմարդկայինսն կատարէր իբրև զմարդ Լաստուածայինզօրութեամբն, որ անքակտաբար միանգամայն ընդ մարմնոյն էր միացեալ, զապականութիւնն արտաքս պարսպեալ, պահէր զյարձակումն: (173 / 9; 173 / 11)

Եւ մանաւանդ զի ոչ արժանի համարեցաւ Բանն որ ի Հօրէ լինել մարդ ի ձեռն ախտաւոր խառնից, որ զապականութիւն ի մեզ նիւթեալ արկանէ, որպէս ԼԱթանաս ասէ. «վասն զի մարմնանալն Քրիստոսի յանամուսնութենէ Լառանց մեղաց էր, ոչ գտաւ ի նմա ապականութիւն, բայց ոչ եթէ վասն զի ոչ է ի սերմանէ առն, ինքն Բանն անմարմին ձևացեալ ի

նմանութիւն մարդոյ յարգանդէ Կուսին, որպէս խորհեցաւ ասել
Եւտիքոս: (173 / 18; 173 / 19)

Խոստովանիմ զԲանն Աստուած յարգանդի ի կուսին կերպացեալ
տպաւորեալ ի պատկեր Աի ձև մարդոյ լեալ, այլ ոչ եթէ յարարածական
բնութենէս յինքն ինչ խառնեաց. զի անխառն է աստուածութիւնն Աանյօդ, զոր
յանդիմանեալ դատէ աստուածաբան Գրիգոր ասելով այսպէս. «եթէ ոք իբրև ընդ
խողովակ անցեալ ասէ, այլ ոչ ի նմանէ ստեղծեալ աստուածաբար,
միանգամայն Ամարդկաբար. աստուածաբար՝ զի առանց առն, Ամարդկորէն՝
զի օրինօք ծննդեանն, նզովեսցի»: (174 / 1; 174 / 4; 174 / 8; 174 / 9)

Ապա ուրեմն պարտ է ճշմարտութեամբ խոստովանել կրեալ զմարդկային
կիրսն Փրկչին Ազապականութիւն, որ ի կրից անտի ի մեզ ծնանի, ոչ
շարամանեալ ընդ փրկչականն կրից. զի ի բառնալ եկն զնա ի մենջ Աի կրիցն
մերոց, կրելովն իւր զնոսա: (174 / 13; 174 / 16)

Նմանապէս չար են երկոքին յաղագս երկեղի ապականութեանն անհաղորդ
ասել զնա մարդկային կրիցն Աճշմարտելովն զկիրսն, զապականութիւն
սպրդեալ ի ներքս խառնեալ: (174 / 19)

Եղև մարդ ճշմարտութեամբ, այլ ոչ ընդ ձեռն ապականութեանն, որոյ վիրօք
մեք զլինելութիւն ստանայցեմք. այսպէս Աի ծննդեանն Այայլ ի կիրսն կրեաց
զմարդկայինսն բնականապէս, ըստ որում Ազմարմինն զգեցաւ զբնութեանս
մերոյ: (174 / 23; 174 / 24; 175 / 1)

Իսկ զապականութիւն Ազմեղս, որ զկնի յանցանացն յարեալ եղև ի
բնութիւնս, ոչ արժանի համարեցաւ ընդունել Տէրն ի մարմին իւր: (175 / 3)

Մեռաւ ճշմարտութեամբ զբնականն մեր մահ. այս է բացորոշել շնչոյն
բանական ի մարմնոյն Ամարմնոյն անշնչանալ Այանզգայութեանն խոնարհեալ
սահման, Անովին անշնչացեալ մարմնուն զապականութիւնն մեր խափանեաց ի
գերեզմանի Ամերկացեալ շնչովն ի մարմնոյն իջեալ ի դժոխս, կործանեաց զնա,
զգերեալսն գերելով ի նմա զոգիսն Ամահուամբն զմերն մեռոյց
զմահ: (175 / 8; 175 / 9; 175 / 10; 175 / 12; 175 / 14)

Յաղագս որոյ պարտ Աարժան է զուարճացելոցն աստուածագործ
սքանչելեօքն ճշմարտել զնորա Ավասն մեր կամաւորն մահ Աոչ
դրդուել Աանկանել յապականութեանն կարծեաց
խորխորատ: (175 / 16; 175 / 17; 175 / 18; 175 / 18)

Բայց զի՞նչ առ այնուհիկ, որ ասեն զԲանն մարմին և զմարմինն Բան. պարտ և արժան էր ասել զասացեալսն աստուածաշունչ գրոց, և ոչ դանդաղել և անկանել ի նորագիտ ցնորմունս: (175 / 22; 175 / 22; 176 / 1; 176 / 1)

Զի թէ իցէ մարմին, և ոչ ևս այնուհետև է Բան, և եթէ իցէ Բան, ոչ ևս կարէ գոլ այնուհետև մարմին, զի ի բանից աստի, որ զփոփոխութեանն տայցեն զակնարկութիւն, ունիցին զոր ոչն ունէին և ոչ ևս ունին, զոր ունէին: (176 / 3; 176 / 3; 176 / 7)

Արդ արժան է ասել, զոր և ասել մեզ հրամայէ ճշմարտութիւնն, զի բանն Բան է, և ոչ ևս մարմին, և մարմինն մարմին, և ոչ Բան: (176 / 8; 176 / 10; 176 / 10; 176 / 10)

Աստուածն Բան մարմին զգեցեալ է ի Կուսէն, և մարմինն որ ի Կուսէն յԱստուածն Բան միաւորեալ մշտնջենաւորութեամբ, Բան Աստուած որ յԱստուծոյ Հօրէ ծնեալ է ըստ էութեան յառաջ քան զամենայն յաւիտեանս, նոյն ինքն ըստ ժամանակի ծնաւ մարմնով ի սուրբ Կուսէն: (176 / 12)

Ոչ ի լինելն մարդ յեղումն ընկալաւ զհրաշափառականն իւր արարեալ զմիաւորութիւն. ոչ փոփոխել անմարմինն ի մարմին, և ոչ մարմին, և ոչ մարմին յանմարմնութիւն փոխելով, այլ կացեալ, մնացեալ ի նմին, որ էնն, որպէս ուսուցին սուրբ հարքն, և միացեալ անքակութեամբ, անշփոթութեամբ ի վեր քան զիմաստս արարածոց: (176 / 22; 176 / 23; 176 / 25)

Զինչ և առ այնուհիկ, որք ասեն, թէ միանալով մարմինն ի Բանն, անեղ եղև և ինքն, այնուհետև և որ ինչ Բանին, նոյն և մարմնոյն: (177 / 3; 177 / 4; 177 / 5; 177 / 6)

Յերիս բաժանի բանական բնութեանս սեռք, յաստուածայինն և ի հրեշտակականն և ի մարդկայինն, և ի սոցանէ աստուածայինն է իմանալի և պարզ և անեղ, իսկ հրեշտակականն իմանալիք և ստացականք, իսկ մարդկայինն ստացական և շարադրական, զի յիմանալոյ միանգամայն և ի զգալոյ է բաղկացեալ հոգւոյն բանականաւն ընդ իմանալիսն և մարմնով ընդ զգալիս: (177 / 8; 177 / 9; 177 / 9; 177 / 10; 177 / 10; 177 / 11; 177 / 12; 177 / 13; 177 / 15)

Եւ զի լինելն մարդ վասն մեր Ստեղծիչն երկոցունցն ընկալաւ հաղորդութիւն, իմանալոյն ասեմ և զգալոյն, սակս նորին և երկաքանչիւրոցն ասին ի վերայ նորա և յարեմունք անուանցն, չարչարելի և մահկանացու ըստ

մարմնոյն և անմահկանացու ըստ հոգւոյն բանականի, զի մի թուեսցի կիսահաւատիցն յեղանակաբար ասացելոյ անտի անուանցն՝ զմին թանց միւսոյն ընկալեալ Արարչին ի մարդկանէ: (177 / 18; 177 / 18; 177 / 19; 177 / 20; 177 / 21)

Եւ ոչ միայն անուանել այնքիւք ասացելովք անուամբք, այլ ըստ անուանցն և ներգործելն ճշմարտապէս ի վերայ երկրի, զչարչարիլն և զմեռանիլն ըստ մարմնոյ և զանչարչարելի մնալն և զանմեռանելին ըստ հոգւոյն: (178 / 4; 178 / 5; 178 / 6; 178 / 6)

Եւ թէպէտ և ասացաք զանչարչարելին և զանմահն ըստ բանականի հոգւոյն մարդկայնոյ դաւանել զՔրիստոս, այլ կատարեալ բանն ընթանայ առ անարատ և անբիծ Բանն, որ յԱստուծոյ Հօրէ, զի հոգի մարդկային՝ թէ և զբնականացն ոչ, զի և ոչ մարմին, այլ զիրոց մասանցն անբաղապէս ընդունի զկիրս. զխորհելն, զցանկալն, ցասնուլ, ընդ որոց շարամանեալ գտանեմք և զտրտմելն և զզոփալն. ևս և զերկնչելն և զանգիտանալն: (178 / 7; 178 / 8; 178 / 11; 178 / 12; 178 / 13; 178 / 16; 178 / 16; 178 / 17; 178 / 17)

Եւ յաղագս նորին Տէրն ի տնօրինելն զմարդկայինս ի վերայ երկրի, երկոցունց եղեալ հաղորդակից, հոգւոյն ասեմ և մարմնոյն, որ ի մէնջ, զի բարձցի զայթակղութիւն կիսակատար դաւանողացն զՔրիստոս մարդ և զի անձնիրովքն եղիցի երախտաւոր մեզ ի բժշկել զնոսա: (178 / 20; 179 / 1)

Իսկ թերևս հարցանել ումէք կամք իցեն, թէ ընդէ՞ր ոչ զի զմահն էլոյծ Տէրն, որպէս և զդժոխս և զապականութիւն մահուն հաղորդ լինելով եբարձ հմենջ, իսկ զդժոխս և զապականութիւն միայն եբարձ և իրամատեաց, ոչ ևս յանձն առեալ ընդ նոքօք լինել: (65 / 16)

Ասել պատրաստ եմ զօրացեալ յԱստուծոյ. բայց նախկին տեսցուք զայս, զի ամենայնքն, որք միանգամ տնօրինեալք եղեն հՏեառնէ հմարդիկ, յերկուս բաժանին, հկրական և հներգործական. կրականք են զորս յանձն իւր ընկալալ տարաւ Փրկիչն զհոգեկան և զմարմնական կարիսն, որք մարդկայնոյս են բնութեան պատահմունք, որով մարդասիրաբար կարեկցեալ մեզ Տէրն, և ընդ ձեռն նոցուն և զմարդեղութեան իւրոյ հաստատէր զճշմարտութիւն, այլ և վարդապետէր նոյնգունակ մեզ առ հյօգուս միմեանց նոքիմք բարեձևանալ կրիւք: (65 / 22; 65 / 22; 65 / 23; 65 / 23; 66 / 7)

Է միւս ևս այլ հփրկչական կրիցն, որք ոչ մարդկային բնութեանցն բերք, այլ պատուհաս ընդ յանցանացն յԱրարչէն մեզ եղեալ եղև՝ մահն, զոր ոչ որ յերկրածնացս քակել զնա կարաց հբնութենէս, մինչ ոչ արարչական ձեռն, որ

կապեաց զնա հմեզ, եկեալ ինքեամբ արձակեաց, յինքն առնելով զկապանս մահու: (66 / 8; 66 / 12; 66 / 13)

Իսկ ներգործականք են, որ յայլմէ առ այլս հզօրութենէ նոցունց անցանէ օգտութիւն, որպէս կոյրքն գործով հհրամանէ Տեառն ընկալան գտեսանելն, և այլքն մի ըստ միոջէ: (66 / 16; 66 / 18)

Արդ՝ զայսոսիկ, զոր ասացիս, յառաջ քան կամաւորաբարն իւր մեռանել, կատարեաց հմարդիկ Տէրն, իսկ զապականութեանն բարձումն և լուծանելն զդժոխ, զկնի մահուն հբնութենէս խափանեաց հզերեզման իջանելով՝ զապականութեանն քակեաց զբնութիւն, և այս յուսով և յապառնիս ունի զեղոցեալն, և երթալովն հդժոխս՝ զդժոխոցն ամբութիւնս քակեաց: (66 / 22; 66 / 24; 66 / 24; 67 / 4)

Բայց թէ է՞ր աղագաւ վասն նորա ասացաւ չթողանիլ ոգի նորա հդժոխս և ոչ մարմնոյ նորա տեսանել զապականութիւն, այլ զի հպեցաւ հնոսա, ոչ եթէ սակս ընդ նոքօք զիւրն արկանելով մարմին և անձն, քա՛ւ լիցի, այլ առ հթափել և ազատել հնոցանէ զճնունդս առաջնոյ Ադամայ: (67 / 6; 67 / 8; 67 / 10; 67 / 10)

Եւ այսպէս գտանին երկոքեան ճշմարտեալք հ վերայ Փրկչին մերոյ ասացեալքն. մերձեցաւ հտեղիսն հ ձեռն ծածկութիւն՝ և ազատեաց հ ձեռն ամենակարող ինքեան զօրութեանն, և ոչ միայն այս, այլ զի և յայլսն մի ըստ միոջէ հտնօրինականսն զոմանս աստուածապէս և զոմանս մարդապէս կատարելով: (67 / 12; 67 / 13; 67 / 14; 67 / 14; 67 / 17)

Յղացեալ եղև յարգանդի կնոջ ինն ամսեայ ըստ օրինի մարդկան իսկ հԿուսէ և թարց մերձաւորութեան առն, ոչ մարդկօրէն, այլ ըստ աստուածային զօրութեանն: (67 / 20)

Ծնաւ հկնոջէ ըստ կարգի ծնիցելոցն հմարդկանէ. իսկ զկնի ծննդեանն կոյս պահել զճնողն, և կաթնաբուխ ունել ստինս, ոչ ևս ըստ մարդկան, այլ աստուածային այս հրաշափառութեան գործ, զեղելութիւն և զաճումն հասակի յանձն առնելով անօրինաբար, իսկ զնուագութիւնն և զապականութիւն ոչ ընկալաւ աստուածավայելչաբար, մեռաւ զմարդկայինն, և ըստ մարդկային, և զմահ մեռոյց ըստ ինքեան անմահական զօրութեանն: (67 / 22; 68 / 1)

Բայց ինդիր էր այս, թէ յաղագս որո՞յ պատճառի զմահն, որ ապականութեան առաջի դնէր մեզ, յանձն առնելով անցոյցն զնա հմենջ Տէրն, իսկ ապականութեանն և դժոխոցն՝ միայն երթալովն հտեղիսն հրաման տուեալ բառնալ: (68 / 14; 68 / 15)

Այլ և ոչ մահն ըստ բնութեան տնկեալ ասեմք hմեզ Ստեղծին. թեպէտ և hսահման մարդոյն զսա շարաբերեալ կամք եղեն արտաքնոցն մակացականացն, այլ պատուհաս ընդ յանցանացն, որ իրաւապէս դատեր զմարդն h վերայ ընդից բնութեանս: (68 / 21; 68 / 22; 69 / 2)

Արդ՝ թեպէտ ամենեքեան սոքա, որպէս ամենեցուն քաջայայտ է, hմեղացն յառաջ եկեալ երևեցան, սակայն անուն մահուն և նախ քան զմեղսն յԱրարչէն յիշեցեալ եղև. վասն է՞ր արդեալք, զի երկիւղն սորա իբրև ամրագունիւ պարսպաւ օրինադրեալն մարդ պահպանեցի, որպէս զի զարհուրեալ hսպառնալեաց մահուն՝ անպարտելի hդժբանաց թշնամոյն եղիցի, և այսպէս սհարկուս այս անուն եղիցի նմա պատճառ զանմահականն գտանել կեանս: (69 / 5; 69 / 10; 69 / 11)

Արդ եթէ էր զգաստացեալ երկիւղի համբաւուն զարդեանց իրիս ոչ էր ընկալեալ զփորձ, այլ զի բանին ոչ դաստիարակեցաւ նախ քան զյանցանսն, ընկալաւ իւրատ զկնի մեղացն hգործոց անտի: (69 / 18)

Արդ՝ նոյն սա մահս յառաջնում կենցաղին պատրաստեցաւ լինել h ձեռն համբաւոյն իւրոյ մարդոյ օգտակարութեանն պատճառ, իսկ յերկրորդումս գործն առ hնմանէ ածէր զմարդն յուղղութիւն: (69 / 21; 70 / 1)

Եւ անդ խուսափելն hմահուանէ տայր զյաղթեանն նպատակ, իսկ աստ զառ hմահն ունելով բաղձանս. զի անդ մեղքն զմահ ծնանին և hմահուանէն լինէր կենացն լուծումն, իսկ աստ hմահուանէ անտի մեռանին մեղքն և կենացն անլուծից սկիզբն եղանի, այլ և հանդերձ գերագանցութեամբ, վասն զի անդ էզիտ հողածինն զմահ, իսկ աստ երկրորդն մարդ ճաշակեաց զնա Տէրն յերկնից եկեալ: (70 / 3; 70 / 4; 70 / 6; 70 / 7)

Ասացաւ զնմանէ, թէ մեղս ոչ արար, և զի յաղագս զմեզ փրկելոյ և ոչ զինքն ընդ նոքօք արկանելոյ սակս էջ hտեղի դժոխոց և ապականութեան, ասացաւ զնմանէ թէ՛ ոչ ոգի նորա թողաւ hդժոխս, և ոչ մարմին նորա ետես զապականութիւն: (71 / 5; 71 / 6)

Արդ այսոցիկ այսպէս առ hմէնջ, մանաւանդ թէ hհանուր բարեպաշտաց խոստումանելոց: (71 / 9; 71 / 9)

Ասացուք դոյզն ինչ և առ այնոսիկ, որ տարակուսին և ասեն, թէ մինչ կատարեալ ասեմք hՔրիստոս ըստ ամենայնի զմարդկայինն, որպէս և զաստուածայինն, զիա՞րդ և ոչ երկու գոյացութիւնք ասին hՔրիստոս, առանձին

և գատաբար գոյացութիւն մարդկային զկնի անճառ միաւորութեան: (71 / 13; 71 / 15)

Ո՛վ դուք, զոր օրինակ մարդկայինս մեր հոգի միաւորեալ հմարմնի, ոչ փոխէ զնա յանմարմնութիւն, այլ և ոչ ինքն հմարմնի փոխեսցի, և համայն ոչ ասին երկու գոյացութիւնք, այլ մի գոյացութիւն և մի մարդ, այսպէս իմացիս և հ վերայ Քրիստոսի: (71 / 19; 71 / 20; 71 / 23)

Եւ զոր օրինակ, հուր մերձեցեալ յերկաթ՝ ոչ հ բաց բանայ զբնութիւն երկաթոյն, այլ ներսամտեալ խառնի հրոյն որակութիւն առ բոլոր որակութիւն երկաթոյն: (72 / 10)

Եւ զի հրաշափառագոյնս ասացից, ոչ փոխէ զերկաթն հուրն, և ոչ փոխէ առանց յերկուանալոյ, զի որ թուին էր և ցուրտ յառաջագոյն, լինի այնուհետև հհրոյն յազդմանէ ջերմ և լուսատեսիլ, ըստ նմին օրինակի թէպէտ և կատարեալ ասեմք զՏէրն մեր ըստ ամենայնի, այսինքն աստուածութեամբն և մարդկութեամբն, համայն յանասելի և հգերահրաշ միաւորութենէն մի ասի կատարեալ և մի անձն Տէր մեր Յիսուս Քրիստոս: (72 / 16; 72 / 21)

Եւ որպէս ունէր իշխանութիւն իւրն մարդկային հոգւոյ առ հղնել զնա և առնուլ միւս անգամ, այսպէս և բնաւիցն անձնականացն մասանց իշխանութիւն ունէր խոնարհել տալ յանցնիւրսն բնաւորականսն կիրս: (73 / 7)

Սովին օրինակաւ և ընդ մասանցն իւրոյն մարմնոյն միացեալ Աստուածն Բան ընդ ձեռն բանականի շնչոյն, յորժամ և ուրանօր և որքան կամեր, ազդեր անցնիւրոյն սգալ կարեացն, քաղցոյն և ծարաւին, ննջելոյն և աշխատութեանն և չարչարանացն, և յորժամ ոչ լինէր, կամ արգելոյր զայնոսիկ յիւրմէ մարմնոյն, բայց լինէր այս ըստ հինգ յեղանակս, և կամ թէ ըստ յոլովս խոնարհել մարդասիրաբար Փրկչին հմարդկայինս մարմին կամ առ հյախտակցեալ կամ առ վարդապետել կամ առ շահել կամ առ հճշմարտել կամ ընդդիմամարտաբար. և սոցա իւրաքանչիւր ոք յայտնի և բացորոշաբար բերէ և՛ զդէմ և՛ զիրն և՛ զտեղին և՛ զպատճառն և՛ զյեղանակ և՛ զժամանակ, և որպէս չէր հնար Փրկչական մարմնոյն Բանին Աստուծոյ ազդեցողութեան յիշել զիւրսն, զի և ոչ թափուր երբէք հնմանէ, ըստ սմին այսմիկ և ոչ զոլ կարէ կամ ասիլ գոյացութիւն առանձնապէս կամ կատարելութիւն յատկական կամ որոշակի ունել միտս առաջնորդականս և կամ բաժանաբար բերել անձնիշխանական կամս, քանզի առ ինքն ամենեքումքք այսոքիւք զմարդկայինն խառնեաց և միացոյց Աստուածն Բան: (73 / 23; 73 / 24; 74 / 1; 74 / 8)

Յաղագս որոյ և հԲանն Աստուած ամենայնքն վերաբերին ` և`
աստուածայինքն և` մարդկայինքն, և նորա են` եթէ կիրքն մարդկայինք, և եթէ
աստուածային սքանչելիք. զի Բանն Աստուած ծնաւ հմարմնոյ հԿուսէն, սակս
որոյ և Աստուածածին սուրբ Կոյսն և ծնեալն հնմանէ Աստուած
ճշմարիտ: (74 / 16; 74 / 20; 74 / 20; 74 / 22)

Բանն Աստուած եղեալ հգերեզման և հ ձեռն մարմնոյն, և հ դժոխս իջեալ հ
ձեռն իւրոյ մարդկային հոգոյն, յաղագս որոյ և լուծեալ յաղթութիւն մահու և
դժոխոց խայթոցն փշրեալ: (75 / 2; 75 / 3; 75 / 3; 75 / 4)

Բանն Աստուած առաքեալ հ Հօրէ անմարմնաբար և վերացեալ առ Հայր
հանդերձ մարմնովն, յաղագս որոյ` նոյնպէս որպէս էրն, կացեալ, մնացեալ
Երրորդութիւն նովին միով բնութեամբ Աստուածութեան: (75 / 7)

Նմա միայնոյ կրկնի ծունր երկնաւորաց և երկրաւորաց, և ամենայն լեզու
խոստովան լիցի, թէ Տէր Յիսուս Քրիստոս հ փառս Աստուծոյ Հօր: (75 / 17)

Եւ զի անտեղի և աննման զայս այսպէս իմանալ հ վերայ առաջնոյ
պատճառին, ապա և զասելն օտար և ամբարիշտ համարիմ: (76 / 17)

Առ որ ասեմ, թէ եղելութիւնն հ հոմանանունցն անտի է, զի են ոմանք, որ
յանգոյից հ գոյ ածան, յոլով եղեալք ասին, որպէս ինչ ասացան զհանուր
էակացո: (77 / 16; 77 / 18)

Եւ է որ ծնեալն հ ծնողէն ասի եղեալ, որ զհասարակականն և զյատկականն
միանգամ յինքեան բերէ. և է որ հ նիւթէ իմեքէ անօթ ինչ յօրինեալ եղեալ ասի, որ
նիւթոյն բնական է, և զանուն և զձև այլ ընկալաւ և զներգործութիւն, և է որ
յուրոք խառնութենէ յայլ փոխայեղիսցի և անուամբն և որակութեամբն, որպէս
ինչ հնարեցան հ ձեռն մակարդից ոմանց ստեղծանել հ կաթանէ զպանիր կամ
զեղ. և է որ ընդ ձեռին իրերաց զանցնիւրսն լուծանէր, որպէս հ վերայ խոնաւից է
տեսանել, որք են առ իրեարս և ոչ են սեռաբար յերկաքանչիւրսն, և է որ
երկակաց ոմանց էակաց հ միասին գոլով, յաղթեսցէ վեհագոյնն
վատթարագունին`
հաղորդ եղեալ
գորութեանն: (77 / 20; 77 / 22; 78 / 5; 78 / 6; 78 / 8; 78 / 10)

Զօր օրինակ հուր մերձենալով յերկաթ` փոխէ զորակութիւնսն և ոչ փոխէ
զեղութիւնն, զիւրոյն հ նմա տրամադրելով զեղութեանն պատահմունս, կամ
սպիտակութիւն զեղման ներկեալ գունով ծիրանոյ և անուանել ծիրանի, և
համայն գորոյն զիւր ոչ կորուսանէ: (78 / 15)

Արդ ամենեքեան այսոքիկ նշանակեալքս համանունաբար եղեալք ասին, որոց պայման եղելութեանն յոյժ տարբեր է հ միմեանց: (78 / 22)

Ձի ոչ յանգոյից սահմանել իշխեմք կամ զԲանն Աստուած կամ զնարմինն իւր, որ հ մարդկանէ, այլ որպէս Բանն հ շօրէ զիւրն ունի գոյութիւն, այսպէս զմարմնոյն իւրոյ հ Մարիամայ սրբոյ Կուսէն գոյացոյց զեութիւն: (79 / 1; 79 / 2; 79 / 3)

Այլ և ոչ ըստ երկրորդի նշանակութեանն, գոր ծննդոյն շնորհէն ծնողքն՝ ասի եղելութիւն, զի ոչ յաստուածայնոյն հայթայթէ բնութենէն Բանն իւր մարմին, այլ հ մարդկանէ, և ոչ ինքն առ հ Մարիամայ առեալ սկիզբն, այլ յԱստուծոյ շօրէ ծնեալ անժամանակաբար: (79 / 9; 79 / 9)

Դարձեալ և ոչ ըստ երրորդին ասի եղելութիւն, զի ոչ Որդին Աստուծոյ այլ ինչ հ մարմնանալն գտաւ ընկալեալ, քան թէ գոլով նոյն ինքն Որդի Աստուծոյ, այլ և ոչ զմարմնոյն իւրոյ զեութիւն կամ զանուն փոխեաց, այլ զնոյն զմարդկայինն արար արժանի լինել ինքէն մարմին: (79 / 14)

Այլ և ոչ ըստ չորրորդին բաժանակութեան եղելութեանս օրինակն, զի ոչ հոգեկանն իւր և մարմնականն ծնունդ ընդ ձեռն միջնորդի իրիք երթեալ ծանուցաւ, այլ հ շօրէ առանց միջնորդի և անժամանակաբար ըստ էութեան նորա, և հ մօրէ անմիջնորդաբար տնտեսութեանն յետ ժամանակի ծնունդ: (79 / 23; 80 / 1)

Ի սոցանէ ամենեցունց նշանակեցելոցս հ վերջինս, և որպէս և յայլոց ոմանց իմաստասիրացաւ, որ զփրկչական տնտեսութեանն օրինակէ խորհրդոյն յեղանակ, զի որպէս տեսանեմք զերկաթ առ հուր մերձեցեալ զբոլորն յինքն ընդունի զհրոյն պատահմունս՝ իւրոյն արտաքոյ լինելով որակութեանց, և համայն ոչ հրոյն յերկաթոյն յեղափոխել եղև գոյացութիւնն և ոչ երկաթն հ հրոյն, այսպէս և զԱստուածն Բան հ մարդեղութիւնն իմանալ պատշաճ է, որպէս և յումեմնէ իմաստասիրել եղև հ հարանցն: (80 / 7; 80 / 8; 80 / 15; 80 / 16; 80 / 18)

Կացեալ, ասէին, մինն որ էնն և միացեալ անքակաբար և առանց շփոթութեան և հ վերք քան զեղելոցս մտածութիւն: (80 / 20)

Դարձեալ յիշեն ընդդիմադրութեան աղագաւ զառաքելոյ բանն, «յորոց և Քրիստոս ըստ մարմնոյ, որ է հ վերայ ամենեցուն Աստուած օրհնեալ», ասելով, «և ոչ միով իրիք որոշեալ գտանիմ հ սահմանականն բնութեանն բանէ՝ Աստուածն ասելով, սակս որոյ ըստ այսմիկ ապա և ոչ մեղանչեսցուք և համագոյասել զփրկչական մարմինն Բանումն Աստուծոյ»: (81 / 3; 81 / 5)

Առ որս ասեմք, եթե ամենեքին այսպիսաբար ասացեալք h սրբոցն զՔրիստոսէ, ոչ առ մարմին տանի զասացելոյն ակնարկութիւն, այլ առ Բանն Աստուած, որ մարմնացաւ վասն մերոյ փրկութեան, զի և ոչ իսկ հետնի զմարմին ըստ մարմնոյ ասել h Հրէիցն: (81 / 10; 81 / 14)

Դարձեալ տարակուսեն՝ ասելով, «Քրիստոս ասացեալ եղև h Պօղոսէ և ոչ Բան, և Քրիստոս h վերայ երևելոյն ասի և ոչ h վերայ աներևելոյն»: (81 / 16; 81 / 17; 81 / 18)

Եւ մանաւանդ զի այսպիսին h պարզամտաճաբար խոստովանութեան, մեծապէս իմն ընդարձակէն զօձտող ճշմարտութեան զբերանս, յերկնից և կամ յաստուածութենէն բերել ասել տալ զմարմինն և կամ հեղմամբ և փոխմամբ իմանալ զմիաւորութեանն յեղանակ և կամ ըստ մարմնոյն և կամ զԲանն h ստացական իջուցանել բնութիւն: (82 / 3; 82 / 10)

Առ որս ասեմք, թէ միաւորութեանս բան h հոմանունաց անտի է և եղելութեանն տան, յաղագս որոյ զանց առնելով զայլովք նշանակութեամբք, զվերջինն զնորայն իրաւացի է և սմա յարադրել նշանակութիւն, զի մնալով անձախաբար յորոց, որք են ըստ նախասացելոյ բանին, յաղթեսցէ ամենայն իրօք զօրաւորագոյնն տկարագունին: (83 / 13)

Օրինակ իմն՝ որպէս ծածկեալ լինին աստեղացն պայծառութիւնք h մեծապայծառ արեգականն լուսոյ, մինչ զի թէ որք ենն, որպէս թէ ոչ իսկ իցեն h տունջեանն: (83 / 21; 83 / 23)

Եւ յաղագս այսորիկ ոչ ասին միանգամայն h միասին երկու բնութիւնք տին, այսինքն արեգականն կամ աստեղք կամ օր և զիշեր կամ լոյս և խաւար, այլ որք միանգամ հետնին անուանք արեգականն, նոքումք անուանեսցի տին. այսպէս իմասցիս և զմիաւորութեանն բան Աստուածն Բանի մարմնացելոյ, զի թէպէտ և իցեն անբառնայիք h մարմնի կացեալ, մնացեալ մարդկայինքն, այսինքն բնութիւն և կերպարան և դէմ և ևս առ այսոքիւք և բան և միտք և իմաստութիւն և զօրութիւն և կենդանութիւն և որ ինչ սոյնպիսիք, համայն ոչ ասին սոքա առանձնաբար h վերայ մարմնոյն, այլ յատուկն Աստուածն Բանէ կոչմանց անուանեսցին ամենեքին ասացեալքս, զի յաղթեսցէ ամեննին ամենայն իրօք վեհագոյնն նուաստագունին: (83 / 25; 84 / 6; 84 / 11)

Եւ յաղագս այսորիկ թէն անմեկնելիք մշտնջենաբար ընդ Աստուածն Բանում միացեալք մարդկայինքն, համայն անյեղիք և անայլայլելիք h յաղթողէն և յանյեղագունէն պահեալ եղև ստացականն, և համայն ոչ են ըստ այնմիկ, որ

զգեցեալ եղև, ևս առաւել ըստ առողին, վասն զի զգեցողին ճոխութենէ նախասացեալքն ամենեքին անուանեցին: (84 / 18)

Ասի մահկանացու մարմինն ըստ նախագոյակ իւրոյ բնութեանն, և ոչ ասի մահկանացու, զի անմահագունին ներկեալ եղև արմատով և է ամեննին անմահաբար և կենդանացուցիչ, գոյ արդարև յԱստուածն Բանում նկարագիր մարմնոյն իւրոյ բնութեան և ոչ ասի ի նմանէ ուրոյն բնութիւն, զի յԱստուածայնումն ծածկեալ և ընկղմեալ եղև բնութեան: (85 / 5)

Եւ յաղագս նորին ասի մի բնութիւն ունել Տէր մեր Յիսուս Քրիստոս. ոչ անմարմին, այլ զմարմնացեալն, զի և ոչ իսկ յարմարեցի յատուկ առ ինքն, միոյն ասիլ մի, այլ առ այն՝ որ ընդ նմա և ի նմա միացաւ և խառնեցաւ անքակաբար, ոչ ի միաւորութենէ համագոյ և կամ միոյ բնութեան ասել զԱստուածն Բան և զկենդանարարն իւր մարմին, և ոչ յանփոփոխն գոլոյ զբաժանումն և զերկմտութիւն դաւանել, ոչ ի կենդանին և ի բանաւորն և մտաւորն խոստովանել զփրկչականն մարմին, երկուս ասելով անբարշտել կենդանիս, և կամ երկուս բանականս և մտականս երկուս և ոչ ի մինն դաւանելոյ կենդանի բանական և մտաւոր, համագոյութեան տալ կարծիս Աստուածն Բանի և մեղսաքաւիչն իւր մարմնոյ: (85 / 11; 85 / 13; 85 / 17; 85 / 17; 85 / 21)

Իսկ եթէ որ ժպրհեցի հրաշացուցանել անուամբքս այսոքիկ, այսպիսեացն ի վերայ յարուցեալ և առ ի նզովել և առ ի քակտել զաղանդն՝ Մեծն Աթանասիոս Աղեքսանդրացի հայրապետն, որ առ Էպիկտիտոն թուխթն է: (86 / 7; 86 / 8; 86 / 8)

Յորոց հեռի արասցէ Հոգին սուրբ ի նորայն դատապարտութեան բանիցն, շնորհելով մեզ անբիծ դաւանութեամբ կալ յաստիսս և հանդէձելոցն հասանել բարեաց ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում՝ փառք յաւիտեանս ամէն: (86 / 12; 86 / 16; 86 / 16)

Եռակի տրամատի ամանակացն զանազանութիւն, ի ներկայս, յանցեալն, յապառնին, և ի սոցանէ ներկայն ի զգայութենէ և ի զհիտութեան, իսկ ապառնին թէպէտ և ի զհիտութեան դուզնաքեայ ինչ, այլ ի զգայութեան ամեննին ոչ, իսկ անցեալն՝ մօտաւորն ի զգայութեան, այլ ոչ և ի զհիտութեան, իսկ հեռաւորն մասնաւոր ինչ ի զհիտութեան: (87 / 7; 87 / 8; 87 / 8; 87 / 9; 87 / 10; 87 / 11; 87 / 12; 87 / 13; 87 / 14)

Արդ՝ զիս՝ րդ դուք վասն անցելոց հեռաւորացն ամեննին զձեզ հ գիտութիւն զոլ խոստովանիք և ասէք. «Թէ մի և նոյն բնութիւն նախաստեղծին յերկուս բնութիւնս զանազանեալ գտաւ, այլ բնութիւն ունել նմա յառաջ քան զյանցանսն և յայլ փոխել յետ յանցանացն, ասելով, յառաջ քան զյանցանսն անմահ էր և յանապական և ամենայն կրից և կարեաց մարդկայնոց անընդունակ, զի այնք ամենեքին յետ մեղացն հ նա չար յաւելեալ եղև»: (87 / 15; 88 / 7)

Եւ ոչ միայն այս, այլ և՛ զգայականի զօրութեանն արտաքոյ եղեալ և՛ բանականին հ ձեռն այտորիկ, զի ցանկականն և ցասմնականն զգայականին յարևանայ, զոր օրինակ խոհականն բանականին, ընդ ձեռն որոց ոչ ելոյ բնաւորականացս այսոցիկ. այս է՝ ցասմնական և ցանկութեան և խոհականութեան, ոչ կարեն զոլ և այնոքիկ, յորս սոքայն իցեն բնաւորեալք, զգայականն ասեմ և զբանականն: (88 / 13)

Եւ զիս՝ րդ զգայութեան ընդունակ ասի նախաստեղծն, անզգայ ըստ ձեզ եղեալ, և կամ բանական՝ անբան. և զի բանական նոքա՝ յօրէնսդրութենէ անտի և յայտ, այլ և հ հարցմանցն և հ պատասխանեացն առ միմեանս: (89 / 4; 89 / 4)

Եւ զգայութեանցն առհաւատչեայ տունկն հրաժարեցուցեալ, որոյ պտուղ առ ընդ զգայութեամբ ստորանկեալ եղև նոցա, թէ բանական աղենայն բնակող և պահապան, որով զգայութեամբ զգալին, և ընդ զգալովն՝ մարմին՝ և մարմնովն կիրք և կրական մարմին. և հ վեր հանելով զբանս հ բաց բարձեցելոյ կրիցն, բարձեալ լինի կրականն մարմին, և հ նմանէ զգալոյն զգայութիւնն, հ նմանէ բանականն, ուստի և մարդն: (89 / 11; 89 / 12; 89 / 13; 89 / 14)

Բայց ոչ ամենեքին այսք ասացեալքս խոտորման նմա առիթ, զի անձնիշխանութեամբն ճոխացեալ և զգուշացեալ պատուիանաւն, կարելի էր նմա ոչ միայն պիտակացն ոչ տալ թոյլ հպել առ բնութիւնն, այս է՝ մեղացն մահուն ապականութեան, և այլ բնականացն ունել իշխանութիւն սաստել և հնազանդեցուցանել և ուղղել զնոսա հ սպասաւորութիւն հաճոյիցն Աստուծոյ և ոչ լինել աղախին հեշտասիրութեանն: (90 / 1)

Եւ զի հ կամս ինքնիշխանութեան թողեալ էր ձգել նմա զմեղսն կամ հալածել, վկայէ պատուիրանն, «յորում աւուր ուտիցէք, ասէ, հ նմանէ, մահու մեռանիցիք», ուստի յայտ է, թէ մեղօքն, որ զպատուիրանն ուսոյց քամահել, քարշեցաւ մարդն հ մահ և յապականութիւն: (90 / 3; 90 / 6; 90 / 8)

Զօր օրինակ, զօրականն, որ հ հանդիսին ունէր տեղի, վահանընկեց լինելով, մատնեցաւ հ ձեռն ախոյեան թշնամոյն, այսպէս և մարդն

ինքնապատուիրութեամբ հմեղս հակամիտելով՝ գտաւ եղեալ ծառայ մահու և ապականութեան: (90 / 10; 90 / 11; 90 / 13)

Ընդ որով և զայս ասելի է, հչորս բաժանի կենդանական զօրութիւնն. հծննդական, սննդական, յաճելական և հտեղափոխելականն: (90 / 16; 90 / 17; 90 / 18)

Արդ յայտ է, թէ ծնանելի ունէր բնութիւն մերն նախահայր, վասն որոյ և հողածին անուանի, որ հհողոյ զանկեալ լինի յԱրարչէն: (91 / 1)

Նոյնպէս և աճեցականն, ըստ որում հդոյզն կողէն առ սակաւ սակաւ հ վեր տանելով աճմամբ, զմերն կատարելագործէր նախամայր Ստեղծիչն: (91 / 3; 91 / 4)

Իսկ զկերակրողական ունել զօրութիւն նոցա, ամենազան պտղովք դրախտին ճանաչի, զոր նախախնամողին յամենից նմա հրամայեալ ուտել, իսկ միայն միայնոյ անճաշակ լինել հծառոյն գիտութեան բարւոյ և չարի: (91 / 10)

Իսկ տեղափոխն լինել, հհպելոյ առ հրաժարեցուցեալ պտուղն և հթագչելոյն յայտնի եղեալ ճանաչի: (91 / 11; 91 / 12)

Արդ ուրեմն ճշմարիտ որպէս ներգործողքն, սոյնպէս և ներգործեալքն հնոցանէ, ևս առաւել ճշմարիտ և որ պատմէ վասն նոցա: (91 / 15)

Եւ սակայն ոչ վասն գոլոյն հնախաստեղծեցեալսն բնաւորականացն կրից, ընդ զմին և զմեղսն հնոսա բնաւորականս ասելի է, ոչ է այս, և մի՛ լիցի ասել զայս այսպէս, որք ոչ իցեն. հեռի յԱստուծոյ, զի ոչ եթէ էութիւն ինչ ըստ ինքեան է մեղքն, և ոչ մասն ինչ հմարդկային ստեղծուածիս հաստատել զնա Ստեղծողին, այլ հմերմէ ընկալաւ սորա սկիզբն ծուլութենէ և կամակորութենէ և հչարին պատրանաց զօրացեալ և հբանասարկութենէ: (91 / 17; 91 / 19; 91 / 23; 92 / 1; 92 / 3; 92 / 4)

Եւ ոչ դարձեալ զի օտար սա բնութեանս, թափուր յաղագս այսորիկ բնութիւնս և հկրից անտի բնաւորականաց, պարտ և արժան է զէն ասել, և զոչ էն ոչ սահմանեալ՝ և մի սուտ կարծեօք սակս երկոցունց ստել և մեղանչել: (92 / 6)

Իսկ եթէ նախաստեղծին ունէր բնութիւն՝ զառանց կրիցն և զանմահականն, սուտ ապա ըստ ձեզ եղ հ քաց երկոցելն զկիրս և նորուն աշակերտացն վերաձայնէ կրիցն: (93 / 17)

Ոչ է, ո՛վ դուք, մարդկայինք յերկուս բաժանեալ բնութիւն, այլ մի և նոյն յիսկզբանն ստեղծեալն իւր լուսափայլող պատկեր, որ հմեղացն գտաւ շաղախեալ, զգենլով՝ վերջին աւուրս ստեղծիչն՝ վերաստեղծեալ, զի ամենայնիւ որպէս, գրեցաւ, նմանեալ մեզ թանց մեղաց, և նովին կատարեալ բնութեամբս, զոր էառ ընդ մեր և վասն մեր մեղաց, պատերազմել ընդդէմ մարդկախոշոշ պատերազմողին: (94 / 13)

Ծնաւ հԿուսէ և առանց սերման, զի ցուցցէ, թէ ծնանելի էր հաստատեալ բնութիւնս, և այնպիսաբար թանց զուգակցի էր կարողութիւն ծնանել, և կացեալ, մնացեալ հպատուիրանապահութեանն: (94 / 19; 94 / 23)

Եւ յաղագս որոյ, զի նոյնագոյ և ազգակից զիւրն առաջնոյն բացայայտեցէ երկրորդն Ադամ, և զի ցուցցէ, թէ ոչ հմեղացն սակս ընդ բնութեանս այսոքիկ շարակապեալ եղեն, այլ յարատևողութեան վասն և բնաւորաբար յօգնութիւն մեզ սոքա հՍտեղծչէն պարզեցան: (95 / 11; 95 / 14)

Մեռաւ և թաղեցաւ և հդժոխս էջ անըմբռնելին նոցա, զի յերկաքանչիւր տեղեացն զկամօք հնոսա ընկղմեալն ազատեցէ՝ կամօք ազատ մնացեալ Տէրն, և զի ցուցցէ բռնաւորին, թէ ինքնակամութեան և հաւանութեան գործ. և ոչ զօրութեամբ քո բռնագբօսել պատկերս հճառայութիւն: (95 / 16; 95 / 17; 95 / 22)

Յերկինս համբարձաւ նստեալ ընդ աջմէ մեծութեանն հբարձունս, որպէս հ դէպ էասել, թէ և բոլորումս առաջի կայ ստեղծուածոյ զկնի յանգմանն կիսաաղբեալն հանդիսի զաստուածայինն ժառանգել փառաց աթոռ: (96 / 1; 96 / 1)

Այսոքիկ մեզ իմաստասիրեալ եղեն յաղագս յանդիմանելոյ զմոլորութիւն Մանեայ, և որք հնմանէ չար արմատոյ չարագոյն շառաւիղք, զՅուլիանայ ասեմ, և զԵւտիքեայ զառաջնոյն և զվերջնոյն, և զՅուլիոսեայ Ղկառնասացոյ և զնորուն ծննդոց: (96 / 7)

Որ և զմեզ պահեցէ պահպանող ձեռն Արարչին հնոցա սպանող և հկորուսիչ բանիցն, շնորհելով մեզ լինել աւանդապահ առաքելական աւանդիցն հՔրիստոս Յիսուս հՏէր մեր, որում փառք յաւիտեանս: (96 / 12; 96 / 12; 96 / 14; 96 / 15)

Առ այնոսիկ որ տարակուսին հ վերայ փրկչականն կրից մարդկայնոց, թէ բնական պարտ է ասել, թէ անբնական: (97 / 2)

Ոչ այնքան ծարաւեալն կարօտասցի աղբերն, որքան ուսումնասերն խնդրէ գտանել զայնոսիկ, առ որս գիտութեան իցէ մնացեալ նշխար, որպէս և դու, ո՛վ այրդ Աստուծոյ, միանգամայն և հայր բազմաց ի միաբանութիւն եկելոց առաքինասիրաց անձանց, խնդրեցեր առ ի մենջ գիտել զպատճառս, որով իւիք տարակուսին բազումք ի վերայ փրկչական կիրճնդունակութեանցն մարդկայնոց, թէ զբնական պարտ է զնոսա ասել, թէ յանբնականաց, և մանաւանդ զի ի գիրս զերկոսին գտանեմք ասացեալ ի սուրբ հարցն: (97 / 12; 97 / 13; 97 / 14; 97 / 18; 97 / 18)

Արդ կրկին իմն սահմանեցան անուանիլ բնական այս ձայնք ի վերայ մարդկային կազմածիս. մի՛ գոր Ստեղծողին ընդ ստեղծանելն անկեալ է ի ստեղծուածին, առանց որոյ և ոչ բնութիւն կարէր բաղկանալ, և միւսն, որ յախտասիրութենէ իւրմէ զկնի գոյանալոյն գտանելոց էր մարդն, գոր և գտեալ խառնեաց և բնաւորեցոյց ի բնութեանս, ընդ ձեռն որոյ՝ մեղաց և ապականութեան՝ մարդկային բնութիւնս թեքեցաւ լինել ծառայ, այս գոր և ասելս կամիմ: (98 / 1; 98 / 3; 98 / 7)

Ծնանելն բնութեանս են բերք և ընկալեալք յԱրարչէն առ ի մարդեղութիւնս ի բազմամարդութիւն հնարել, որ և բնականք են սոքա ի մեզ, իսկ զանասնականն և որ ընդ ձեռն երկակաց խառնից և խտղտմանց գտաք, մեք գնեմք հիմն մերոցս լինելութեան, որ և սա բնական անուանի: (98 / 12; 98 / 13; 98 / 14)

Զայս ոչ ի տնկագործողէն, մարդատունկս յինքենէ բերէ յազահութեան յազահութենէ, յանբանից առ ինքն ձգել՝ ընդ կազմածիս պատուաստեաց: (98 / 18)

Որպէս և Սներիանոս ասէ՝ Գաբաղայ եպիսկոպոս. «Հոգի և մարմին ծառայ են կարեաց, որ ի մեղսն տանիցին, և այնց կարեաց, որ արտաքոյ քան զմեղսն իցեն»: (99 / 1)

Եւ յառաջ մատուցանելով զբանն ասէ. «Թէ Տէրն կրեաց զմարդկայինն՝ զհոգեկան և զմարմնական կիրս, զայն որ առտաքոյ մեղացն իցէ» Զնոյն և Գրիգոր Նիւսացի, յօրինակ առնլով քաղցնելոյ Տեառն զտակառապետացն հնարս, ասէ. «նոքա ի պարզելն զգինին, զմաքրականին աղէտս ոչ անարգեն, իսկ զաւելորդ զխառնեալն ընդ նմա զփոշին՝ քամեն և ի բաց ընկենուն»: (99 / 9; 99 / 12)

Արդև ու դու, ո՛վ սիրելի և ծաղկահաւաք, ցանկացողդ լինել հոգեկանացոյ ճառից, ասացես ընդ սրբոց հարանցն աներկևան սրտիւ ստորասութեամբ և բացասութեամբ գերկոսին ի մեզ և մի շփոթեսցես և խաթարեսցես զլուսաւոր քո սիրտդ, այլ միայն ի միտ առեալ ծանիցես, ըստ որում՝ իմիք յեղանակի յիրեանցն շարադրութիւնսն ներածեալ իցէ երջանիկ հարանցն զունակութեան և զպակասութեան բան լինել ի մարդկային կազմածիս, յորոց ի միոյն հրաժարեալ՝ և զմիւսն ընդունել դաւանեցին զՔրիստոս սակս մերոյն փրկութեան: (99 / 17; 99 / 19; 100 / 2; 100 / 3)

Գլուխ աստուածային ժողովրդեան, հովիւ քրիստոսեան բանաւոր հօտի, հայր մեծ, ի մեծագունի աթոռն նստեալ առաքելոյն Պետրոսի՝ Աստուածապատիւ Տէր Աթանաս պատրիարքի Անտիոքոս մեծի, Խոսրովի նուաստ ծառայից: (100 / 8)

Յիշե՛ս ապաքեն, յորժամ հրամայեցեր ի Դերայիդրոշտադ եպիսկոպոսացն Թեոդոտեայ և Աթանասի հարցանել զիս վասն հաւատոյ: (100 / 14)

Իսկ Թեոդոտեայ ոչ միայն թէ հարցանելով ոչ էհարց զիս, այլ և զիրն, գոր երկնէրն, ոչ սակաւ սակաւ, որպէս օրէն է խոհեմագունից, այլ միանգամայն և ի միասին ի բաց թափեաց, գոր խորհէր զբանն, ոչ ուղեղս, այլ առաւել թիւրս և հակառակ սուրբ հարցն խոստովանութեան: (100 / 23; 100 / 23)

Եւ երանի թէ էր ժողովոյն զնոյնպէս արարեալ, երկոքին կողմանքս ի չարէ նորա աստուստ զերծեալ լինեաք, ոչ նա նենգաւոր և ոչ մեք նենգեալ գտանեաք: (101 / 11)

Ասացից և ես ի վերայ այսորիկ, գոր ասէրն Երեմիա. «ով տայր զգլուխս ջրհոր և զաչս աղբիւրս արտասուաց», և որ ի կարգին է: (102 / 3; 102 / 6)

Եւ զիս՝ որ ասէր ինք զինքենէ Քրիստոս առ աշակերտսն. «Տեսէք զիս, զի ես նոյն եմ», պարտ էր ասել մի կարծէք զիս, որ յառաջն էի, զի փոխեցայ յապականութենէ յապականութիւն և յանփառաւորութենէ ի փառս և յանկատարելութենէ ի կատարումն: (102 / 11; 102 / 12)

Զիս՝ որ և Պօղոս ասէր, թէ ոչ էր նոյն, «Յիսուս Քրիստոս ի փառս երեկ և այսօր, նոյն և յաւիտեանս»: (102 / 14)

Բանին Աստուծոյ փառացն և զօրութեանն և կատարելութեանն լեալ հաղորդ, զիս՝ որ ասէր Յովաննէս զանմարմին Բանն, թէ «տեսաք զնա և ձեռք մեր շօշափեցին ի վերայ Բանին կենաց»: (103 / 6)

Ծանեայ և գայս հնմա, ո՛վ Տէր իմ, զի որ ինչ ասէր, ոչ գիտէր սահմանել, այլև անդրէն իւրովք ասացուածովքն ընդ ինքեան և ոչ ընդ ոսոխի ումէք, մարտնչէր: (103 / 13)

Ասէր յարգանդի Կուսին միաւորեալ զԲանն Աստուած ընդ իւրում մարմնոյն, յաղագս որոյ և բնութիւն մի զՔրիստոս ասէր զոյ, և յառաջ մատչելով՝ զնոյն բաժանէր յայլանմանս և հզանազանս, որպէս յառաջն ասացի, զոմն ամենակատար և փառաւորեալ և անապական ասելով, և զմիսն ոչ նոյնպէս: (103 / 21)

Եւ դարձեալ զայպիսաբար բաժանելն անկարգապէս միաւորէր ասելով. «Ես հխաչին զնոյն ինքն զԱստուածն Բան ասեմ գեղարդեամբն խոցեալ և բևեռեալ բևեռօքն», որ գտանի այս հբերան այնոցիկ, որ շփոթութեամբն ժպրհեցան ասել զմիաւորութիւն Բանին ընդ իւրում մարմնում, զոր սուրբ Հարքն բարեպաշտաբար սակս նորին ուսուցին զմեզ խոստովանել ասելով. «անչարչարելին չարչարի չարչարելեան, եթէ անմահական և անչարչարելի Բանն իւրացոյց իւր հմարդկանէ մարմին, որով կարելի և հնարաւոր էր չարչարել և մեռանել»: (104 / 2; 104 / 5; 104 / 12)

Իսկ ես զարհուրեալ հչարաչար նորա հայիոյութենէ բանից, կապեցի զլեզուս և արձակեցի զլսելիսս, միանգամայն թէ և կամեցայ զբովանդակն գտանել զնորա զամբարշտութիւն: (104 / 14)

Ի դէպ է ըստ նմա ասել, թէ և առնուլ Բանին զմարմինն առանց Հոր և Հոգւոյն կամաց, և ահա թշնամութիւն զհետ երթայ յորս անբաւահատիկն է սէր և խաղաղութիւն, որք սիրոյն և խաղաղութեանն են աղբիւրք: (105 / 4)

Եւ ինձ մի ոք մեղադիր լիցի այսպէս բազմաթիւր մտածութիւնն յեղյեղուլ էպերական բանիւք, զի հնշաւակել ղիմաց վերայ՝ անգանի ամենայն պարսաւական բան: (105 / 12)

Արդ եթէ որպէս ասեն և այնպէս է, ոչն է այն, որ ոչ է այնպէս, աշակերտքն հվերնատանն ոչ զկենդանաբար և զմեղսաքաւիչ մարմինն ճաշակեցին, այլ զանկատար և զանփառ և որ չն ևս էր զգեցեալ զանապականութիւն: (105 / 15)

Իսկ եթէ ճշմարիտ է, որպէս և են իսկ ճշմարիտ բանն Քրիստոսի, որ զմարմինն յառաջ քան զյարութիւնն անուանեաց նոր ուխտ և քաւիչ մեղաց և կենաց տուող, ապա յայտ է, թէ նա է սուտ հսերմանել հլսելիս հաւատացելոց Քրիստոսի զմուար վարդապետութիւնն: (106 / 2; 106 / 2)

Եւ վկայ ածեր զփրկչականն բան իւրոյ բանին. «Հայր փառաւորեա զիս առ իքէն փառօք, և թէ փառաւորեա զՈրդի քո, և թէ Յիսուս չն էր փառաւորեալ» աստի ասէր յայտ, թէ իյարութեանն զգենլոց էր փառս և զանապականութիւն և զկատարելութիւն: (106 / 5; 106 / 8)

Արդ ըստ նորա բռնադատելոյն զմիտս բանիս՝ Բանն Աստուած փոխեցաւ ի հայրական փառացն ի լինելն իւր մարդ՝ «թէ զոր ունէի առ իքէն յառաջ քան զլինելն աշխարհի», որովհետև լինի այս, թէ Քրիստոսի մարդեղութիւն աշխարհի փրկութիւն գործեաց և ինքեան անձին հասոյց զրկանս և աղքատութիւն» իսկ զի՞նչ ասացեալն ի նմանէ ի վերնատանն, «այժմ փառաւորեցաւ Որդի մարդոյ», և կամ զՀօր զաղաղակելն յերկնից. փառաւոր արարից», և այսորիկ յառաջ քան զյարութիւնն: (106 / 11; 106 / 12; 106 / 13; 106 / 18; 106 / 18)

Այլ և զայն ասելի է ըստ նորա մտածութեանցն, թէ և Հայր կարօտ էր փառաց, զի զկնի ասելոյն, «այժմ փառաւորեցաւ Որդի մարդոյ» ի վերայ բերէ, թէ «Աստուած փառաւորեցաւ ի նմա»: (107 / 4; 107 / 5)

Նոյնպէս և զառաքելոյն բանն քարշէր իւրոց բանիցն ի վկայութիւն, զոր ի պրակսն իսկ է գրելն» և զի ոչ ևս դառնալոց էր մարմին նորա յապականութիւն, դառնալ, յորում էրն, զայն ասէր: (107 / 7; 107 / 7)

Յարէր յասացեալս և զայն ևս, մի ձանձրանալ ի լսել, ամաչեմ, Տէր իմ, զոր լսեցոյց ինձ մի ըստ միոջէ Թեոդիտէ, զի և տուեալ իսկ է քեզ յԱստուծոյ յերկայնամտութիւն և զքաղցրութիւն, զի թէ թարգմանն առ ժամայն ոչ էր գնացեալ, անդրէն ի տեղւոջն իսկ կամէի ընդ քեզ խօսել յանդիման նորա. և զի ասէր, թէ վասն զի անկատար և անփառաւոր և ապականացու եկաց, մնաց մարմինն Քրիստոսի ի ծննդենէն մինչև ցյարութիւնն, պարտ էր ըստ այսմիկ և զնա չարչարելի և մահկանացու ասել մինչև ցյարութիւնն. ոչ զայն ասեմ, ասէր, որ ի գերեզմանին և կամ որ ի մեղացն է, այլ որ ինչ միանգամ յիրաքանչիւր կիրսն գտանի, ի հոգեկան և ի մարմնական, զայն ընդունել ասեմ Քրիստոսի ի մարմինն իւր: (107 / 11; 107 / 16; 107 / 19; 107 / 23; 107 / 23; 108 / 2; 108 / 2; 108 / 3)

Արդ տ՛ես, Տէր իմ, թէ որպէ՞ս անպատկառաբար զաննման բանն բռնադատէ աննման մտածութեամբք և ջանայ զմարգարէին զուղիղ բանն, «ոչ տացես սրբոյ քում տեսանել զապականութիւն», առ իւրն քարշէլ թիրել խորհուրդ, զի թերևս կարասցէ ի ձեռն այնորիկ զգեցուցանել մարմնոյն Քրիստոսի զապականութիւն: (108 / 9)

Եւ զոր մարգարէն զբանն հ հանդերձեալ ժամանակն հայեցուցանէ առ որ ինչ լինելոցն է, սա զնոյն հ վերջ յանցեալն դարձուցանէր ժամանակն: (108 / 16; 108 / 17)

Ոչ հեռի և օտար է մարդկային բնութեանս զկնի մահուանն վերստին յառնել և ընդ լծով մտանել մահու և ապականութեան, զոր օրինակ Ղազար և ըստ նմանքն, որ սքանչելոքն Փրկչին յարեան և հ նմին հաստատեալ կացին, մնացին յապականացու և հ մահկանացու կեանս: (108 / 23; 109 / 2)

Բայց արդ դարձեալ երթիցուք վերստին առ մարգարէական բանն և հ նմանէ իսկ առեալ պատճառ լուծանել զտարակուսանսն Թէոդիտեայ, թէ արդ արդե՞օ՞ք իցէ հ գրոյն գայթակղելն նորա և ոչ յինքեան կամակորութենէ և յամառութենէ, և զի սովորութիւն է գրոց ոչ միայն թէ հ վերայ նորին դիմի և ամանակի պահել զառաջարկութեան բանին հոլով, այլ է երբէք, որ առ միմեանս փոփոխեալ լինին, որպէս և ասէ ուրեմն Դաւիթ հ ՃԼԶ սաղմոսին, «Առ զեսս Բաբելացոց» և այլն: (109 / 4; 109 / 7; 109 / 9; 109 / 13)

Բանն ասացեալ լինէր առ Երուսաղէմացիս, որ հանդերձեալ էին երթալ հ գերութիւն հ Բաբելոն հ Նաբուգոդոնոսորայ, և մարգարէն զինքն հ ներքս արգելեալ փակէ հանդերձ անցելովն ժամանակաւ: (109 / 16; 109 / 16; 109 / 16; 109 / 17)

Եւ արդ զի՞նչ զարմանք են, եթէ առաքեալն յերկուս բաժանէ ամանակս զմարգարէին բան հ հրապարակախօսութեանն իւրում, զմին բանն պատմած իրաց մանր խոնարհեցուցանէ յանցեալ ամանակն ասելով, զի յարոյց զնա հ մեռելոց. իսկ զմիւսն մարգարէական ձևով շարադրել յապառնիս հայեցուցանէր ասելով, «ոչ ևս դառնալոց է մարմին նորա յապականութիւն» որ յայտնապէս աստուստ բացափայլեալ բանիս հոլանիցին միտք, և յանդիմանեցի Թէոդիտեայ տարակարծելի մտածութեանն ձայն, յորում զերկոսեան առ մին շարամանելով տապալումն ներադրեսցէ զբառս այսպէս ասելով՝ ըստ անցելումն, և զի յարոյց զնա Աստուած հ մեռելոց, և ոչ դարձցի մարմին նորա յապականութիւն և կամ ըստ ապառնոյն այսպէս, և զի յարուցանելոց էր զնա Աստուած հ մեռելոց, և ոչ դառնալոց էր մարմին նորա յապականութիւն: (109 / 21; 110 / 2; 110 / 12; 110 / 15)

Արդ զայս հ լոյս բերել հ շնորհաց Հոգւոյն սրբոյ և եղեալ առաջի աստուածասէր բարեբարոյից, որ ընդունելոց է ընկալցի, և որ արհամարհելոց է, արհամարհեսցի: (110 / 17; 110 / 17)

Բայց այսօրիս ասացուք և զայս. զի թե՛ զյարութիւնն ապականութեան ծառայեաց մարմինն Քրիստոսի և զկնի յարութեանն փոխեցաւ յանապականութիւն ի՞նչ իւրիք մեծացոյց զնա յառաջասացութիւն սուրբ Հոգւոյն, և կամ որո՞վ իւրիք առաւելեալ գտաւ մարմնացեալ Բանն Աստուծոյ, որ հծննդենէ մինչև զգերեզման թաղեալ կան յապականութեան և ապա յարութեամբն զգենուն զանապականութիւն: (111 / 4)

Եւ դարձեալ զկնի յարութեանն հ բաց բարձեալ եղեն հ փրկչական մարմնոյն անուանք մարդկային բնութեանս, ընդէ՞ր ապա փախչի հ Յուդիոմեայ Ղիկառնացոյ, զի երկոքին զմի կարծիս ունին վասն մարմնոյն Քրիստոսի. նա հծննդեանն ոչ խոստովանելով զայստսիկ զանուանս, պարտաւորեցաւ առ աչօք ասել զմարմինն Քրիստոսի, և սա զկնի յարութեանն զայստսիկ հ բաց բարձայով հ մարմնոյն Քրիստոսի զանուանս. զնոյն խորհին վասն Քրիստոսի, ոմն յառաջ և ոմն յետոյ համաձայն լինելով իրերաց, նոյնպէս երկոքին առ աչօք գտանին ասացեալ զմարմինն Քրիստոսի և կամ յերկնից բերեալ: (111 / 8; 111 / 9; 111 / 10; 111 / 13; 111 / 16; 111 / 16)

Եւ դարձեալ թե՛ որպէս ասեն զկնի յարութեանն լինել Բանին Աստուծոյ և մարմնոյն իւրոյ միաւորութիւն, և հմիաւորութենէ անտի մի ասել հ վերայ Քրիստոսի բնութիւն, ոչ կարէ հեռանալ հ Նեստորի մոլորութենէն, զի և նա զնոյնդ ասէր: (112 / 1; 112 / 2; 112 / 3)

Սակայն մի ինչ հնա լաութիւն գտանի քան հ սմա, զի Նեստոր հծննդեան, որ հկուսէն, մինչև ցաւիտեան երկոցունց բնութեանցն զմի պատիւ և փառս շնորհէր, իսկ սա զոմն արժանի առնէ այնոցիկ և զոմն հնոցանէ զրկէ: (112 / 5; 112 / 6; 112 / 6; 112 / 6; 112 / 9)

Արդ ոչ միայն թե՛ զանհաւանութիւն և զանհաւատութիւն ասացեալքս հ Թէոդիտեայ, այլ առաւել ևս զտուան յինքեան բերէ, զի թե՛ ճշմարտեսցի ծննդեան ասել զԲանին ընդ իւրում մարմնոյն զմիաւորութիւնն, ստեաց զյաղագս նորին յետ յարութեանն ասել զմիաւորութիւն, իսկ եթէ ճշմարտեաց զվերջինս, ստեաց զառաջինն, զի եթէ զերկոսին միանգամայն հ միասին կամ ճշմարտել կամ ստել, անտեղի ըստ նմին և զմի զբնութեան ասել հ վերայ Քրիստոսի, թե՛ համագոյութեան բանին և մարմնոյն ասէ, այդ հ Կորնթացիոցն յանգի հերձուած, զորմէ զրէ Աթանաս առ Էպիկտէ, «թե՛ ո՞ր դժոխք զգայոցին ասել մի բնութիւն Բանին և մարմնոյն». զի ըստ համագոյութեան ասել մի բնութիւն հ Քրիստոս, առնէ զԵրրորդութիւնն չորրորդութիւն՝ և ոչ ևս Երրորդութիւնն: (112 / 16; 112 / 23; 113 / 1; 113 / 3; 113 / 7)

Ապա եթե ըստ միաւորութեան ասէ զմի բնութիւն հ վերայ Քրիստոսի, ուրանօր զմիաւորութիւն խոստովանի անդանօր և զմիաւորութիւնն հարկաւոր է ասել հ վերայ Քրիստոսի և կամ հ ծննդեանն և կամ յարութեանն: (113 / 10; 113 / 13; 113 / 13)

Զի հ ծննդենէն և յառաջ մի ասել բնութիւն, և զմինն դարձեալ յերկուս բաժանել որակութիւնս և զերկուսին ընդ զանազան կրիւք և ներգործութեամբք արկանել, ոչ միայն թէ ստութիւն, այլ ընդ ստութեանն և զանուսումնութիւն բերէ: (113 / 14)

Եւ դարձեալ զի ա՛րդ Աստուածածին զիտէ ասել զսուրբ Կոյսն, զծնեալն հ նմանէ անհաղորդ լեալ ասելով աստուածային զօրութեանն և փառացն և անապականութեան և կատարելութեան: (113 / 21)

Որպիսի ինչ օրինակաւ կարծեսցէ գոլ զծնեալն, ըստ նմին անուանեսցէ և զծնօղն. մա՛րդ ասէ զծնեալն հ նմանէ՝ թափուր հ փառաց և հ կատարելութենէ և որ ոչ է զգեցեալ զանապականութիւն, ըստ այսմիկ արժան է մարդածին անուանել զսրբուհին Մարիամ: (114 / 6; 114 / 6; 114 / 6)

Գտանի այսպիսաբար դաւանութեամբ գերազանցեալ քան զՆեստոր յամբարշտելն, զի Նեստոր, որպէս յառաջն ասացի, երկոցունց բնութեանցն զմի ունէր ասել զճոխութիւն և զփառս և զպատիւ, այսինքն է աստուածայնոյն բնութեանն և մարդկայնոյն, իսկ սա զԱստուածն Բան ունող այսոցիկ ասէ գոլ, իսկ զմարմինն ամեննին անբաժ սոցա լինել ասէ մինչն ցյարութիւնն, և ապա յետ յարութեանն չօր և չոգւոյն ասէ վերաբերել զմարմինն հ փառս, հ կատարելութիւն և յանապականութիւն, և արժանի առնել այնուհետն աստուածային Բանին բնութեան հաղորդելոյ: (114 / 20; 114 / 21)

Եւ այս վեր հ վայր ուղղողի ստութեանն, անդէն հ նմին ընկղմեալ գտանի խոստովանութեան. զԱստուածածին անուն դնէ հ վերայ Կուսին և ծնեալ ասէ զերեզմանի զԱստուած, զոմն անուամբ միայն պատուէ, և զոմն արդեամբք. զմարդն կենդանի և զբանականն և որ պատկերն է Աստուծոյ ոչ համարի արժանի ծնող գոլ Աստուծոյ, և զանշունչ զերեզմանն Աստուածածին անուանէ: (115 / 1; 115 / 2; 115 / 3)

Եւ զնոյն ասէ և ոչ ասէ, բանիւ խոստովանի զՄարիամ Աստուածածին, և զծնեալն հ նմանէ զՔրիստոս Աստուած, և զճշմարտութիւն իրին յարութեամբն հաստատէ. յորում տեղոջ զբանն հաստատէ, անտանօր պարտ էր և զգործն հաստատել, և կամ ուրանօր զգործն ճշմարտէ, ճշմարտել և զբանն: (115 / 12)

Ջի ամենայն իրի սահման յերիցս յայցանէ կատարի, ի մտածութենէ գոյին, և ի նոյն ինքն ի գոյին, ի տեսութենէ և ի բառէն, որ սահմանէ զիրն, որպէս որ կամիցի զսահման մարդոյն բացայայտել նախկին յարձակի մտօքն տեսանել զմարդն, և զնոյն մտացն տես և աչացն առաջի դնէ, և ապա բանիւ զնոյն սահմանէ ասելով մարդ, կենդանի, մահկանացու, մտաց և հանճարոյ ընդունակ: (115 / 18; 115 / 19; 115 / 19; 115 / 19; 115 / 20)

Իսկ ապա յետ սուղ ինչ ժամանակի թողու զառջատոյն բան և ի վերայ բերէ զանարծուին: (116 / 12)

Գաբրիէլ հրեշտակապետ յաւետարանել սրբոյ կուսին ասաց. «որ ծնանելոցն է ի քէն սուրբ է, և Որդի Աստուծոյ կոչեցցի»: (116 / 17)

Իսկ Թէոդիտէ ասէր. «ի Մարիամայ ծնեալն անփառաւոր և անկատար է և զապականութիւն զգեցեալ և ապա կեղծաւորի ասելով, «ի գերեզմանին զապականութիւն ոչ ասեմ ընդունել մարմնոյն Քրիստոսի»: (116 / 19; 116 / 22)

Օրինակ իմն որպէս ոմն յումեմն մեկնոցի հուր ծրարելով, վերաձայնէ ոչ կիզուլ մեկնոցին ի հրոյ անտի. և հնար իսկ ոչ է այսմ այսպէս լինել, զի ամենայնքս ի մարմնականացս որ հանդերձեալ իցեն զանապականութիւն զգենուլ, նախկին ապականի գոյացեալ իրն, որպէս Պօղոս իմաստասիրէ և ապա նորոգի անգուստ յանապականութիւն: (117 / 1; 117 / 3)

Արդ եթէ գերեզման եղև զգեցուցանող մարմնոյն Քրիստոսի, զանապականութիւն ասել պարտիս. թէ կամիս և թէ ոչ կամիս. նախկին ապականեալ զմարմինն ի գերեզմանին, որպէս պահանջէ իրացն թէ բնութիւն, և ապա յետ այնորիկ փոխել նմա յապականութենէ յապականութիւն: (117 / 11)

Եւ ոչ միայն այս, այլ զի ի սկզբան լինելութեանն նորին օրինակաւ զայ ի գոյացութիւն, պատճառ գոյացութեանն նախկին լուծանի յիրմէն պատճառէ, և ապա զկնի այսորիկ լուծեալ և յապականեալ իրէն առնու սկիզբն լինելութեան գոյութեան, որպէս և իմաստասէրն բնութիւն զի սկիզբն զայն անուանեաց ասելով, սկիզբն շարժման և դադարման, այսինքն, եթէ լուծանէ շարժեցաւ յայնմանէ, որ ինչ էրն և առնլով զգոյացութիւն կատարման, դադարեաց: (117 / 15; 117 / 16)

Արդ ասա՛ ինձ, ո՛վ Թէոդիտոն, զիա՞րդ եբեր ընդ իւր մարմինն Քրիստոսի զապականութիւն, զանփառութիւն, զանկատարութիւն, պատճառ ոչ ունելով ի սկզբան լինելութեանն, որ զայսուսիկ յապականելն իւրում նմա երթեալ

մատուցանէր, «զի որ հնմայն ծնեալ է, հճոգոյն սրբոյ է», ասաց հրեշտակն առ Յովսէփ: (118 / 6; 118 / 8; 118 / 9)

Եւ եթէ մարդկան սերման էր բողբոռջն Քրիստոս, հաւանէ՞ր արդեօք և զպտուղն ըստ բնութեան քատակել արմատոյն, իսկ եթէ հճոգոյն սրբոյ է ըստ հրեշտակապետին ձայնի աստուած ծնեալն, զի Աստուած ծնելութեան առիթ: (118 / 13)

Աթանաս ասէ. «վասն զի մարմնանալն Քրիստոսի յանամուսնութենէ և առանց մեղաց էր, ոչ գտաւ հնմա ապականութիւն, զի ոչ կարէ բնակիլ մահ ընդ կեանս, և ոչ ապականութիւն ընդ անապականութիւն բնակէ»: (118 / 18)

Ընդէ՞ր դու, ո՛վ Թեոդիտէ, հ բաց բառնաս հՏեառնէ զերկրայնոյն զմեծութիւն զօրութեանն և ոչ տայ թոյլ յաղթել հզօրին զտկարագոյնն և բարձրագունին զնուաստն, զորմէ ասէ Գրիգոր աստուածաբան. «խառնեցաւ ընդ Աստուածութեանն և եղև մի, վեհագունին յաղթելով»: (119 / 1; 119 / 2)

Եւ դարձեալ ոչ է իրաւացի զերիս զայսոսիկ զանուանս շփոթել ընդ միմեանս և խառնակել, և հ ձեռն անարարողութեան դոցա անարժան սահման տալ հ վերայ պատուական և անարատ մարմնոյն Քրիստոսի, զի ոչ են մի և ոչ միոյ իրողութեան: (119 / 15; 119 / 16)

Քանզի չարչարելին ոչ է, և ոչ ասի չարչարանք, և մահկանացուն մահ, և ոչ ապականացուն ապականութիւն, քանզի չարչարելին բնութիւն բացայայտէ, իսկ չարչարանքն զներգործութիւն, և չարչարելին և առանց չարչարանաց և միշտ ասի հ վերայ չարչարելոյն, իսկ չարչարանքն յորժամ չարչարին: (120 / 2)

Եւ եթէ ասէ զնոյնս «Ոսկեբերանն Յոհան, «մահկանացու ասի մարմին, այլ ոչ մահ մարմին, և ապականացու ասի մարմին, ոչ ապականութիւն մարմին, քանզի մարմին այլ գործ եղև Աստուծոյ, իսկ ապականութիւն և մահի հ մեղաց հ ներքս մտին»: (120 / 9; 120 / 9)

Արդ մահկանացու չարչարելի ասի մարմինն Քրիստոսի որպէս և յայնժամ, նոյնպէս և այժմ և միշտ, իսկ զչարչարանս և զմահ, յորժամ կամեցաւ և ընկալաւ Տէրն հ մարմին իւր, յիւրում սահմանեալ ժամու, ընդ նմին և զայլ կիրս մարդկայինս, որպէս և ինքն իսկ ասէր, «ժամանակ իմ չև է հասեալ, իսկ ձեր ժամանակ յամենայն ժամ պատրաստ է», յայտ արար թէ մարդկան հանապազ և ամենայն ուրեք ակնկալութիւն է ընդունել զերկիւղ մահու և զվտանգ: (120 / 15)

Իսկ Քրիստոս ըստ առաջ սահմանեալն ժամանակի և յորժամ ինքն կամեր խոնարհել h մարդկայինսն, և ոչ եթէ կիրքն կարող էին զիրաքանչիւրսն h վերայ ածել մարմնոյն նորա զվտանգն, որպէս միոյ միոյ ուրուք h մարդկանէ: (120 / 24; 121 / 1; 121 / 3)

Եւ Բարսեղ ասէ. «մարմնոյն որ h բնութեանն յարմարագոյն էր պատահումն, թողացոյց»: (121 / 13)

Եւ հարքն որ ասացին զՔրիստոս չարչարելի և մահկանացու և ստացական մարմնով և անչարչարելի և անմահականացու և անստացական աստուածութեամբն, ոչ որոշաբար և ոչ ծննդենէն ցյարութիւնն զայսոսիկ ասեն, այլ h վերայ միոյ մարմնացելոյ Բանին որ h չօրէ ասէին զերկոսին և հանապազաբար, որպէս և Կիրեղ ասէ. «Յետ անճառ միաւորութեանն թէ Աստուած ասացես զԷմմանուէն, զմարմնացեալ Բանն, որ յԱստուծոյ չօրէ, իմանամք, և եթէ մարդ ասացես, ոչ զայլ ոք, այլ զնոյն ինքն զմարմնացեալն վասն մեր զԲան Աստուծոյ իմանամք, և շօշափելի և տեսանելի եղեալ զանշօշափելի և զաներևոյթ Բանն և ոչ ուրոյն h վերայ մարմնոյն զայս ասեմք, որ շօշափելին էր և տեսանելին»: (122 / 13; 122 / 14; 122 / 23)

Զի առանց իրերաց զմի h սոցանէ ասել h վերայ Քրիստոսի, գտանի ասացեալ զնա կամ սոսկ մարդ կամ սոսկ Աստուած: (123 / 1; 123 / 2)

Եւ դարձեալ առանձնաբար զնուաստագոյնսն ասել h վերայ մարմնոյն Քրիստոսի, ոչ կարես հեռանալ h մտածութենէ բաժանողացն զՔրիստոս, և ոչ լինի մեռեալ վասն մեր Քրիստոս, և ոչ լինի մեռեալ վասն մեր Քրիստոս, այլ վասն իւրեան, որպէս ասաց Նեստոր, և ոչ լինի կամաւ ընկալեալ զմահ խաչին, այլ h հարկէ և ակամայ եկեալ h մեռանել: (123 / 5; 123 / 6; 123 / 11; 123 / 12)

Եւ ոչ են միայն այսոքիկ անուանք, որ հետևին մարմնոյն Քրիստոսի h մարդկութենէս չարչարելի և մահկանացու զնա ասել, այլ ընդ սոքօք են և այլք յոլովք, այսինքն մարդկային և երկրային և բովանդակելի և շօշափելի և զգալի և տեսանելի: (123 / 14)

Արդ եթէ չարչարելին և մահկանացուն ցգերեզման և եթ ասացաւ զնմանէ և զկնի յարութեանն ոչ ևս ասցի, հարկ է ապա զկնի համբարձմանն անտեսանելի և անշօշափելի զնա անուանել, մանաւանդ թէ ոչ ասել զնա ո՛չ երկրային և ո՛չ մարդկային, որովհետև վախճանեաց զլինելն h վերայ երկրի և զընդ մարդկան շրջելն, և անուանեալ զնա փոխանակ սոցա ամենեցուն իմանալի և

անբովանդակելի և երկնային, զի յերկինս վարեցաւ, և յիմանալիսն երթեալ փառօր բազմի: (124 / 1)

Եւ յանբովանդակելին ընդ Հօր բարձրացեալ նստի յաթոռ, այլ սակայն հանդերձ մարմնով, զոր էառ հկուսէն, համբարձեալ և ոչ փոխեաց զնա յանմարմնութիւն, որպէս և ասաց Տէր Եփրեմ: (124 / 8)

Յայտ է թէ լինելով Որդի յիմանալիսն անյեղի մարդկային մարմնովն, համարձակութիւն է մեզ և զանուանսն նշանակիչս բնութեանս կոչել հ վերայ նորա համայն բարեպաշտարար և որպէս աւանդեցին մեզ սուրբքն, այսինքն զնոսին զբնականսն անուանս հակառակաբար առնուլ հ վերայ Բանին և մարմնոյն իւրոյ, զի եղիցին բնականքն ըստ բնութեանն և հակասացեալն ըստ միաւորութեանն: (124 / 14; 124 / 17)

Ջի և յայտնագոյնս ասացից, բնական է Աստուածն Բանի անչարչարելի և անմահն գոլ և խոստովանեալ եղև հբարեպաշտից զնա չարչարանաց և մահու համբերեալ, յաղագս ընդ չարչարելոյն և մահկանացուին միաւորելոյն: (124 / 23)

Այսոքիկ բարեկարգապէս ընտրողութեանք Բանն տեսանելի և շօշափելի ասացաւ հՅոհաննէ, և երկրային մարմինն յերկնից իջանել ասացաւ հՊօղոսէ, և նոյն ինքն հՔրիստոսէ, որ հետևի այս նոցա ոչ ըստ բնութեան բանին, այլ ըստ յեղանակի միաւորութեանն: (125 / 7; 125 / 8; 125 / 9)

Ջի բնութեամբ Բանն զանտեսանելին ունի և զանշօշափելին, որպէս սուրբն Բարսեղ ասէ. «բնութեամբ մարմինն Քրիստոսի մարդկային, իսկ միաւորութեամբ տնօրէնութեանն աստուածային», հ վերայ բերել սորա իրաւացի է և զայն, վասն զի միով օրինակաւ տպաւորեալ գտանին առ ճշմարտութիւնն: (125 / 16)

Բնութեամբ է փրկչական մարմինն չարչարելի և մահկանացու, իսկ միաւորութեամբ տնօրէնութեանն անչարչարելի և անմահ, սոքօք երկոքումքք, այսինքն է՝ բնութեամբ բանի և միաւորութեանս հիմնեցուցեալ և հաստատեալ եղև եկեղեցի Քրիստոսի հ վերայ վիմին հաւատոյ՝ ընկալեալ յառաքելոցն սուչութենէ: (126 / 1)

«Սա է որ կայ հկանգնումն և հզլորումն բազմաց և հ նշան հակառակութեան», որպէս ասացն Միմէովն, հսմանէ հրեայք գայթակղին և յիմարին հեթանոսք, այս է որ առնէ զհերձուածողացն, զմոլորութիւն որպէս ասէ աստուածաբան անուանցն լծակցութիւն և օտարութիւն լծակցելոցն անուանցն»: (126 / 3; 126 / 3; 126 / 4; 126 / 5)

Ջի թեպէտ h մարդեղութենէ գլուխ եմ ես մարմնոյ եկեղեցոյ, և եկեղեցի անդամք յանդամոց իմոց և մարմին h մարմնոյ իմոյ, այլ սակայն հանդերձ անփոփոխութեամբ տնօրինեալ ազգակցութեամբ՝ հարազատութեամբ, և ոչ փոփոխելի ինչ իրօք, զի իմ է Հայր ըստ բնութեան և ըստ անսկզբնական ծննդեանն, իսկ ձեր ըստ շնորհի որդեգրութեանն, և ես զնա կոչեմ ինձ Աստուած h ձեռն անքակաբար միաւորեցելոյ ստացականիս, իսկ դուք ստեղծեալք h ձեռանէ նորա, ըստ բնութեան էր նորա ստացուած, զոր օրինակ նա ձեր ըստ բնութեան Արարիչ: (126 / 20; 126 / 22; 127 / 6; 127 / 8)

Բաց թէ զի՞նչ պետք էր մեզ h ճանապարհ անկանել, զբանս մեր երկուք առաջարկութեամբք և առանձնաբար բազմացուցանել բանս h վերայ մարմնոյն Քրիստոսի՝ իբրև h վերայ գոյակցի և համաբուն եղելոյ Բանին, եթէ ոչ առ h քէն բռնադատել ակամայ յանսովորականն հրամայեցաք էլանել բանիս մերում ասպարէս ըստ այլ և այլ ժամանակաց և ազգի ազգի անօրինականաց Փրկչին գործոց բազմաց h ներքոյ եղեալ ընդէ փոխմանց գտերունական մարմին, զմի և զնոյն զՈրդին Աստուծոյ բաժանես h բազում քրիստոսս և յորդիս բազումս: (127 / 11; 127 / 14; 127 / 15; 127 / 16; 127 / 20; 128 / 1)

Ջի զինչ պարտ և արժանէ զգոյն սպիտակութեան ասուն առանձնակի յիշել, որ ներկեալ և ծածկեալ եղև գունով ծիրանոյն, և կամ գորակութիւն զգրտութիւնն և զթխութիւն երկաթոյն որոշաբար տրամաբանեալ, որ ամեննին արտաշիկացեալ և հրացեալ եղև ամեննին h զօրութենէ անտի հրոյն: (128 / 8)

Ըստ այսմ օրինակի արարչական բանն ըստ ստացականի մշտնջենաւորապէս միացեալ ընդ մարմնոյն և ոչ մի զնորա թափուր թողեալ h մասանց առ h յիւրմէ զօրութենէն, այլ զբոլորն յիմանալոյն և h զգալոյն շարադրեալ, իւրովն ելից աստուածային լրմամբն ըստ Պօղոսի ձայնին: (128 / 12; 128 / 12; 128 / 13)

Այլ և ոչ բնութիւն կրկին h Քրիստոս ասացի, ոչ դէմ, ոչ զօրութիւն, ոչ իմաստութիւն, ոչ կենդանութիւն, «զի խառնեալ, միացեալ և ընկղմեալ է մարմինն յաստուածութիւնն», ասաց սուրբն Գրիգոր: (128 / 21)

Յղացեալ յարգանդի կուսին, այլ առանց սերման աստուածային էր հրաշագործութիւն, ծնաւ h մորէ մարդկաբար, իսկ զկնի ծննդեանն կոյս մնալով ծնօղին աստուածային զօրութեանն գործ: (129 / 14)

Մի յերևելիսդ և եթ կայցես, մնասցես, այլ անբարձցիս մտօք յիմանալիսն, զի թեպէտ քաղցեաւ ճշմարտապէս մարդկօրէն, այլ սակայն աստուածաբար ոչ

կերակրով հնմին ժամու զքաղցն բժշկեաց, զի ինքն էր Աստուած, միանգամայն և մարդ, որ գիտեր քաղցնլովն ոչ ճաշակել և ճաշակել առանց քաղցի հպէտս փառացն Աստուծոյ: (129 / 20; 130 / 1)

Անգիտանայր զօրն և զժամ կատարածի մարդկօրէն, և որպէս Արարիչ ժամանակաց ստուգապէս գիտեր, որ ինչ հնոսա լինելոցն էր, վաստակեր յուղեգնացութեան, այլ վերաքայլեր թեթևաբար հ վերայ ծովուն, և հգահավեժն առնել, թռուցեալ, ելանէր հմիջոյ նոցա: (130 / 5; 130 / 7; 130 / 8; 130 / 9)

Խոստովանեա՛ կրել զմարդկայինսն, և հ վերայ բեր կամօք զայն կատարեալ» և մի՛ զնոսին զկամաւոր զկիրս ապականութիւն հնմա իմանայր, այլ մարդասիրութեան կարեկցութիւն: (130 / 12; 130 / 14)

Ջոզուոյն զբանն հաւատարմացո՛ հմի՛ զքո մտածութիւնդ, ոչ մեղանչել ասաց և ոչ մարմնոյն ապականել և ոչ հոգւոյն հղժոխս ըմբոնիլ, և ընդ ձեռն սոցա զբոլոր նորա կիրսն մարդկայինս հներքո արգելեալ փակեաց: (130 / 20; 130 / 22; 130 / 24)

Եւ սակայն էջ հղժոխս, ոչ թողեցելով յինքենէ մարդկային հոգւովն յաւարել զնա և ոչ ընդ նովաւ զիրն արկանել մարդկային հոգի: (131 / 1)

Եւ եղաւ հգերեզմանի ընդ ձեռն անքակաբար միաւորեցելոյ իւրոյ մարմնոյն, հխափանել զապականութիւն և ոչ ընդունել զնա: (131 / 4; 131 / 5)

հսոցանէ վարդապետեսցիս ընդ բոլոր տնօրինականսն նոյնպէս անցանել Քրիստոսի: (131 / 7)

Ջի որպէս նոցա հտեղիսն իջանելով հրաշագործեաց հմեզ զփրկութիւնն, ինքն ազատ մնացեալ, ըստ նմին օրինակի զայլ տնօրինականսն յանձն առնլով և անարատ հնոսա մնալով, զնոսա հմենջ վերացոյց: (131 / 9; 131 / 10; 131 / 12; 131 / 13)

Օրինակ իմն որպէս ճարտար բժիշկ մտեալ առ վտանգեալսն հմահաբեր դեղոց խառնէ ընդ մահաբերականսն դեղս կենդանացուցիչս՝ յորմէ հալածեցան և լուծան հմահու դեղոցն զօրութիւնք և ընդ ձեռն իւր զնա ճաշակելոյն, ամենեքին յանցնիւրոցն բուժեցան վտանգից ախտացեալքն: (131 / 15; 131 / 17)

Ըստ այսմ օրինակի միացեալ անքակաբար Բանն Աստուած որ ընդ իւրում մարմնոյն, որ հմենջ ծախեաց և հ բաց էրարձ ամենակարող իւր զօրութեամբն զվտանգեցուցիչսն մարդկային բնութեանս, որպէս և Պօղոս ասէ. «սպան

զթշնամութիւն ի մարմնի իւրում» և վասն մահուանն, որ զմեզ յապականութիւն քարշել արկաներ, այսպէս ասէր, թէ «որ կայրն մեզ հակառակ, էբարձ զնա ի միջոյ և բնեռեաց զնա ընդ խաչափայտին»: (131 / 23; 131 / 23; 132 / 3; 132 / 6)

Եւ տեսանելով մեր մեռեալ զմահ, որպէս Մովսէսի օձահարքն զանշունչ օձն տեսանելով ի վերայ փայտին, բժշկեալ լինէին, և նովին օրինակեալ ուսցուք: (132 / 10)

Զմտաւ ա՛ծ զճնունդն Քրիստոսի զբարեպաշտութիւն. զի թէ ճնունդն յապականութեան սերմանէ լեալ էր, գոյր ասէր նովին ապականութեամբ զբոլոր կենցաղավարութիւնն իբր կատարեաց Քրիստոս ի վերայ երկրի, այլ որպէս Աթանաս ասէ. «ոչ ինչ կարէ ապականել զոգի և զմարմին, բայց մեղք: (132 / 16)

Եւ վասն զի մարմնանալն Քրիստոսի յանամուսնութենէ և առանց մեղաց էր, ոչ գտաւ ի նմա ապականութիւն, զի ոչ կարէ մահ բնակել ընդ կեանս, և ոչ ապականութիւն ընդ անապականութիւն բնակէ»: (132 / 20)

Եւ քանզի մեր ճնունդն յապականութեան սերմանէ է, ընդ ամենայն կեանս մեր խառնեալ են սոքա երեքին, մեղք և ապականութիւն և դժոխոց իշխանութիւն, և երեքեան սոքա ի միում տեղուոջ ի վերայ եկեալ մարտնչին բնութեան: (133 / 5; 133 / 5)

Այլ ամենայն ուրեք և յամենայն ժամ և յամենայն իրս և ի խորհելն և ի խօսելն և ի գործելն, որով ապականեալ են, ասէ, միտք և խորհուրդ իւրեանց, եթէ «գուցէ ապականեցին միտք իւրեանց ի միամտութենէն որ ի Քրիստոս», և եթէ ապականեաց ամենայն մարմին զճանապարհս իւր ի վերայ երկրի. և եթէ «ապականեցան և պղծեցան յապականութեան իւրեանց»: (133 / 8; 133 / 8; 133 / 8; 133 / 11; 133 / 11; 133 / 13)

Եւ յաղագս այնորիկ ասացաւ, թէ «մեղս ոչ արար, և ոչ թողաւ ոգի նորա ի դժոխս, և ոչ մարմին նորա ետես զապականութիւն»: (133 / 19)

Ծնող են հոգի և մարմին մեղաց, մինն ցանկանալով և խորհելով և միւսն գործով կատարեալ զառ ի նմանէ խորհեցեալսն, և ճնեալ ի նոցանէ մեղք դառնայ ապականէ զիւր ճնողսն: (134 / 2; 134 / 3)

Զօր օրինակ փայտ ընդ փայտ շփել հուր ճնանին և անդէն ծախին ճնողք ի ճննդոյն իւրեանց: (134 / 6)

Արդ յղանան միտք զմեղս ի զգալեաց անտի սերմ ընդունելով, զգայութեամբքս զցանկալն, և յղացեալն ծնանի գործակցելով մարմնոյն զմեղսն, իսկ ապա ծնեալ ի նոցանէ մեղքն դառնայ և արկանէ յերկաքանչիւրոցն վերայ զապականութիւն, և զայն կրկնակի, զոմն յառաջ և զոմն յետոյ: (134 / 7; 134 / 11)

Նախկին ապականեալ լինի հոգին անտեղի և դժնդակ ցանկութեամբն, որ զինքն իշխանական զառաջին փառսն մերկացեալ իբր աղախին չար տիկնոջ ի ծառայութիւն զինքն տալով ախտին, իսկ յետոյ կրէ զապականութիւն հոգին յապաշաւանաց անտի, որ ի վերայ անկանի յուսահատութեամբն տրտմութիւն, իսկ մարմին ընդունի զապականութիւն, նախկին թաւալելովն ընդ տիղմն չարեաց, իսկ յետոյ զլուծմանն որ հասարակաբար պատահեաց մեղուցելոցն և ոչ մեղուցելոց: (134 / 17; 134 / 19)

Եւ զի կարող է ցանկականն մասն հոգւոյս մերոյ յերկոսին դառնալ հակամիտութեամբ և առ չարն և առ բարին, որպէս և Սներիանոս ասէ Գաբաւեայ եպիսկոպոս. «հոգի և մարմին ծառայ են կարեաց, որ ի մեղսն տանիցին և այնց կարեաց որ արտաքոյ քան զմեղսն իցեն»: (135 / 6)

Եւ զի ոչ խառնի ծնօղն ընդ կիրսն փրկչականս, այսինքն մեղքն ոչ անգի ի նոսա ծնունդն՝ որ է ապականութիւն: (135 / 11)

Եւ որք ոչն են ընկալեալք ի Տեառնէն, ընդէ՞ր և անուանես. թէ յիշես զմինն ի նոցանէ ի մարմինն Քրիստոսի, յիշեալ լինիս զերեսին, զմեղս և զապականութիւն և դժոխոց իշխանութիւն, ընդէ՞ր ժամանակացն փոփոխմամբք, փոփոխելի առնես զՔրիստոս: (135 / 13; 135 / 14; 135 / 15)

Զմէ՞ զանազան գործոցն որ ի նմանէ գործեցան, զանազանես և զգործողն: (135 / 19)

Էառ յանձն ի խաչին զխոցումն գեղարդեանն և զբնեռացն վերս. ընդ Եսայեայ վերաձայնեա «նորա վիրօքնբժշկեցաք»: (136 / 1)

Տեսեր, զնոյն իմա և յետ յարութեանն» ասացես և դու ընդ Թոմայի «տէր իմ և Աստուած իմ», և զիտեա թէ ընդ ձեռն վիրացն զխաչն և զգերեզմանն ընդ իւր տարեալ եցոյց մարդկան. զի ազատեսցէ ի չար կարծեաց զայնոսիկ. որք զչարչարանսն և զմահն, որ վասն մեր, ապականութիւն լինել ասէին ի նմա: (136 / 8; 136 / 10)

Լուար գառ հնմանն հարցեալն. «գո՞ որ ասեն զինն», զուգաձայնեա ընդ Պետրոսի, զի ընդ նմին ինն երանեսցիս. «Դու ես Քրիստոս որդի Աստուծոյ»: (136 / 11)

Տես զնա հ վերայ խաչին և հաւատա, որ հրամայեացն քեզ ասել, և ասա. «ահա տեսաք զկեանս մեր կախեալ զփայտէր»: (136 / 14)

Տեսեր զնա թքանելով անարգել, ասա սա նոյն ինքնն է, որ սքանչելագործ թքովն իւրովք աչս ստեղծ ոչ ունողին հծնէ աչս: (137 / 4)

Լուար հնմանն յետ յարութեանն, «տուա ինձ ամենայն իշխանութիւն յերկինս և յերկրի», յիշեա զնոյն յառաջ քան զյարութիւնն ասացեալ հնմանն, «ամենայն ինչ տուա ինձ հձօրէ իմմէ, և զամենայն գոր ունի Հայր, իմ է», և թէ «զամենայն դատաստանս ետ Որդւոյ իւրոյ». լուար Աստուած Աստուած իմ, ընդէ՞ր թողեր զիս», ի միտ առ, զի ոչ վասն իւր, այլ ընդ մարդկան մարդ եղեալն վասն մարդկան զայն հմաղթանս Հօրմատուցանէր, զի նա նոյն է, որ ասաց. «ես հՀայր և Հայր յիս», և թէ՛ «չեմ միայն այլ Հայր իմ ընդիս է», և թէ «Հայրն որ յիս բնակեալ է, գործէ զգործն» ըստ այսմ իմացիս և զայն, «Հայր փառաւորեա՛ գորդի քո առ հքէն փառօքն, գոր ունէի յառաջ քան զլինելն աշխարհի: (137 / 4; 137 / 7; 137 / 8; 137 / 12; 137 / 14; 137 / 15; 137 / 20)

Ընդ ձեռն իւր խաչելութեանն զգեցուցանել ազգի մարդկան զփառս աստուածեղէնս, կատարեսցի այն և հ գլուխ ելցէ. եղև մարդ, զի արասցէ Աստուածս գորդիս մարդկան: (138 / 4)

Ծնաւ այր հկնոջէ առ հփոխարինել զպարտս առաջնոյն Ադամայ կին յառնէ ծնեալ, այլ և զախտաւոր խառնիցին խափանել զորդեծնութիւն, ծնանելով հկուսէն: (138 / 5; 138 / 6; 138 / 9)

Աճեաց հասակաւ, զհակառակն աճելութեանս արտաքս մղեաց և հբնութենէս զնուագութիւնս, կատարելահասակս զմեզ նորոգելով յանվախճան կեանսն: (138 / 11)

Յանձն էառ կերակրօք և ըմպելեօք սնանիլ, ընդ ձեռն որոյ մեզ զհոգեկան կերակուրսն ջամբեցուցէ հ հանդերձեալսն: (138 / 15)

Փորձեցաւ և յաղթեաց փորձողին, որ զուարճանայրն նախահայրն յաղթել կարացել հփորձելն: (138 / 17)

Քաղցեալ և ժուժկալեաց՝ բժշկելով զանժամ ցանկութիւնն ճաշակելոյ նախամօրն, յորմէ պատուիրանազանցութիւնն. ծարաւեցաւ, և նովաւ պարգևեաց մեզ զջուրն կենդանութեան. աշխատեցաւ, զի բարձցէ hմէնջ զտարժանաւոր կենացս այսոցիկ զհայթայթանս. ննջեաց և արթնութեամբ հրամանատրէ հողմոց. անգիտացաւ, զի զգեցուցանելոց է անմոլար առ hյապա զգիտութիւն բնութեանս: (139 / 2; 139 / 5)

Տրտմեցաւ զի զտրտմութիւն մեր յուրախութիւն դարձուցանելով, վերստին h ներքս տանելով, զոր կորուսաք, զփափկականն: (139 / 8)

Ապտակեցաւ hծառայից, կռփել հրամայեալ հաւատացելոց, որ ծառայեցուցանեն զբանսարկուն» թուք ընկալաւ hբերանոյ պղծոց, որ փչեաց hդէմս մեր զՀոգին սուրբ իւր բերանովն: (139 / 13; 139 / 15; 139 / 16)

Քաղցեալ և լեղիճաշակեաց, փոխանակ այնորիկ, որ քաղցրութեանն պտղովն զդառնագոյնս զայս թեթն hմեզ սերմանեաց կէանս: (139 / 20)

Թաղեցաւ յերկրի և զիւր եղեալ հրամանն իւրով յարութեամբն խափանեաց, թէ hհող դարձցիս» Ամբարձաւ փառօք առ Հայր յերկինս և գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր, որով իջեալ մարմնացաւ hկուսէն: (140 / 5; 140 / 8)

Եւ որպէս ասէրն Թեոդիտէ, թէ hգերեզմանէն յառաջ արժանի եղև զփառսն զգենուլ, զնոյն փառսն երևեցոյց աշակերտացն hԹափով լերինն, նովին փառօք երևեցաւ աշակերտացն hնմինն լերինն յետ յարութեանն, նովին փառօք Հօր գալոց է hվախճանի դատել զկենդանիս և զմեռեալս: (140 / 9; 140 / 12; 140 / 13; 140 / 15)

Եւ Պօղոս ասէ, «որ hստորին կողմ երկրի էջ, նոյն է որ ելն h վերոյ քան զամենայն»: (141 / 1; 141 / 2)

նոյնպէս ճաշակեաց յետ յարութեանն և hժամ համբարձմանն. որպէս և յառաջ քան զյարութիւնն ճաշակեաց, զի յամօք արասցէ զնոսա, որք ասենն, թէ նախ քան զյարութիւնն կարօտական ունէր մարմին, և ընդունող մարդկայնոց կրից և ապականութեանց և յետ յարութեանն յանկարօտութիւն փոխեցաւ: (141 / 3)

Ճաշակեաց յառաջ և յետոյ և եցոյց, թէ ըստ պիտոյից փրկութեան մարդկան, և ոչ hկարօտութենէ, տնօրինեմ զքաղցնուլն և զճաշակելն: (141 / 12)

Ապա թէ ոչ պարտ էր ըստ զանազանութեան որ հմարմին, որպէս թուեցաւ ոմանց ասել, զանազան առհաւատչեայ բանից և գործոց յիւրաքանչիւր ժամանակս ցուցանել յինքեան, առանց վիրաց և անսպի լինել, և ոչ պիտոյանալ կերակրոյ և ոչ ումեք կարել արկանել հնա ձեռս և լուսաւոր փառօք զայլակերպութիւն զգենուլ և կեանք և կենդանացուցիչ զիւրն անուանել մարմին և ասել, «որ ետես զիս՝ ետես զՀայր իմ», և «ամենայն ինչ տուաւ ինձ հՅօրէ իմմէ», և որ սոցին նմանք, ամենեքեան առհաւատչեայ բանից և գործոց: (141 / 14; 141 / 19; 142 / 4)

Զի անապականի և միաւորեցելոյ ընդ աստուածութեանն մարմնոյ և վայելէ ամենայնիւ վերջնում, որ զկնի յարութեան ժամանակն դէպ էր լինել, իսկ վերքն գեղարդեանն և բեւեռացն սպիք և կերակուր ճաշակել և հարցանել անգիտաբար և որ այլ ինչ սոյնպիսաբար, յորմէ գայթակղին կիսահաւատք, յառաջնումն ժամանակին, որ նախ քան զյարութիւնն պարտ է լինիլ. իսկ եթէ հասարակաբար առհաւատչէի յերկոսին ժամանական վարեցաւ մի և նոյն տէր մեր Յիսուս Քրիստոս, ոչ է պարտ զնա ասել փոփոխելի կամ այլայլելի, որպէս և Գրիգոր սքանչելագործ ասէ, «զի՞ արդ ասիցէ որ փոփոխելի կամ այլայլելի զՔրիստոս. իւր Տեառն ասացեալ է «ես նոյն եմ և ոչ փոփոխիմ», եթէ «ոչ ոգի նորա թողաւ հղծիս, և ոչ մարմին նորա ետես զապականութիւն»: (143 / 1)

Եւ դարձեալ ասէ թէ հփորձանս իւրում Տէրն ոչ զաստուածային մարտն առաջի արկանէր, այլ զիւր մարմինն մահու և ախտից և ապականութեան յաղթող ցուցանելով: (143 / 10)

Եւ սուրբն Գրիգոր ասէ. «միացաւ հմարմնի բնութեամբ, և խառնեաց զմարմինն իւր աստուածութիւնն, զապականացու մարմինս խառնեաց յանապական աստուածութիւնն, զի զբնութիւնս մեր անապական արասցէ»: (143 / 15)

Եւ դարձեալ ասէ, «թէպէտ վիրաւորեցաւ և համարեցաւ ընդ ննջեցեալսն հգերեզմանս առ հբառնալոյ զմեղս և բժշկելոյ զարարածս իւր, այլ առանց օգնականի և հմեռեալս ազատ. զի միայն և անձառայական անձամբ մեղացն սպան, զօրացեալ մահ զաշխարհ եկեր, և եհատ զամենայն արտօսք յամենայն երեսաց: (144 / 1; 144 / 2; 144 / 3)

Վասն այսորիկ և ասացեալն կատարէր, «ոչ թողցես զանձն իմ հղծիս, և ոչ տացես սրբոյ քում տեսանել զապականութիւն», զի զգեցեալ և միացեալ էր զմարմինն բանն, որ վեր է քան զբնութիւն մարդկան: (144 / 8)

Վասն որոյ եղև մարմին նորա, որ մահկանացուն էր՝ անմահ, և յաղթահարեցաւ մահ հ բնութեան մարմնի մահկանացուի, զի բանին Աստուծոյ կեանք թագաւորեցեն հ մարմինն յայն: (144 / 14; 144 / 16)

Եւ տէր Եփրեմ ասէ. «Վասն զի հ մահն Քրիստոսի մկրտութիւն հ թողութիւն մեղաց, և հ մարմնոյ յարութիւն՝ մեռեալ լինի, որ է աստուածութեան գործ և ոչ արարածոյ բնութեան»: (144 / 17; 144 / 18; 144 / 19)

Եւ տէր Զենոբ ասէ. «Կենարարն մահկանացու եղև և զանմահական բնութիւն զիր ոչ կորոյս, և յայն որ յաւիտենիցն է՝ ծնաւ հ կուսէն և ոչ հատաւ հ նմանէ իսկութիւնն յաւիտենական, և ոչ ասեմք թէ մահն մարմնոյն միայն էր, որպէս և ոչ ասեմք, թէ կեանքն Բանին միայն էին: (145 / 1; 145 / 1)

Եւ սուրբն Եպիփան ասէ. «Ամենայն ինչ կարողութիւն է Աստուծոյ, և զմահկանացուս փոխել յանմահութիւն, և որ հ վերայ երկրի է, կատարել յանապականութիւն, զի զայս եկն ցուցանել և եցոյց, առեալ յապականելի բնութենէս և զգեցեալ աստուածութեամբն, ցուցեալ անապականելի: (145 / 17)

Սորա ամենեքեան սուրբ հարքս կաթողիկէ և առաքելական եկեղեցոյ վերատեսուչք, որք յիրաքանչիւր ժամանակս հալածեցին զչար զազանս յեկեղեցոյ Աստուծոյ, անվիրաւորելիս և անվարատելիս պահելով զհօս Քրիստոսի, զոր ապրեցոյց պատուական արեամբն իւրով, և քարոզեցին յընդհանուր տիեզերս քրիստոնէից իբրև միով փողով բարբառովն իւրեանց զայս զանբիծ և զուղղափառ խոստովանութիւնս հաւատոյ, զոր հ վերոյդ սակաւութիւն յիշատակեցաք հ բազմաց հ թղթիդ մերում» իսկ Թեոդոտէ ոչ գիտեմ, թէ յորո՞ց վարդապետաց կամ յորո՞ց հարանց ուսաւ ասել զհայեցողութիւնս հ վերայ Որդւոյն Աստուծոյ Տեառն մերոյ: (146 / 7; 146 / 8; 146 / 8; 146 / 11)

Բայց դու, ո՛վ հայր պատուական, հիմն և հաստատութիւն եկեղեցոյ, մի բացցես զլսելիս քո այդպիսեաց մոլար վարդապետութեանց բանի, զի դու ժառանգ գտար ճշմարտութեամբ հարանց ուղղափառաց և նոցին իսաղաղասիրութեանն եղեր նախանձաւոր. սկիզբն արարեր հ մարդիկ սերմանել զիսաղաղութիւն, զոր անկեաց Հոգին սուրբ հ սէջ հաւատացելոց: (146 / 19; 146 / 21)

Եւ մի զարմանար, թէ ընդ քո սուրբ աթոռովդ և քոյին ուղղափառութեան գաւազանաւդ գտանի թագուցեալ գայլ գառն կերպարանեալ, զի հ միում բարի

ձիթենոջ պտուղք պարարտք. և ազագունք. յընտիր մշակացն սերմանէ բարի որ սերմն, իսկ որումն ինքնաբոյս եղեալ խառնի հ ներքս: (147 / 1; 147 / 4)

Այսպէս և Դիողրէփէ և աշակերտ՝ միանգամայն և թշնամի Յովհաննու, և Քրիստոս ինքն երկոտասանսն ընտրեաց, իսկ մին հնոցանէ եղև սատանայ: (147 / 7)

Բայց սակայն պարտ և արժան է յայտնել և ցուցանել, թէ գլուխ բոլոր անդամոցս քն հանդերձ յառողջութեան է, և մինն միայն հմենջ էր անդամ, որ վիրատրեալ գտաւ: (147 / 12)

Եւ մի լիցի քեզ թիրեցելոյն լինել թիրակից, որ սկսարդ լինել խնդրող ուղղութեան և բարեպաշտութեան. թէ արդեօք ո՞չ են կամք քեզ հատանող բանիւ կտրել և հ բաց ընկենուլ գնա, գորմէ բանքս են (147 / 19)

Եւ ողջ լեր հՏեր: (148 / 5)

ՊԱՏՈՒԿԱՆ գլուխ հովիւ հօտասէր, բարեպաշտութիւն փափաքող, մերձեալ հ դուրս ուղղափառութեան Տէր Սարգիս եպիսկոպոս Գերադէկորայ, Խոսրով յանարժան ծառայից խնդրէ խաղաղութիւն քեզ յԱստուծոյ: (149 / 5)

Մի զարմանար, Տէր իմ, թէ հհեռաւորաց և յանձանօթից մօտեցայ և ծանօթացայց, այլ առաւել զուարհացիս իբր հՀոգւոյն սրբոյ առաքեալ, մատուցանել ձեզ զօգուտն, զի այսպէս և երբեմն զՅովսէփ հՔանանացոց աշխարհէն կերակրիչ ձեր, պատրաստ է լինել Եգիպտոսի և Փարաւոնի, ծածկեալ իրաց ընծայել զգիտութիւն, զի և Արարիչն մեր զմեզ ոչ վասն անձանց, այլ առաւել ևս յընկերին ստեղծեալ հաստատեաց պէտս: (149 / 9; 149 / 12; 149 / 14)

Եւ զի այս այսպէս է, ոչ է պարտ, ով բարեսէր, նմանեալ այնոցիկ, որ զանձնահաճութեան ախորժեցին ստանալ զանուն, որ, կարծեն միայն զինքեանս յամենից գոլ ընտրեալս և պատուականս, և զիրեանցն և եթ սիրել արդարացուցանել զմտածութիւն և զգործ, աւաղեալք հմարգարէէն. «վայ այնոցիկ, ասէ, որք զանձինս առ իմաստունս ունիցին և յաչս անձանց խորհրդականք»: (150 / 11)

Եւ յաղագս այնորիկ զբարեբանիչս իրեանց ձգեն հ վեր և հբարձրագոյն տեղի բարեկամութեան, իսկ զյանդիմանիչն հդրունս, ատեն ատելութիւն կատարեալ, և զբանս սուրբս պիղծ համարին լինել, զի ոչ եթ զօգտակար բանս իրեանց և որ առ Աստուած տանիցին, հայցեն գնել հբերան զհոգեկան

կերակուրն, այլ գոր ինչ ախտացելոցն ախորժել միտք ընդունել, իսկ որոյ ծաղկեալ են ալիք իւրեանց և գերկիւղածութեան զգեցեալ ձև և անուամբ վարդապետութեամբ պայծառացեալ, վտանգ մեծ է ակն առնուլ վասն երեսաց, վասն օգտի թիրել զիրաւունս և արբուցանել ընկերի իւրում հրապոյր պղտորս և ասել զլոյսն խաւար և զխաւարն լոյս, և ոչ լինել բերան Աստուծոյ՝ հանելովն զանարգն հ պատուականէն: (150 / 15; 150 / 16; 150 / 17; 151 / 1; 151 / 11)

Արդ թողլով զայս այժմ դիցուք առաջի փոքր մի զանցելոց իրաց պատմութիւն վասն երկուցս այսոցիկ արանց Սևերեայ և Յուլիանեայ, որք յիրերաց անարգեալք և խոտեալք, կարգեցին հ մէջ իւրեանց անխախտելի արձան թշնամութեան: (151 / 16)

Բժամանակս Յուստիանոսի կայսեր, որ թագաւորեաց զկնի Չենոնի և Անաստասայ, և խորհեցաւ նորոգել զժողովոյն Քաղկեդոնի սահնանն, զոր Չենոնի և Անաստասեայ խափանեալ էր: (151 / 18)

Եւ իբրև ել հրամանս այս հ թագաւորէն յաշխարհ, ամենեքին, որք միանգամ ընդունէին զժողովոյն Քաղկեդոնի, եպիսկոպոսունք, պաշտէին զիրաքանչիր աթոռ, իսկ որք ոչ հաւանէին ընդունել, թողին զաթոռս իւրեանց և հ բաց գնացին, ընդ այլս ոմանս և Սևերիոս, որ պատրիարգն էր Անտիոքայ Պիսիդեայ, և Յուլիանէ Ադիկառնէ քաղաքի եպիսկոպոս, անհնազանդ եղեալք հրամանաց թագաւորին, թողին զքաղաքս իւրեանց, և գնացին, դադարեցին մերձ հ քաղաքն Աղէքսանդրի հ կողմանս Եգիպտոսի Ապա յետ ժամանակի թշնամութիւն ինչ վասն հաւատոյ անկեալ հ մէջ նոցա, բաժանեցան հ միմեանց: (152 / 2; 152 / 7; 152 / 13; 152 / 13; 152 / 16; 152 / 16)

Զի Յուլիանէ ասէր» «պարտ է զմարմինն Քրիստոսի անչարչարելի ասել և անմահկանացու հ ծննդենէն որ հ կուսէն մինչև ցյաւիտեան, քան զի չարչարելի և մահկանացուն ասել, գտանի զնա ասացեալ ապականացու, ընդ ձեռն որոյ հարկաւոր է ապա և երկուս բնութիւնս ասել»: (152 / 18; 152 / 19)

Իսկ Սևերիոս ասէր. «Ոչ, այլ պարտ է չարչարելի և մահկանացու ասել զմարմինն Քրիստոսի հ ծննդենէն մինչև ցյարութիւնն, զի այսոքիկ և զկնի յարութեանն հետեւեալ լինին մարմնոյն Քրիստոսի, զի թէ անչարչարելի և անմահկանացու մարմին ունէր մինչև ցյարութիւնն, գտանի եղեալ սուտ մարդեղութիւն նորա և զմարդկայինսն կատարեալ առ աչօք և ոչ ճշմարտութեամբ: (153 / 3)

Այսպէս երկոքին սոքա երկուք այսոքիւք բանիւք մարտուցեալք ընդ միմեանս, ոչ մերձենային յաստուածային գիրս իբրև յաղբիւրս լուսոյ, որ լուսաւորելն կարէ զմտացն աչս, առնուլ ի նոցանէ այր ընկերի իւրոյ զնպատակ յաղթութեան, այլ իւրաքանչիւր ոք յանձնահաճութեան համբարձեալք կառս, զոր կործանի ի միմեանց, սաստել սաստեցին անձանց իւրեանց և ճշմարտութեանն, և սասանեալք եղեն յուղղափառութենէ առաքելական հաւատոյն, և միանգամայն, ասել երկոքին ի ձեռն իրերաց զանկանգնելին զլորեցան գորումն: (153 / 14; 153 / 17; 153 / 21)

Եւ կացին մնացին յայս գրի Մ. ամ սակաւ կամ աւելի, ի նմին կործանման եղեալք անբժշկելիք և անողջանալիք: (154 / 2)

Յակոբ՝ ոչ որ Մծբնայ քաղաքին եպիսկոպոսն էր, այր հանճարեղ և կորովաբան, որ ի կենդանութեան իւրում զբազում հերետիկոսաց էխից զբերանս և կապեաց զհայիոյիչ նոցա լեզուս, և զկնի վախճանին եթող յիշատակարան անձին բազում գրեան իմաստութեամբ զարդարեալս և ծաղկեալս: (154 / 10)

Այլ և սա այն է, զոր Յակոբ կոչեն, որ ոչ եթէ ի պէտսս եկեղեցոյ եղև ձեռնադրեալ եպիսկոպոս, այլ միաբանեալ ընդ Սներեայ ձեռնադրեցաւ ի նմանէ ի պէտս արբանեակութեան անուանս թերիս այսմիկ, որ մեծաւ երագութեամբ ընթացեալ ճագէ ի ճագ ընդ բոլոր աշխարհս Ասորաց էլից զամենայն տեղիս սարկաւազօք և քահանայիւք, դնելով նոցա բանս ի բերան, կոչել ի վերայ իւրեանց զանուն Յակոբայ և խոստովանել զհաւատն Սներեայ: (154 / 16; 154 / 18; 154 / 18; 154 / 21; 154 / 23; 155 / 1)

Եւ համայն ոչ հաւասարապէս որպէս անուանն ցանկացողք հրաշալւոյն Գրիգորի, ընդ նմին և խոստովանութեանն այլ ըստ օրինակի Շամրտացոցն երկիր պագանէին աստուծոցն իւրեանց, և պաշտէին զԱստուածն Իսրայէլի, զի չէ իսկ հնար ի փշոց խաղող և ի տատասկէ քաղել թուզ, զի ի պտղոյ իւրմէ ծառն ճանաչի: (155 / 15; 155 / 16; 155 / 16)

Արդ տեսցուք առ այսոքիւք և զայս ևս, թէ զի կարծին բառքս ներհակք իրերաց, ընդէ՞ր սուրբ հարքն երկոքումբք սոքօք վարեցան հասարակապէս խոստովանականսն իւրեանց ճառս, և թէ է՞ր աղագաւ Սներանէ և Յուլիանէ զմի մի ի նոցանէ յինքեանս ընկալան, և ոչ զերկոսին երկաքանչիւրքն: (156 / 2)

Եւ եթէ նմեզ պարտ էր միում ումէք ի նոցանէ ձայնակցեալ, թէ նմանապէս յերկոցունց հրաժարել և կամ թէ զերկոսին ասել: (156 / 5)

Բայց նախ քան զայսուհիկ՝ տեսցուք փոքր մի և վասն անուանցն մարդկայնոց, որք ասեն հ վերայ մարմնոյն Քրիստոսի: (156 / 16)

Եւ քանզի բազում անուանք հետևին մարդկային բնութեանս, տեսցուք թէ ամենեքին նոքա ասեն հ վերայ մարմնոյն Քրիստոսի, թէ ոմա՞նք ասին և ոմանք ոչ: (156 / 19)

Եւ դիտել պարտ է, թէ այնոքիկ անուանք, որք միանգամ արարածականիս պատշաաճին բնութեան և հ մարդոյն առեալ լինի սահման, ամենեքին նոքա աներկբայաբար ասին հ վերայ մարմնոյն Քրիստոսի: (156 / 23; 157 / 2)

Իսկ այնոքիկ անուանք որ միայն զարարչական բնութիւնն փաղանունակի նշանակէ, ընդ որում ոչ այլ որք հ գոյիցս լծակցի հոմանունութեամբ, ոչ է պարտ և ոչ իւրք գնոսա առնուլ հ վերայ մարմնոյն Քրիստոսի, այսինքն անեղ, անսկիզբն, անժամանակ, և որ սոցին նման, զի ընդ ձեռն այսպիսեացս անուանց ոչ լինի մարմինն արարածական, այլ անեղ, և որ անեղն է, համագոյակից լինի աստուածութեանն, և համագոյն չորրորդութիւն առնէ զերրորդութիւնն և ոչ ևս Երրորդութիւն: (157 / 9; 157 / 11)

Եւ սակայն նոքին անուանքն որ հետևին մարդկայնումս, ոմանք և ասին փրկչականումս, և կրեալք եղեն հ Տէառնէ ըստ անուանցն զկիրս, որպէս չարչարելի ասի մարմինն, և յանձն առ զչարչարելն, Քրիստոս մահկանացու ասի և մեռաւ ճշմարտապէս ըստ մարմնոց: (157 / 21)

Իսկ ոմանք թէ և ասեն, ոչ երբէք հպեցաւ հ նոսա և ոչ ընկալաւ գնոսա յանձն իւր Տէրն, որպէս զմեղանչելն և զապականութիւն ընդունել գնոսա, զի ասացաւ զմմանէ՝ մեղս ոչ ունել, և թէ՝ ոզի նորա ոչ թողաւ հ դժոխս և ոչ ետես զապականութիւն: (158 / 1; 158 / 5)

Ձի ոչ եթէ ընդ ձեռն երկակի ասութեանն կրկին առնէ զմարմինն Քրիստոսի՝ զոմն մարդկային և զոմն աստուածային. այլ այսպէս ածցուք զմտաւ, թէ ոմանք ըստ բնութեան ասին հ վերայ մարմնոյն Քրիստոսի, իսկ ոմանք ըստ միաւորութեան: (158 / 15)

Ձի հ լինելն մարդ Բանն Աստուած անեզաբար մարմնացաւ և առանց շփոթութեան և առանց անջատման երևեցոյց զմիաւորութիւնն, որպէս և Յոհան Ոսկեբերան ասէ. «Մի շփոթեսցուք, և մի անջրպետ հ մէջ արկցուք, քանզի միաւորութիւն խոստովանիմք և ոչ քայքայումն ինչ, և կամ լուծումն այս բնութեան յայն կամ այնր յայս, այլ միացեալ մի լեալ»: (159 / 8; 159 / 13)

Եւ Կիրեղ ասէ. «հխոստովանելն մեր թէ եղև բանն մարմին, ոչ եթէ շփոթութիւն ինչ ասեմք բնութեանց, այլ կացեալ մնացեալ անքակաբար և անշփոթաբար հվեր քան զմիտս եղելոց»: (159 / 17; 159 / 20)

Եւ Պրոկղ ասէ. «Ի միասին եկին բնութիւնք և առանց շփոթութեան մնաց միաւորութիւնն»: (159 / 22)

հխոնարհելն իւր հմարդկային կիրս, զանփոփոխութիւն գուշակեր մարդկայնոյն, իսկ նոքումք կրիւքն ազատել զմեզ հնոցանէ, և փոխանակ նոցա աստուածայնովն զուարճանալ փրկութեամբ, անձառ միաւորութեանն քարոզիւր անբաժանութիւն: (160 / 6; 160 / 6; 160 / 8)

Եւ հկատարել զաստուածագործ սքանչելիսն աստուածայնոյն յայտնեալ լինէր անայլայլութիւն, իսկ զնոսին երևելեան հրաշագործելն միաւորութեանն պայծառանայր փառք, այսինքն զքոքն զառ հ ծնէ կուրին բանայ զաչս, և զձեռն հ վերայ դնելով բժշկել զհիւանդս, և մարմնովն և արեամբն իւրով կենդանացուցանել զմեզ և թողութիւն մեղաց պարզել: (160 / 11; 160 / 16; 160 / 17)

Զայս պահանջեր Տէրն հփարիսեցոց անտի հարցանելովն, թէ «ո՞ր որդի է Քրիստոսն», նոքա հտեսութենէ անտի ըստ բնութեան տեսանելոյն զանուն պատասխանեալք զիտակցեալք, իսկ զհրաշափառական միաւորութեան բան անզիտակցեալք, պապանձեցան: (160 / 24; 161 / 2)

Մարմին այսորիկ միաւորութեան աղագաւ ասի յերկնից իջեալ, մարմինն որ հկուսէն, և անտեսանելի և անշօշափելի Բանն տեսեալ լինի և շօշափեալ, և որ այլ ինչ սոյնպիսիք: (161 / 13)

Սոքօք երկոքումքք զեզեցկագոյն ոտիւք պարտ էր Սևերեայ և Յուլիանեայ ընթանալ հճանապարհ ճշմարիտ և անբիծ հաւատոյն, ընդ որ գնացին առաքեալքն և նոցին հետևեալ սուրբ հարքն, միաբանեալ հաւատով առ միմեանս և միանալ վերստին հզուրիսն Քրիստոս: (161 / 18; 161 / 22)

Իսկ նոքա ոչ այսպէս, այլ բաժանեցան առ ինքեանս զմի մի հնոցանէ, Սևերիոս զայն որ ըստ բնութեան ասացեալ են հզիրս, և Յուլիանէ զայնոսիկ, որ ըստ միաւորութեանն են բանք, հաւաքեալ զնոսա եղին լինել զէնս պատերազմի ընդ դէմ իրերաց: (162 / 1; 162 / 3)

Սևերիանոս անչափապէս բերանաբացեալ և խրեալ հբնաւորականսն, զմարմինն փոփոխելի ասաց և և ապականակիր մինչև ցարութիւնն, և

գմարդկային կիրսն ապականութիւնն ասաց և ոչ կիրս փրկչագործս, և միանգամայն ասել թէ և ճանաչէ իսկ ոչ զիւրոց ասացուածոցն յայտնել զսկզբունս և զծայրս, այլ որպէս մուրեալքն հմբին զիշերոջ յառաջնում լինելով, կարծեն յայլ փոխել ճանապարհ և ընդ այլսն գնալով յառաջանումն վարկանին լինել, զոր և յիշեցաք սակաւութիւն զբազմազան նորա հայհոյականսն հթղթին, որ առ պատրիարզն Աթանաս վասն Թեոդիտայ: (162 / 7; 162 / 14; 162 / 18)

Իսկ Յուլիանէ այնքան սիրեաց թնակոյիս զմիաւորութեանն բառիւք, մինչ զի իսպառ հրաժարեաց հբնականաց անտի և ասաց զմարմինն Տեառն անչարչարելի և անմահկանացու, որ լինի ընդ ձեռն այսպիսեաց անուանց հրեշտակական և ոչ մարդկային բնութիւն: (163 / 3)

Եւ որքան զայս առաւել ևս անխորհրդակագոյն է, յանդգնեցաւ ասել, անեղ, անսկիզբն, անժամանակ, որ յայտնապէս զարարչականն ի ներքս ածէ բնութիւն և առնէ զերրորդութիւնն չորրորդութիւն և ոչ ևս երրորդութիւն, և ապա դառնայ ինքն զինքն իբրև զայլ ոք արկանէ ընդ նզովիւք, ասելով. Եթէ ոք յերկնից բերեալ ասիցէ զմարմինն կամ յայլմէ բնութենէ, այլ ոչ հմարդկայինն հողեղէն բնութենէս, նզովեսցի: (163 / 10; 163 / 16)

Մինչև յե՞րբ կաղայք յերկուս ոտս, և կամ մինչև յե՞րբ ինդրէք ծածկել ստութեամբ զճշմարտութիւնն և ընդ ճշմարտութեամբ թագուցանել զստութիւնն, թէ համարիք զդոսա որդիս լուսոյ և որդիք արքայութեանն, երթայր զհետ դոցա, ապա եթէ են մշակք նենգաւորք, որպէս և են իսկ, կերպարանեալք ի հրեշակ լուսոյ և ոչ հրեշտակք, գողք և աւագակք և գայլք յափշտակողք, հրաժարեալք ի նոցանէ, երթայք զհետ բարի հովուին, որ ժողովեաց ի մի գաւիթ կաթուղիկէ եկեղեցի զյառաջագոյն ընտրեալսն իւր ոչխարս, որպէս զի լինիջիք միոյ հովուին մի հոտ ի միում գաւթի մակաղեալք, լսելով զքաղցր նորա ձայնն և լսեցուցանել նմա՝ ուսեալ զմեր ձայնս, ծանուցեալք զնա, և ծանուցեալք առ ի նմանէ: (164 / 14; 164 / 16; 164 / 17; 164 / 20; 164 / 23)

Եւ զայս առ երկուսին առ ձեզ բարբառիմ, ձեռն են աջոյ պատուեալք ի ձէնջ, այլ որոմանն և ոչ բարի ցորենոյն սերմանիչք, սիրելիք ձեր, իբրև զակն աջոյ առաջնորդք ձեր, այլ խաբեբայք և գայթակղեցուցիչք շաւղաց ոտից ձերոց, որք առաջնորդեն ձեզ ի զեհեն հրոյն և ոչ ի մայրաքաղաքն ի վերին Երուսաղեմի. լաւագոյն է ձեզ առանց նոցա ժառանգել զանվախճան կեանսն, քան թէ հանդերձ նոքօք գտանել զյաւիտենական կորուստն: (165 / 1; 165 / 6; 165 / 6; 165 / 7)

Դատելոց է զձեզ բանս իմ այս յաւուրն դատաստանի, և ոչ կարէք պատճառել իբր թէ ոչ ոք զայս մեզ զգացոյց և բողոքեաց յականջս մեր, քանզի ոչ այլ ինչ, այլ հ վկայութիւն ձեզ առաքեաց զիս Տէր: (165 / 18)

Բայց արդ, եթէ կամիցիք լսել առ հ մենջ, թէ որո՞ց և ո՞րքանեաց պատճառս կան հայհոյութեանց երկուքս այս բարբառք, ասացից զորացեալ հ Հոգւոյն սրբոյ: (165 / 20; 166 / 1)

Ձի զոր ասելն պարտ էր ընդդէմ մտածութեանցն Սևերեայ, ասացաք սակաւութիւն հ թղթին որ առ պատրիարզն Աթանաս, գրեցաք վասն Թէոդիտեայ, ասացուք և առ ձեզ: (166 / 3)

Յաղագս նորին իսկ ընկալաւ բամբասանս Յուլիանէ յեկեղեցոյ Աստուծոյ, թէ զմարմին Քրիստոսի յերկնից հ հրեշտակական բնութենէն ասաց զով: (166 / 17)

Արդ եթէ ընկալաւ մարմինն Աստուածն Բանի հ զորութենէ անտի նորա զկարելին լինել աներևելի, և երևելին առ ինքեան ոչ մնաց ամենայն իրօք և ամեննին, զտանի առ աչօք և ոչ ճշմարտութեամբ եղեալ երևումն, ըստ նմին և այլ անտեսականքն, ընդէ՞ր ապա ասի մարմին զգենու հ Կուսէն: (168 / 2; 168 / 7)

Ձգեցաւ զշօշափելին, զի ճշմարտութեամբ շօշափեցի հ մարդկանէ և ոչ ստուերաւ: (168 / 20)

Միացաւ հ մարմին չարչարելի և մահկանացու, զի ճշմարտեցի հ մարմնի նորա չարչարանքն և մահն, որ վասն մեր: (168 / 21; 168 / 22)

Ձգեցոյց արդարն Աստուածն Բան յանճառ միաւորութենէն իւրում մարմնոյն զիւր զօրութիւն և զփառս. այլ յորժամ և ուրանօր կամեցան, և առ յանձն կրել վասն մեր զասացեալն, թէ աղքատացաւ հ տկարութենէ զօրութիւն իմ, և եթէ տեսիլ նորա նուազ անարգեալ, քան զամենայն որդւոց մարդկան: (169 / 4)

Ձգեցաւ արդարն մարմինն հ միաւորութենէ անտի զանըմբռնելին և զանընդդիմահար զօրութիւն, որպէս ուսոյց մեզ այսպէս հաւատալ կնքեալ զերեզմանն, որով յարեաւ, և դրունքն աղիսեալ, որով հ ներքս մտանէր: (169 / 7; 169 / 11)

Այլ սակայն յիւրում սահմանեալ ժամուն զբնականն զմարմնոյն առաջի արկանէր զըմբռնումն և զշօշափումն, տալով զինքն հ ձեռս ունողացն գնա,

յաղագս որոյ ասէ. «Արկին հնա ձեռս և կապեցին զնա», և սակայն մինչև էր հասեալ ժամ նորա, ասացաւ զնմանէ, թէ ոչ ոք կարաց արկանել հնա ձեռս: (169 / 14; 169 / 16; 169 / 18)

Իսկ հնմին ժամու ոչ ընդունել կերակուրս անբաժ միաւորութեանն բացափայլէր զօրթին: (170 / 6)

Անգիտացաւ յաղագս կատարածի աւուրն և ժամուն, որպէս ասէ Կիւրեղ, թողացուցեալ երբեմն մարմնոյն կրել զիրսն, այլ որպէս զԱստուած ամենայն ստուգութեամբ պատմեաց զլինելոցսն յաւուր յայնմիկ և հ ժամուն: (170 / 18)

Եւ որք հաւասարեն զկերակուրս ճաշակեալ հ մարմնաւորութեանս ընդ ճաշակելոյն ընդ այնմիկ, որ առ Աբրահամայն յանմարմնութեանն ասելով՝ Յիսուս Քրիստոս երէկ և այսօր նոյն և յաւիտեան, յաղագս անփոփոխ ցուցանելոյ զեւթին Բանին, թէ որ նախ մարմնաւորութեան էր. նոյն ինքն այժմ և հ հանդերձեալ յաւիտենին: (170 / 21; 171 / 3)

Բողոք այսպէս լսել առաքելական բանիս: (171 / 4)

Բայց յաղագս նորա նորա չար կարծեացն, որ յաղագս փրկչական մարմնոյն և որք հնմանէ ճշմարտապէս տնօրինելոց իրողութեանց, հարկաւոր է և զայս բարեփառապէս հ ներքս յաւելուլ, զի ոչ եթէ որպէս յայնժամ և այժմ անմարմին կարծեսցի գոլ Քրիստոս բարեպաշտից: (171 / 8; 171 / 10)

Եւ դարձեալ զի և ժամանակական զանազանութիւն յարմարեսցին նմա ասել. յորմէ հետէ սկիզբն առ լինել ընդ ժամանակաւ, երեկեան անուանել օր հ ծննդենն որ հ Կուսէն, մինչև ցժամ վերանալոյն յերկինս, յորում ժամանակի շրջեցաւ ընդ մարդկան հ վերայ երկրի, և այսօր կոչել յամբարձմանն օրէն մինչև ցերկրորդն իւր գալուստ: (171 / 16; 171 / 16; 171 / 18)

Իսկ զանստուերն և զանվախճանն անուանէ յաւիտեան, ցուցանել ընդ ձեռն այսորիկ, թէ անփոփոխելի և անյեղլի զիւր պահեաց մարմին, որպէս ծնաւ հ Կուսէն: (171 / 24)

Եւ որք տարակուսին, թէ միշտ մշտնջենաւոր միութիւն ասեմք անքակ լինել Բանին և մարմնոյն իւրոյ, զիա՞րդ ասեմք ըստ ժամու ժամու թողացուցանել Բանին զմարմինն իւր առ հ կրել զիրսն: (172 / 11)

Թողացուցանել, ոչ զանջատել ասէ Բանին հմարմնոյն և կամ զմարմնոյն հԲանէն, այլ զկամելն զիր առ կրել զմարդկային կիրսն, թողացուցանել ասի: (172 / 12; 172 / 13)

Որպէս հմեզ առաջնորդական միտքս տեսանել ինչ կամեցեալ հգոյիցս, վաղվադակի անդր դառնան տեսաբանքս, ոչ եթէ բաժանին հմտաց անտի, այլ ձկտին ըմբռնեալ տեսլեամբ զտեսանելին: (172 / 15; 172 / 16; 172 / 18)

Եւ կամ որպէս օրինակ իմն կառուար հձեռն առնելով զերեսանակ կառացն, կամիցի ուղղել զկառսն՝ ոչ եթէ արձակեալ հ բաց թողոյ զերեսանակն, այլ ազդմամբ ձեռինն փութանակի ըստ կամաց կառավարին ուղղեալ գտանին կառամարտքն: (172 / 20; 172 / 22)

Դարձեալ տարակուսին, եթէ վասն զի հմեզ կրիցն և հձեռն բնականի շարժմանն տիրէ ապականութիւն, զիա՞րդ ասեմք անապական մնալ մարմնոյն Քրիստոսի՝ կատարելով զբնական կիրսն մարդկայինս: (173 / 2; 173 / 2)

Վասն զի մեք մարդ սուկ եմք, միայն զիտեմք ծառայել կրիցն բնաւորականաց, յորմէ ապականութիւնն սողոսկեալ հ ներքս անկանի: (173 / 8)

Եւ մանաւանդ զի ոչ արժանի համարեցաւ Բանն որ հձօրէ լինել մարդ հձեռն ախտաւոր խառնից, որ զապականութիւն հմեզ նիւթեալ արկանէ, որպէս և Աթանաս ասէ. «վասն զի մարմնանալն Քրիստոսի յանամուսնութենէ և առանց մեղաց էր, ոչ գտաւ հնմա ապականութիւն, բայց ոչ եթէ վասն զի ոչ է հսերմանէ առն, ինքն Բանն անմարմին ձևացեալ հնմանութիւն մարդոյ յարգանդէ Կուսին, որպէս խորհեցաւ ասել Եւտիմքոս: (173 / 15; 173 / 16; 173 / 17; 173 / 20; 173 / 21; 173 / 23)

Խոստովանիմ զԲանն Աստուած յարգանդի հկուսին կերպացեալ տպաւորեալ հպատկեր և հձն մարդոյ լեալ, այլ ոչ եթէ յարարածական բնութենէս յինքն ինչ խառնեաց. զի անխառն է աստուածութիւնն և անյօդ, զոր յանդիմանեալ դատէ աստուածաբան Գրիգոր ասելով այսպէս. «եթէ ոք իբրև ընդ խողովակ անցեալ ասէ, այլ ոչ հնմանէ ստեղծեալ աստուածաբար, միանգամայն և մարդկաբար. աստուածաբար՝ զի առանց առն, և մարդկորէն՝ զի օրինօք ծննդեանն, նզովեսցի»: (173 / 25; 174 / 1; 174 / 1; 174 / 7)

Ապա ուրեմն պարտ է ճշմարտութեամբ խոստովանել կրեալ զմարդկային կիրսն Փրկչին և զապականութիւն, որ հկրից անտի հմեզ ծնանի, ոչ շարամանեալ ընդ փրկչական կրից. զի հբառնալ եկն զնա հմենչ և հկրիցն մերոց, կրելովն իւր զնսա: (174 / 13; 174 / 14; 174 / 15; 174 / 15; 174 / 16)

Նմանապես չար են երկոքին յաղագս երկեղի ապականութեանն անհաղորդ ասել զնա մարդկային կրիցն և ճշմարտելովն զկիրսն, զապականութիւն սարդեալ հ ներքս խառնեալ: (174 / 20)

Եղև մարդ ճշմարտութեամբ, այլ ոչ ընդ ձեռն ապականութեանն, որոյ վիրօք մեք զլինելութիւն ստանայցեմք. այսպէս և հ ծննդեանն և յայլ հ կիրսն կրեաց զմարդկայինսն բնականապէս, ըստ որում և զմարմինն զգեցաւ զբնութեանս մերոյ: (174 / 23; 174 / 24)

Իսկ զապականութիւն և զմեղս, որ զկնի յանցանացն յարեալ եղև հ բնութիւնս, ոչ արժանի համարեցաւ ընդունել Տէրն հ մարմին իւր: (175 / 4; 175 / 5)

Մեռաւ ճշմարտութեամբ զբնականն մեր մահ. այս է բացորոշել շնչոյն բանական հ մարմնոյն և մարմնոյն անշնչանալ և յանգգայութեանն խոնարհեալ սահման, և նովին անշնչացեալ մարմնուն զապականութիւնն մեր խափանեաց հ գերեզմանի և մերկացեալ շնչովն հ մարմնոյն իջեալ հ դժոխս, կործանեաց զնա, զգերեալսն գերելով հ նմա զոգիսն և մահուամբն զմերն մեռոյց զմահ: (175 / 8; 175 / 11; 175 / 12; 175 / 13; 175 / 14)

Բայց զի՞նչ առ այնոսիկ, որ ասեն զԲանն մարմին և զմարմինն Բան. պարտ և արժան էր ասել զասացեալսն աստուածաշունչ գրոց, և ոչ դանդաղել և անկանել հ նորագիւտ ցնորմունս: (176 / 1)

Զի թէ իցէ մարմին, և ոչ ևս այնուհետև է Բան, և եթէ իցէ Բան, ոչ ևս կարէ գոլ այնուհետև մարմին, զի հ բանից աստի, որ զփոփոխութեանն տայցեն զակնարկութիւն, ունիցին զոր ոչն ունէին և ոչ ևս ունին, զոր ունէին: (176 / 5)

Աստուածն Բան մարմին զգեցեալ է հ Կուսէն, և մարմինն որ հ Կուսէն յԱստուածն Բան միաւորեալ մշտնջենաւորութեամբ, Բան Աստուած որ յԱստուծոյ Հօրէ ծնեալ է ըստ էութեան յառաջ քան զամենայն յաւիտեանս, նոյն ինքն ըստ ժամանակի ծնաւ մարմնով հ սուրբ Կուսէն: (176 / 12; 176 / 12; 176 / 17)

Ոչ հ լինելն մարդ յեղումն ընկալաւ զհրաշափառականն իւր արարեալ զմիաւորութիւն. ոչ փոփոխել անմարմինն հ մարմին, և ոչ մարմին, և ոչ մարմին յանմարմնութիւն փոխելով, այլ կացեալ, մնացեալ հ նմին, որ էնն, որպէս ուսուցին սուրբ հարքն, և միացեալ անքակութեամբ, անշփոթութեամբ հ վերք քան զիմաստս արարածոց: (176 / 20; 176 / 22; 176 / 24; 177 / 1)

Զինչ և առ այնուհիկ, որք ասեն, թէ միանալով մարմինն հԲանն, անեղ եղև և ինքն, այնուհետև և որ ինչ Բանին, նոյն և մարմնոյն: (177 / 4)

Յերիս բաժանի բանական բնութեանս սեռք, յաստուածայինն և հիրեշտակականն և հմարդկայինն, և հսոցանէ աստուածայինն է իմանալի և պարզ և անեղ, իսկ հրեշտակականն իմանալիք և ստացականք, իսկ մարդկայինն ստացական և շարադրական, զի յիմանալոյ միանգամայն և հզգալոյ է բողկացեալ հոգւոյն բանականան ընդ իմանալիսն և մարմնով ընդ զգալիս: (177 / 8; 177 / 9; 177 / 9; 177 / 13)

Եւ զի լինելն մարդ վասն մեր Ստեղծիչն երկոցունցն ընկալաւ հաղորդութիւն, իմանալոյն ասեմ և զգալոյն, սակս նորին և երկաքանչիւրոցն ասին հ վերայ նորա և յարևմունք անուանցն, չարչարելի և մահկանացու ըստ մարմնոյն և անմահկանացու ըստ հոգւոյն բանականի, զի մի թուեսցի կիսահաւատիցն յեղանակաբար ասացելոյ անտի անուանցն՝ զմին թանց միւսոյն ընկալեալ Արարչին հմարդկանէ: (177 / 19; 178 / 2)

Եւ ոչ միայն անուանել այնոքիւք ասացելովք անուամբք, այլ ըստ անուանցն և ներգործելն ճշմարտապէս հվերայ երկրի, զչարչարիլն և զմեռանիլն ըստ մարմնոյ և զանչարչարելի մնալն և զանմեռանելին ըստ հոգւոյն: (178 / 5)

Եւ յաղագս նորին Տէրն հտնօրինելն զմարդկայինս հ վերայ երկրի, երկոցունց եղեալ հաղորդակից, հոգւոյն ասեմ և մարմնոյն, որ հմէնջ, զի բարձցի գայթակղութիւն կիսակատար դաւանողացն զՔրիստոս մարդ և զի անձնիւրովքն եղիցի երախտաւոր մեզ հբժշկել զնոսա: (178 / 18; 178 / 19; 178 / 21; 179 / 2)

Եւ սակայն յաստուածաբանելն զնա մարդկայնով հանդերձ, թէպէտ և ըստ աստուածայնոյն, և հտնօրինաբանելն աստուածայնովն հանդերձ, այլ ոչ ըստ միաւորութեան վարկանին լինել, զհամագոյութեան և կամ զայլայլութեան ակնարկէն զվնաս: (179 / 4)

Եւ դարձեալ անեղն ոչ զմարմին առնէ անեղ և ոչ մասնաբար հ վերայ աստուածութեանն միայնոյ ասի: (179 / 17)

Ապա ուրեմն պարտ և արժան է զանչարչարելին և զանմահկանացուն ոչ որոշակի հ վերայ ասել փրկչական մարմնոյն, այլ հ վերայ բոլորին և ըստ միաւորութեան տնօրէնութեանն զայն նմա վարկանել: (179 / 20; 179 / 21)

Զինչ և առ նոսա, որք ասենն, թէ յերկուց մին զՔրիստոս, ամբարշտութիւն է, այլ պարտ է ասել հվերայ նորա մի բնութիւն, յաղագս որոյ և բամբասեն

զերկուսին թագաւորսն ` զԶենոն և զԱնաստաս, որք շրջաբերական թղթով իւրեանց զայս այսպէս սահմանեցին յընթանուր աշխարհս քրիստոսասիրաց: (180 / 3)

Արդ յերկուց մին ասելն առ ձեռն պատրաստ յանդիման ցուցանէ զիմաստ, եթէ Բանն որ յԱստուծոյ Հօրէ, մարմին մարդկային զգեցաւ հ սուրբ Կուսէն Մարիամայ, և ընդ ձեռն անբաժծ և մշտնջենաւոր միութեանն մի ասի, քանզի Բանին և մարմնոյն երկոցունցն իմանամք լինել զմիաւորութիւնն, այսինքն է՝ յաստուածութենէն և հ մարդկութենէս: (180 / 11; 180 / 16)

Իսկ մի բնութիւն ունել ասելով զՔրիստոս, հ վերայ ոչ բերելով ըստ միաւորութեանն Բանի, ասացեալ լինի զմի բնութիւնն ըստ համագոյութեան բանի, յորմէ չորրորդութիւնն հ ներքս անկանի սխալանօք, և կամ երկրային որպէս զմարմինն, նոյնպէս և զԲանն ասացեալ լինի զերկնային, և կամ որպէս ստեղծանէն ըստ շփոթութեան զմիաւորութիւնն, իմանայցէ որ հ լուծանելոյն զմիմեանս, լինիցի և ոչ մի: (180 / 23; 181 / 4; 181 / 8)

Զի՞նչ և առ նոսա, որք ասեն, թէ ծնանելովն հ Կուսէն զեղելութիւն միայն ընկալեալ Քրիստոսի, և ոչ եթէ ընդ եղելութեանն և զմիաւորութիւնն միանգամայն և հ միասին, վասն զի զմիաւորութիւնն յառաջ քան զեղելութիւնն, ասեն, իմանամք արարեալ: (181 / 11; 181 / 14)

Ո՞վ արդեօք ոչ զհտիցի զայս, եթէ միաւորութիւնն ոչ պատշաճի լինել նախքան զգոյանալ իրին, որ ունիցի զմիաւորութիւնն, քանզի ընդ ո՞ւմ ումեք միաւորեցի հ մինն, առ ընթեր ոչ գոլով լծակցին, քանզի և յարմարի իսկ ոչ, այսպէս զոչ գոյն միաւորել նախկին և ապա յետոյ զնա հ գոյանալ ածանցուցանել: (181 / 20; 181 / 22)

Եւ որք ասեն հ վերայ մարմնոյն Քրիստոսի, թէ մեռեալն կենդանի և կենդանին մեռեալ, զայս թէ հ վերայ բոլորին էր առեալ ասելով, նոյն ինքն Քրիստոս և՛ մեռեալ և՛ կենդանի, աստուստ յայտնեալ լինէր իմաստնոցն մեռեալ զՔրիստոս մարմնովն և կենդանի աստուածութեամբն, որպէս և ասացեալ իսկ է առաքելոցն և սուրբ հարցն: (181 / 23; 182 / 2)

Իսկ մինչ առանձնաբար հ մարմնոյն և էթ հակադարձէ զբանն, հարկաւոր է հ միասին ելանել հ սուտն, զի և ճշմարտութեամբ մեռաւ և եղև անշունչ մարմինն, և ոչ ևս ասի ոչ թռեալ և ոչ անշնչացեալ մարմինն, իսկ եթէ ոչ իցէ որոշեալ շունչն հ մարմնոյն, մեռանելն ոչ յարմարին նմա: (182 / 9; 182 / 10; 182 / 10; 182 / 14)

Այստքիկ և սոյնպիսիք այլք բազումք յասելոյն Յուլիանեայ անչարչարելի և անմահկանացու զմարմինն Քրիստոսի ի ներքս եկեայ, բազմացան անվայելուչ բանք, որպէս և գոյակցին սորա սաստկագոյնք ստերիւրումն քան զսոսա, զոր ածել յուղղութիւնն զօրութիւն ձեռին մարդոյ ոչ է հնար, որպէս կարծեմ, եթէ ոչ արարչականն ի սոսա մերձեսցի ձեռն, որ կարկառելով ի բորոտն սրբեաց, և ի կոյրն՝ ի բացաւ: (182 / 24; 183 / 5; 183 / 6; 183 / 7; 183 / 7)

Արդ եթէ միննոյն է մահն և ապականութիւնն, որպէս մեռան, ապա ուրեմն ըստ ձեզ և ապականեցաւ բայց այլ է մահն և այլ ապականութիւնն. զմահն ընկալաւ ի մարմինն իւր Տէրն, և սուրբք խոստովանեցին և մեզ ուսուցին խոստովանել, բայց զապականութիւնն ոչ ընկալաւ, զի մարմին նորա ոչ ետես զապականութիւն, գրեալ է: (183 / 16)

Ի նախդիրը ձայնավորից առաջ - 431

Չայս ոչ ի տնկագործողէն, մարդաստունկս յինքնէ բերէ յագահութեան յագահութենէ, յանբանից առ ինքն ձգել՝ ընդ կազմածիս պատուաստեաց: (98 / 19)

Արդ եթէ յադամային մարմնում հոգեկանքս և մարմնականքս ոչ էին բնատրեալ կիրք, յայտ ուրեմն է՝ թէ Քրիստոս կրելովն զայսոսիկ, ոչ էառ զադամայինն, մարմին այլ զմերս՝ որ ընդ մահուամբն և ապականութեամբ եղև ստորանկեալ: (93 / 9)

լինի այնուհետև ի հրոյն յագղմանէ ջերմ և լուսատեսիլ (72 / 17)

Եւ յանբովանդակելին ընդ Հօր բարձրացեալ նստի յաթոռ (124 / 7)

և ի յագեցման բանին ընդդէմ եղեալ փակիցէ զախորժակացն զդրունս: (37 / 20)

բայց լինէր այս ըստ հինգ յեղանակս, և կամ թէ ըստ յոլովս խոնարհել մարդասիրաբար Փրկչին ի մարդկայինս մարմին կամ առ ի յախտակցեայ կամ առ վարդապետել կամ առ շահել կամ առ ի ճշմարտել (73 / 24)

ոչ մերձենային յաստուածային գիրս իբրև յաղբիւրս լուսոյ (153 / 13)

Գտանի այսպիսաբար դաւանութեամբ զերազանցեալ քան զՆեստոր յամբարջտելն (114 / 11)

Ընդ որով և գայս ասելի է, ի չորս բաժանի կենդանական զօրութիւնն. ի ծննդական, սննդական, յաճելական և ի տեղափոխելական: (90 / 18)

և այսօր կոչել յամբարձմանն օրէն մինչև ցերկրորդն իւր գալուստ: (171 / 19)

ինքն իսկ ասէր, «ժամանակ իմ չն է հասեալ, իսկ ձեր ժամանակ յամենայն ժամ պատրաստ է» (120 / 18)

Այլ ամենայն ուրեք և յամենայն ժամ և յամենայն իրս և ի խորիւն և ի խօսելն և ի գործելն, որով ապականեալ են, ասէ, միտք և խորհուրդ իւրեանց (133 / 7; 133 / 7)

Աղոթեաց զամենեցուն աղօթս, զոր անշունչ կոոցն դէմ ենք, Հօր ընծայելով արտասուեաց, հատանելով զամենայն արտօսք յամենայն երեսաց: (139 / 12)

եհատ զամենայն արտօսք յամենայն երեսաց: (144 / 7)

ոչ միմիայն անուն շրջեսցի յամենայն տեղիս (145 / 11)

քանզի գայսպէս երևման կիրս յամենայն դարս մարդկան առ բազումս բազում անգամ երևի արարեալ (168 / 9)

ճշմարտութիւն սիրեցի յամենայնս իմ պատուեալ կեանս (37 / 12)

Բայց հրաշանամ, թէ զիա՞րդ կարգաւ և անվրէպ կատարին յամենատես և յամենագիտակ Հոգւոյն Սրբոյ ասացեալքն բերանովք առաքելոցն (26 / 23)

Բայց հրաշանամ, թէ զիա՞րդ կարգաւ և անվրէպ կատարին յամենատես և յամենագիտակ Հոգւոյն Սրբոյ ասացեալքն բերանովք առաքելոցն, և պահեցար յետին ժամանակացս զառաջնովքն զերազանցեալդ ամբարշտութեամբ, որ ուրանալ ձեռնարկեցեր զվասն մեր ճշմարիտ մարդեղութիւն Փրկչին մերոյ Աստուծոյ: (26 / 22)

յորս ոչ մերձենայր աճելն, և բնութեանցս անուն յամենեցունց ի վերայ երթայ, զանցելոցն, և զկենդանեացն, և զչն եղելոցն: (24 / 1)

նոյնպէս ճաշակեաց յետ յարութեանն և ի ժամ համբարձմանն. որպէս և յառաջ քան զյարութիւնն ճաշակեաց, զի յամօթ արասցէ զնոս (141 / 5)

և է որ յուրօք խառնութենէ յայլ փոխայելիսցի և անուամբն և որակութեամբն (78 / 3)

այլ բնութիւն ունել նմա յառաջ քան զյանցանսն և յայլ փոխել յետ յանցանացն, ասելով... (88 / 2)

այլ որպէս մոլորեալքն ի մթին զիշերոջ յառաջնում լինելով, կարծեն յայլ փոխել ճանապարհ (162 / 15)

այսպէս և ի ծննդեանն և յայլ ի կիրսն կրեաց զմարդկայինսն բնականապէս (174 / 24)

յառաջ մատչելով՝ զնոյն բաժանէր յայլանմանս և ի գանազանս (103 / 20)

Իսկ ներգործականք են, որ յայլմէ առ այս ի զօրութենէ նոցունց անցանէ օգտութիւն (66 / 16)

Եթէ որ յերկնից բերեալ ասիցէ զմարմինն կամ յայլմէ բնութենէ, այլ ոչ ի մարդկայինն հողեղէն բնութենէս, նզովեսցի: (163 / 15)

Ի սոցանէ ամենեցունց նշանակեցելոցս ի վերջինս, և որպէս և յայլոց ոմանց իմաստասիրացաւ, որ զփրկչական տնտեսութեանն օրինակէ խորհրդոյն յեղանակ (80 / 8)

Եւ ոչ եթէ մինչ առ միումն այսոքիկ, յայլոցն սոքա բարձեալ լինէին, այլ որպէս մինչ ընդ սոքօք ստորանկեալք, ըստ նմին և այլքն: (40 / 23)

Եւ այսպէս գտանին երկոքեան ճշմարտեալք ի վերայ Փրկչին մերոյ ասացեալքն. մերձեցաւ ի տեղիսն ի ձեռն ծածկութիւն՝ և ազատեաց ի ձեռն ամենակարող ինքեան զօրութեանն, և ոչ միայն այս, այլ զի և յայլսն մի ըստ միոջէ ի տնօրինականսն զոմանս աստուածապէս և զոմանս մարդապէս կատարելով: (67 / 16)

զի յայլում տեղուոջ ցուցանելոց եմք զասել նոցա և որպէս ասենն: (18 / 21)

Եւ այլ ոմն, թէ միութիւն խոստովանիմ և ոչ քայքայումն իմն և լուծումն այնր բնութեան յայս, և կամ այսր յայն: (80 / 24)

զի ասաց, թէ դառնալ յայն ասէ, որ էր յառաջ: (108 / 14)

զի բանին Աստուծոյ կեանք թագաւորեսցեն ի մարմինն յայն: (144 / 16)

և յայն որ յաւիտենիցն է՝ ծնաւ ի կուսէն (144 / 23)

Յոհան Ոսկեբերան ասէ. «Մի շփոթեցուք, և մի անջրպետ ի մէջ արկցուք, քանզի միաւորութիւն խոստովանիմք և ոչ քայքայումն ինչ, և կամ լուծումն այս բնութեան յայն կամ այնր յայս, այլ միացեալ մի լեալ»: (159 / 16)

որպէս և իմաստասէրն բնութիւն զի սկիզբն զայն անուանեաց ասելով, սկիզբն շարժման և դադարման, այսինքն, եթէ լուծանէ շարժեցաւ յայնմանէ (118 / 1)

այլ որպէս զԱստուած ամենայն ստուգութեամբ պատմեաց զլինելոցսն յաւուր յայնմիկ և ի ժամուն: (170 / 18)

իսկ ապականութեան և դժոխցն վայր ոչ մի յայնպիսեացն մեզ ոչ եղեալ սպասաւոր (70 / 16)

շաղկապովն ազատեաց յայնպիսի կարծեաց: (126 / 19)

Ջի՛նչ ևս այլ շատ խօսեցայց. մանաւանդ թէ ի վերն յայս էր երեսական բաժանմանս, որ քան զՆեստորին ևս ահագին թուի»: (14 / 10)

Եւ այլ ոմն, թէ միութիւն խոստովանիմ և ոչ քայքայումն իմն և լուծումն այնր բնութեան յայս, և կամ այսր յայն: (80 / 24)

Եւ կացին մնացին յայս գրի Մ. ամ սակաւ կամ աւելի, ի նմին կործանման եղեալք անբժշկելիք և անողջանալիք: (154 / 1)

Յայս երկու սինս խարսխեալ հիմնեցաւ բոլոր շինուած առաքելական հաւատոյն (159 / 1)

քանզի միաւորութիւն խոստովանիմք և ոչ քայքայումն ինչ, և կամ լուծումն այս բնութեան յայն կամ այնր յայս, այլ միացեալ մի լեալ»: (159 / 16)

զհետ տայաք զմեզ և յայսմիկ առ ի նմանէ ասացելոցն, այլ և զանուանեալն իւր մեծ՝ և զորս ընդ նովաւ, ընդ մերոյ ի ձեռին կարգեալ խոստանայր իշխանութեամբ: (6 / 16)

Եւ յայսմիկ ինքն վկայէ Տէրն (73 / 1)

համայն ոչ ինչ ամեննին վնասել գտանի յայսպիսեաց աստի անուանց (31 / 17)

Եւ բազում ինչ այլ որ սոցին նման, յորոց և ոչ զմի ինչ յայսպիսեաց անտի յանձն իւր ընկալաւ Քրիստոս: (133 / 16)

Բայց զքեզ ոչ զիտենք թէ յո՞յց ոմանց հողմոյ շարժեցար անկանել յայսպիսի տարապարտ մտածութիւնս: (22 / 3)

Աթանաս ասէ. «վասն զի մարմնանալն Քրիստոսի յանամուսնութենէ և առանց մեղաց էր, ոչ գտաւ ի նմա ապականութիւն (118 / 17)

Եւ վասն զի մարմնանալն Քրիստոսի յանամուսնութենէ և առանց մեղաց էր, ոչ գտաւ ի նմա ապականութիւն (132 / 19)

Աթանաս ասէ. «վասն զի մարմնանալն Քրիստոսի յանամուսնութենէ և առանց մեղաց էր, ոչ գտաւ ի նմա ապականութիւն (173 / 19)

և միւսն, որ յախտասիրութենէ իւրմէ զկնի գոյանալոյն գտանելոց էր մարդն (98 / 5)

և ոչ կարէք պատճառել իբր թէ ոչ ոք զայս մեզ զգացոյց և բողոքեաց յականջս մեր (165 / 17)

ասէք. «թէ մի և նոյն բնութիւն նախաստեղծին յերկուս բնութիւնս զանազանեալ գտաւ, այլ բնութիւն ունել նմա յառաջ քան զյանցանսն և յայլ փոխել յետ յանցանացն, ասելով, յառաջ քան զյանցանսն անմահ էր և յանապական և ամենայն կրից և կարեաց մարդկայնոց անընդունակ (88 / 4)

Եւ սուրբն Գրիգոր ասէ. «միացաւ ի մարմնի բնութեամբ, և խառնեաց զմարմինն իւր աստուածութիւնն, զապականացու մարմինս խառնեաց յանապական աստուածութիւնն (143 / 18)

Բայց այսոքիք ասասցուք և զայս. զի թէ զյարութիւնն ապականութեան ծառայեաց մարմինն Քրիստոսի և զկնի յարութեանն փոխեցաւ յանապականութիւն ի՞ ի իիք մեծացոյց զնա յառաջասացութիւն սուրբ Հոգւոյն, և կամ որո՞վ իիք առաւելեալ գտաւ մարմնացեալ Բանն Աստուծոյ (111 / 1)

Իսկ զմարմինն ամեննին անբաժ սոցա լինել ասէ մինչև ցյարութիւնն, և ապա յետ յարութեանն Հօր և Հոգւոյն ասէ վերաբերել զմարմինն ի փառս, ի կատարելութիւն և յանապականութիւն (114 / 21)

և ապա նորոզի անգուստ յանապականութիւն: (117 / 7)

Եւ սուրբն Եպիփան ասէ. «Ամենայն ինչ կարողութիւն է Աստուծոյ, և զմահկանացուս փոխել յանմահութիւն, և որ ի վերայ երկրի է, կատարել յանապականութիւն (145 / 18)

Իսկ յանասելի միաւորութենէն մի՝ և ոչ երկու ասին կատարել (38 / 3)

համայն յանասելի և ի գերաւորաշ միաւորութենէն մի ասի կատարեալ և մի անձն Տէր մեր Յիսուս Քրիստոս: (72 / 21)

զոր յանարատ յարգանդէ սրբոյ Կուսին առանձնացոյց ինքեան զոչ յառաջագոյն գոյացեալն և յետ այնորիկ իբր ի տաճարի բնակեալ (43 / 23)

ՊԱՏՈՒԿԱՆ զլուխ հովիւ հօտասեր, բարեպաշտութիւն փափաքող, մերձեալ ի դուրս ուղղափառութեան Տէր Սարգիս եպիսկոպոս Գերադէկորայ, Խոսրով յանարժան ծառայից ինդրէ խաղաղութիւն քեզ յԱստուծոյ: (149 / 7)

Ձայս ոչ ի տնկագործողէն, մարդատունկս յինքենէ բերէ յազահութեան յազահութենէ, յանբանից առ ինքն ձգել՝ ընդ կազմածիս պատուաստեաց: (98 / 20)

թէ զբնական պարտ է զնոսա ասել, թէ յանբնականաց (97 / 17)

Եւ յանբովանդակելին ընդ Հօր բարձրացեալ նստի յաթոռ, այլ սակայն հանդերձ մարմնով, զոր էառ ի կուսէն, համբարձեալ և ոչ փոխեաց զնա յանմարմնութիւն, որպէս և ասաց Տէր Եփրեմ: (124 / 6)

թշնամութիւն յայտնեալ, զգուշանալ հրամայէ, իսկ ընդ կեղծաւորութեամբ մտանել, յանգէտս դաւաճանէ: (101 / 9)

են ոմանք, որ յանգոյից ի գոյ ածան (77 / 18)

Ձի ոչ յանգոյից սահմանել իշխեմք կամ զԲանն Աստուած կամ զնարմինն իւր (78 / 25)

Ձի թեպէտ ի մարդէղութենէ զլուխ եմ ես մարմնոյ եկեղեցոյ, և եկեղեցի անդամք յանդամոց իմոց և մարմին ի մարմնոյ իմոյ, այլ սակայն հանդերձ անփոփոխութեամբ տնօրինեալ ազգակցութեամբ՝ հարազատութեամբ, և ոչ փոփոխելի ինչ իբօք (126 / 22)

համարձակեցի որ երևելօքս ձգտել յաներևոյթսն, և զգալի լուսովս զիմանալին քատակել լոյս: (60 / 1)

Մեռաւ ճշմարտութեամբ զբնականն մեր մահ. այս է բացորոշել շնչոյն բանական ի մարմնոյն և մարմնոյն անշնչանալ և յանգգայութեանն խոնարհեալ սահման, և նովին անշնչացեալ մարմնուն զապականութիւնն մեր խափանեաց ի գերեզմանի և մերկացեալ շնչովն ի մարմնոյն իջեալ ի դժոխս, կործանեաց զնա, զգերեալսն գերելով ի նմա զոգիսն և մահուամբն զմերն մեռոյց զմահ: (175 / 9)

Մի զարմանար, Տէր իմ, թէ ի հեռաւորաց և յանձանօթից մօտեցայ և ծանօթացայց, այլ առաւել զուարիացիս իբր ի Հոգւոյն սրբոյ առաքեալ, մատուցանել ձեզ զօգուտն, զի այսպէս և երբեմն զՅովսէփ ի Քանանացոց աշխարհէն կերակրիչ ձեր, պատրաստ է լինել Եգիպտոսի և Փարաւոնի, ծածկեալ իրաց ընծայել զգիտութիւն, զի և Արարիչն մեր զմեզ ոչ վասն անձանց, այլ առաւել ևս յընկերին ստեղծեալ հաստատեաց պէտս: (149 / 10)

գտանի ասացեալ զմարմինն փրկչական փոփոխելի և ապականակիր և յանկատարելութենէ եկեալ ի կատարելութիւն: (58 / 21)

զի փոխեցայ յապականութենէ յապականութիւն և յանփառաւորութենէ ի փառս և յանկատարելութենէ ի կատարումն: (102 / 12)

Եւ բազում ինչ այլ որ սոցին նման, յորոց և ոչ զմի ինչ յայսպիսեաց անտի յանձն իւր ընկալաւ Քրիստոս: (133 / 17)

Իսկ ոմանք թէ և ասեն, ոչ երբեք հպեցաւ ի նոսա և ոչ ընկալաւ զնոսա յանձն իւր Տէրն (158 / 2)

Եւ այս է ասացեալն՝ թէ վասն մեր մեղս արար, այսինքն վասն զմերոց յանցանացն պարտիս իւրովն հատոյց անմեղութեամբն առ Հայր, և զի վասն մեր և ոչ անձին առ յանձն զկամաւորն մահ: (71 / 1)

կրականք են զորս յանձն իւր ընկալալ տարաւ Փրկիչն զհոգեկան և զմարմնական կարիսն, (65 / 24)

Արդ ում ումեք և տացես զայս, յանկարելեացն է, (24 / 20)

ընդունող մարդկայնոց կրից և ապականութեանց և յետ յարութեանն յանկարօտութիւն փոխեցաւ: (141 / 9)

Ի չորս բաժանի որ ի բերայ էակացս առեալ լինին անուանք. ի հանուրն, ի բոլորն, յանհատն, և յիւրաքանչիւրն: (30 / 11)

այնոքիկ, որ քեզ յանհաւատութիւնն առաջնորդեն, նոքին բարեփառս զմեզ յօրինեալ կատարեսցեն: (30 / 6)

իւրաքանչիւր ոք յանձնահաճութեան համբարձեալք կառս, զոր կործանի ի միմեանց, սաստել սաստեցին անձանց իւրեանց և ճշմարտութեանն (153 / 16)

այսպէս և զբնութիւնսն զաստուածայինսն և զմարդկայինսն մի դաւանել բնութիւն յանճառ միաւորութենէն (12 / 14)

Ապա ուրեմն որպէս ճշմարտեցաք մին գոլ ներգործութիւն և կամս ի Քրիստոս, յանճառ և ի վեր քան զմիտս եղելոյ ի միաւորութենէ անտի, ըստ նմին և զդէմ և զբնութիւն, յորս բնաւորեալ են ներգործելն և կրելն և կամելն. մի, և ոչ ասել երկուս բնութիւն և անձնաւորութիւն ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, ոչ ըստ էութեան, այլ որպէս ասացաք, յանճառ միաւորութենէ անտի, և ի յաղթելոյ և ի հնազանդեցուցանելոյ վեհագունին զնուաստագոյնն: (50 / 8; 50 / 15)

Զգեցոյց արդարև Աստուածն Բան յանճառ միաւորութենէն իւրում մարմնոյն զիւր զօրութիւն և զփառս (168 / 24)

ևս առաւել յանճառելիսն լուռ լինելով բարեպաշտել համարեսցուք: (64 / 15)

Բայց եթէ զիա՞րդ նոյն ինքն ճառելին և ի ճառելն մերում զնա յանճառութեան և յանսահմանութեան ելանէ սահման (61 / 12)

Եւ սուրբն Եպիփան ասէ. «Ամենայն ինչ կարողութիւն է Աստուծոյ, և զմահկանացուս փոխել յանմահութիւն, և որ ի վերայ երկրի (145 / 17)

Ոմանք յասացելոցս և՛ յանմարմնականացն յարմարեսցին գոլ, իսկ մարմնական կենդանիքս ընդ բոլորիքս ենթակայեալ է: (90 / 20)

Եւ որք հաւասարեն զկերակուրս ճաշակեալ ի մարմնաւորութեանս ընդ ճաշակելոյն ընդ այնմիկ, որ առ Աբրահաման յանմարմնութեանն ասելով՝ Յիսուս Քրիստոս երէկ և այսօր նոյն և յաւիտեան (170 / 23)

Ո՛վ դուք, զոր օրինակ մարդկայինս մեր հոգի միաւորեալ ի մարմնի, ոչ փոխէ զնա յանմարմնութիւն, այլ և ոչ ինքն ի մարմնի փոխեսցի, և համայն ոչ ասին երկու գոյացութիւնք, այլ մի գոյացութիւն և մի մարդ, այսպէս իմացիս և ի վերայ Քրիստոսի: (71 / 20)

համբարձեալ և ոչ փոխեաց զնա յանմարմնութիւն, որպէս և ասաց Տէր Եփրեմ: (124 / 10)

ոչ փոփոխել անմարմինն ի մարմին, և ոչ մարմին, և ոչ մարմին յանմարմնություն փոխելով, այլ կացեալ, մնացեալ ի նմին, որ էնն, որպէս ուսուցին սուրբ հարքն (176 / 23)

Եւ այսպէս հետևի լինել յանյաւելուած Երրորդութիւնն՝ չորրորդութիւն եկեալ յարեցի (81 / 23)

համայն անյեղիք և անայլայելիք ի յաղթողէն և յանյեղագունէն պահեալ եղև ստացականն (84 / 19)

«Ընդէ՞ր ոչ գասացեալսն ի սրբոց հարցն ասացից և ես», յիշեցուցանելով յանուանէ զԱթանաս, զԿիրիլ, զԵփրեմ, զՅովնոս Հռովմայ և զայլս: (6 / 3)

այս յանպարիմանայի միաւորութենէն ուսեալք այսոքիք մի դաւանել զՔրիստոս: (39 / 1)

Բայց եթէ զիս՞րդ նոյն ինքն ճառելին և ի ճառելն մերում զնա յանճառութեան և յանսահմանութեան ելանէ սահման, ասասցուք դուզնաքեայ ի վերայ այսորիկ, որքան ասել հրամայէ Բանն, յաղագս որոյ բանս, և զի ի վերուստ սկսայց՝ առնելով աստուածաբանութեանս առաջարկութիւն: (61 / 12)

Բաց թէ զի՞նչ պետք էր մեզ ի ճանապարհ անկանել, զբանս մեր երկուք առաջարկութեամբք և առանձնաբար բազմացուցանել բանս ի վերայ մարմնոյն Քրիստոսի՝ իբրև ի վերայ գոյակցի և համաբուն եղելոյ Բանին, եթէ ոչ առ ի քէն բռնադատել ակամայ յանսովորականն հրամայեցաք ելանել բանիս մերում ասպարէս ըստ այլ և այլ ժամանակաց և ազգի ազգի անօրինականաց Փրկչին գործոց բազմաց ի ներքոյ եղեալ ընդէ փոխմանց գտերունական մարմին, զմի և զնոյն զՈրդին Աստուծոյ բաժանես ի բազում քրիստոսս և յորդիս բազումս: (127 / 17)

Աճեաց հասակաւ, զհակառակն աճելութեանս արտաքս մղեաց և ի բնութենէս զնուագութիւնս, կատարելահասակս զմեզ նորոգելով յանվախճան կեանսն: (138 / 12)

զմին բանն պատմած իրաց մանր խոնարհեցուցանէ յանցեալ ամանակն ասելով (110 / 1)

Եռակի տրամատի ամանակացն զանազանութիւն, ի ներկայս, յանցեալն, յապառնին (87 / 7)

սա գնոյն ի վերջ յանցեալն դարձուցանէր ժամանակն: (108 / 18)

Մեր ուրեմն ապա ընդ ձեզ յաւտ գեր գնա գեղեցկակերտեալ և կատարելագործեալ գիտացաք յանգմամբն զբնութիւնս (94 / 3)

ոչ դատարկս և անգործս թողլով զնոսա յանցնիւրոցն ներգործութեանց (57 / 1)

Օրինակ իմն որպէս ճարտար բժիշկ մտեալ առ վտանգեալսն ի մահաբեր դեղոց խառնէ ընդ մահաբերականսն դեղս կենդանացուցիչս՝ յորմէ հալածեցան և լուծան ի մահու դեղոցն զօրութիւնք և ընդ ձեռն իւր գնա ճաշակելոյն, ամենեքին յանցնիւրոցն բուժեցան վտանգից ախտացեալքն: (131 / 19)

այսպէս և բնաւիցն անձնականացն մասանց իշխանութիւն ունէր խոնարհել տալ յանցնիւրսն բնաւորականսն կիրս: (73 / 10)

Վիճեցայ յապականութենէ յապականութիւն և յանփառաւորութենէ ի փառս և յանկատարելութենէ ի կատարումն: (102 / 11)

Եւ յաղագս նորին ասի մի բնութիւն ունել Տէր մեր Յիսուս Քրիստոս. ոչ անմարմին, այլ զմարմնացեալն, զի և ոչ իսկ յարմարեցի յատուկ առ ինքն, միոյն ասիլ մի, այլ առ այն՝ որ ընդ նմա և ի նմա միացաւ և խառնեցաւ անքակաբար, ոչ ի միաւորութենէ համագոյ և կամ միոյ բնութեան ասել զԱստուածն Բան և զկենդանարարն իւր մարմին, և ոչ յանփոփոխն գոլոյ զբաժանումն և զերկմտութիւն դաւանել (85 / 15)

Եւ իբրև ել հրամանս այս ի թագաւորէն յաշխարհ, ամենեքին (152 / 3)

«Վայ այնոցիկ, ասէ, որք զանձինս առ իմաստունս ունիցին և յաչս անձանց խորհրդականք»: (150 / 13)

մնացին յապականացու և ի մահկանացու կեանս: (109 / 1)

և ապա զկնի այսորիկ լուծեալ և յապականեալ իրէն առնու սկիզբն լինելութեան գոյութեան, (117 / 19)

զի զայս եկն ցուցանել և եցոյց, առեալ յապականեղի բնութենէս և զգեցեալ աստուածութեամբն, ցուցեալ անապականելի: (145 / 20)

որ զայսոսիկ յապականելն իւրում նմա երթեալ մատուցանէր (118 / 7)

ի ծննդեն մինչև ցգերեզման թաղեալ կան յապականութեան և ապա յարութեամբն զգենուն զանապականութիւն: (111 / 6)

ծնունդն յապականութեան սերմանէ լեալ էր (132 / 13)

Եւ քանզի մեր ծնունդն յապականութեան սերմանէ է, ընդ ամենայն կեանս մեր խառնեալ են սոքա երեքին, մեղք և ապականութիւն և դժոխոց իշխանութիւն (133 / 1)

«ապականեցան և պղծեցան յապականութեան իւրեանց»: (133 / 14)

Յաղագս որոյ պարտ և արժան է զուարճացելոցն աստուածագործ սքանչելեօքն ճշմարտել զնորա և վասն մեր կամաւորն մահ և ոչ դրդուել և անկանել յապականութեանն կարծեաց խորխորատ: (175 / 19)

Ֆոխեցայ յապականութենէ յապականութիւն և յանփառաւորութենէ ի փառս և յանկատարելութենէ ի կատարումն: (102 / 10)

Ա և ապա յետ այնորիկ փոխել նմա յապականութենէ յապականութիւն: (117 / 13)

Այլ ի ստունկանելոյ անտի ձգտել յինքն զիշխանութիւն, յինքն կարծելոյ իշխանին, և ի ձեռն յանցանացն ընկղմել ի դժոխս պատկերին և յապականութիւն: (65 / 7)

քարշեցաւ մարդն ի մահ և յապականութիւն: (90 / 9)

Ֆոխեցայ յապականութենէ յապականութիւն և յանփառաւորութենէ ի փառս և յանկատարելութենէ ի կատարումն: (102 / 10)

ոչ ևս դառնալոց էր մարմին նորա յապականութիւն, դառնալ, յորում էրն, զայն ասէր: (107 / 9)

Իսկ զմիւսն մարգարեական ձևով շարադրել յապառնիս հայեցուցանէր ասելով, «ոչ ևս դառնալոց է մարմին նորա յապականութիւն» որ յայտնապէս աստուատ բացափայլեալ բանիս հոլանիցին միտք, և յանդիմանեցի Թէոդիտեայ տարակարծելի մտածութեանն ձայն, յորում զերկոսեան առ մին շարամանելով տապալումն ներադրեցէ զբառս այսպէս ասելով՝ ըստ անցելումն, և զի յարոյց զնա Աստուած ի մեռելոց, և ոչ դարձցի մարմին նորա յապականութիւն և կամ ըստ ապառնոյն այսպէս, և զի յարուցանելոց էր զնա Աստուած ի մեռելոց, և ոչ դառնալոց էր մարմին նորա յապականութիւն: (110 / 5; 110 / 13; 110 / 16)

որպէս պահանջէ իրացն թէ բնութիւն, և ապա յետ այնորիկ փոխել նմա յապականութենէ յապականութիւն: (117 / 14)

որպէս և Պօղոս ասէ. «սպան զթշնամութիւն ի մարմնի իւրում» և վասն մահուանն, որ զմեզ յապականութիւն քարշել արկանէր (132 / 5)

իսկ յետոյ կրէ զապականութիւն հոգին յապաշաւանաց անտի, որ ի վերայ անկանի յուսահատութեամբն տրտմութիւն (134 / 19)

Եռակի տրամատի ամանակացն զանագանութիւն, ի ներկայս, յանցեալն, յապառնին. (87 / 8)

և այս յուսով և յապառնիս ունի զեղոցեալն (67 / 3)

իսկ զմիւսն մարգարեական ձևով շարադրել յապառնիս հայեցուցանէր ասելով... (110 / 4)

Բայց դու յառանձնական անուանսն ո՞րպէս արդէօք յատկացուցանես զհասարակականսն՝ օտարացեղութեան տալով կարծիս ի մի և ի նոյն բնութիւն»: (9 / 16)

զի և չէ իսկ հնար զհասարակականն գտանել ումեք ուրեք, եթէ ոչ յառանձնականումն սա երևել ճանաչի: (39 / 14)

Ձի բնութեան հաւաքումն ի հասարակին ըստ զօրութեան և եթ է, անուամբ միայն նշանակեալ, իսկ յառանձնականումն ոչ ըստ զօրութեան, այլ ըստ ներգործութեան և արդեամբք երևեալ: (39 / 18)

զի թէ դէմ է, այն է, որ զբովանդակն յինքեան երևեցուցանէ զբնութիւնն, և եթէ բնութիւն է, այն է՝ որ բոլորապէս յառանձնեցելումն երևի դիմի: (43 / 13)

սակայն և այնպէս լուծեր զերկունս բանիդ, շատ հեռի ընկենլով յառաքելական բանէն, (17 / 14)

բնութեամբ բանիւ և միաւորութեանս հիմնեցուցեալ և հաստատեալ եղև եկեղեցի Քրիստոսի ի վերայ վիմին հաւատոյ՝ ընկալեալ յառաքելոցն տուչութենէ: (126 / 2)

Ծնաւ այր ի կնոջէ առ ի փոխարինել զպարտս առաջնոյն Ադամայ կին յառնէ ծնեալ, այլ և զախտաւոր խառնիցին խափանել զորդեծնութիւն, ծնանելով ի կուսէն: (138 / 7)

Բայց սակայն պարտ և արժան է յայտնել և ցուցանել, թե գլուխ բոլոր անդամոց քն հանդերձ յառողջութեան է, (147 / 11)

Յարէր յասացեալս և զայն ևս (107 / 10)

Ոմանք յասացելոցս և՛ յանմարմնականացն յարմարեցին գոլ, իսկ մարմնական կենդանիքս ընդ բոլորիքս ենթակայեալ է: (90 / 19)

Դու փախչիս զոմնդ յասելոյ (21 / 13)

Այսոքիկ և սոյնպիսիք այլք բազումք յասելոյն Յուլիանեայ անչարչարելի և անմահկանացու զմարմինն Քրիստոսի ի ներքս եկեալ, բազմացան անվայելուչ բանք (182 / 23)

Յորոց հեռի արասցէ Հոգին սուրբ ի նորայն դատապարտութեան բանիցն, շնորհելով մեզ անբիծ դաւանութեամբ կալ յաստիսս և հանդէձելոցն հասանել բարեաց ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում՝ փառք յաւիտեանս ամէն: (86 / 15)

այնպիսիեացն ամենապէս իսկ և ամեննին ապականեալ են խորհուրդք և միտք, ոչ միայն ի տնտեսականսն, այլ և յաստուածաբանականսն: (32 / 11)

Եւ սակայն յաստուածաբանելն զնա մարդկայնով հանդերձ, թէպէտ և ըստ աստուածայնոյն, և ի տնօրինաբանելն աստուածայնովն հանդերձ, այլ ոչ ըստ միաւորութեան վարկանին լինել, զհամագոյութեան և կամ զայլայլութեան ակնարկէն զվնաս: (179 / 2)

հաւատամ ի նոյն ինքն ի ճառեցելոյն զօրանալով՝ զվասն իւրն իմաստասիրել ինչ յաստուածաբանութիւն (37 / 16)

Այսպէս և ի տնօրինականսն Փրկչին զմիաւորութեան Բանն ուղղակի դաւանեալ ուսեալք յաստուածային գրոց, ոչ զանգիտեմք զմի և զնոյն Տէր մեր Յիսուս Քրիստոս և Աստուած խոստուանեալ՝ միան (33 / 10)

վայելեցուցանէր զմարմինն իւր Բանն
Աստուած յաստուածային բնաւորականսն (60 / 3)

